Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1508

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1905–1907 Թ. Թ.
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԲՆՈՒՅԹԸ, ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1931

10 .09. 2013



3K23
Z-14

Վ. Ի. ԼԵՆԻՆ

26 MAY 2005
14 NOV 2009

1905 — 1907 թ. թ.

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ ՑԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

3969

Ст. Ленин

Характер движущие силы и перспективы Революции 1905–1907 гг.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1931

1508

СОВ. ИАМ 8 2

Уполн. Главлита № В-186 Заказ № 899 Тираж 7.000 экз

Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва.
Шлюзовая набережная. 10

ՉԵԿՈՒՑՈՒՄ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1]

Յեղիտասարդ բարեկամներ ու ընկերներ:

Ձեզ հետաքրքրող տարեդարձն է այն «Արյունոտ կիրակիի»[2], որն ամենայն իրավամբ նկատվում է, որպես ռուսական հեղափոխության սկիզբը:

Հազարավոր բանվորներ, — և այն էլ՝ ոչ սոցիալ-դեմոկրատական, այլ հավատացյալ, հավատարմահպատակ մարդիկ, Գապոն քահանայի առաջնորդությամբ հոսում են քաղաքի բոլոր մասերից դեպի մայրաքաղաքի կենտրոնը, դեպի Ձմեռային պալատի առջևի հրապարակը, որպեսզի թագավորին հանձնեն իրենց խնդրագիրը: Բանվորները գնում են սրբապատկերներով, և նրանց այն ժամանակվա առաջնորդ Գապոնը դրավոր հավատիացնում էր ցարին, որ ինքը յերաշխավորում է նրա անձնական ապահովությունը և խնդրում է նրանից, որ դուրս գա ժողովրդի առջև:

Կանչվում են զորքեր: Ուլաններն ու կազակները սառը զենքերով հարձակվում են ամբոխի վրա, կրակում են անզեն բանվորների վրա, վորոնք ծնկաչոք աղաչում էին կազակներին, որ իրենց թույլ տան ցարի մոտ գնալ: Ըստ վոսկիականական տեղեկագրերի՝ այն ժամանակ սպանվել և հազարից ավելի, վիրավորվել և յերկու հազարից ավելի մարդ: Աննկարագրելի յեր բանվորների զայրույթը:

Ահա 1905 թվի հունվարի 9 (22)-ը — «Կարմիր կիրակիի» ընդհանուր պատկերը:

Այս դեպքի նշանակությունն ավելի ակնառու դարձնելու համար՝ յես կկարդամ մի քանի հատված բանվորների խնդրագրից: Խնդրագիրն սկսվում է այսպես.—

«Մենք, Պետերբուրգի բնակիչ բանվորներս, յեկել ենք Քեզ մոտ: Մենք — դժբախտ, արհամարհված սորուկներ ենք, մենք ճնշված ենք դեսպոտիզմից և կամայականությունից: Յերբ այլևս լցվեց համբերության բաժակը, մենք դադարեցրինք աշխատանքը և խնդրեցինք մեր գործարանատերերից, որ մեզ տան սոսկ այն, առանց ինչի կյանքը դառնում է տանջանք: Սակայն՝ այդ ամենը ժխտվեց, գործարանատերերին ամեն ինչ ապօրինի թվաց: Մենք այստեղ, բազմաթիվ հազարներս, ինչպես և ամբողջ ռուս ժողովուրդը, զուրկ ենք վորևե

մարդկային իրավունքներից: Շնորհիվ Ձո չինովնիկների՝ մենք զարձել ենք սարուկներ»:

Ինդրագիրը թվարկում է հետևյալ պահանջները. ընդհանուր ներում, հասարակական ազատություններ, նորմալ աշխատավարձ, հողի աստիճանական հանձնումը ժողովրդին, Հիմնադիր ժողովի գումարումն՝ ընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա և վերջանում է հետևյալ խոսքերով.—

«Թագավո՛ր: Մի՛ ղլանար ոգնելու Ձո ժողովրդին: Կործանիր Ձո և քո ժողովրդի միջև բեզած պատը: Հրամայի՛ր և բերդվիր, վոր կատարվեն մեր խնդիրները, և Դու կերջանկացնես Ռուսաստանը: Ցեթե վոչ՝ այն ժամանակ մենք պատրաստ ենք հենց տեղն ու տեղը մեռնելու: Մենք միմիայն յերկու ճանապարհ ունենք.— ազատություն ու յերջանկություն, կամ՝ գերեզման»:

Տարօրինակ տպավորություն ես զգում, յերբ հիմա յես կարդում նահապետական քահանայից ղեկավարված անկիրթ ու անգրագետ բանվորների այս խնդրագիրը: Մարդու մտքում ակամայից զուգահեռական ե գծվում միամիտ այս խնդրագրի ու սոցիալ-պացիֆիստների այժմյան խաղաղ բանաձևերի միջև, այսինքն՝ այն մարդկանց, վորոնք կամենում են սոցիալիստ լինել, բայց իրականում-բուրժուական ֆռազյորներ են լոկ[3]: Մինչ-հեղափոխական Ռուսաստանի անգիտակից բանվորները չգիտեյին, վոր ցարը տիրող դասակարգի գլուխն է, այն է՝ խոշոր հողատերերի դասակարգի, վորոնք արդեն հազարավոր կապերով են կապված խոշոր բուրժուազիայի հետ և բանտության բոլոր միջոցներով պատրաստ են պաշտպանելու իրենց մենաշնորհը, արտոնություններն ու յեկամուտները: Ժամանակակից սոցիալ-պացիֆիստները, վորոնք, կատակը դենը!— կամենում են «մեծապես ուսյալ» մարդիկ յերեվալ, չգիտեն, վոր «դեմոկրատական» խաղաղություն ակնկալել բուրժուական այն կառավարություններից, վորոնք իմպերիալիստական ավազակային պատերազմ են վարում, նույնքան հիմար բան է, վորքան հիմար է այն միտքը, թե արյունարբու թագավորին իբր կարելի յե խաղաղ խնդրագրերով տրամադրել ռեֆորմների կողմը:

Սակայն՝ այնուհանդերձ նրանց խոշոր տարբերություններն այն են, վոր ժամանակակից սոցիալ-պացիֆիստները խոշոր չափով կեղծավորներ են, վորոնք հեղաբար ներշնչումներով ճգտում են յետ պահել ժողովուրդը հեղափոխական կռվից, մինչդեռ մինչհեղափոխական Ռուսաստանի անկիրթ բանվորները գործով ապացուցեցին, վոր նրանք առաջին անգամ քաղաքական գիտակցության յեկած չիտակ մարդիկ են:

Ցեվ ահա՛, ժողովրդական հսկայական մասսաների հենց այս քաղաքական գիտակցության գալու և հեղափոխական կռվի համար արթնանալու մեջ է 1905 թվի հունվարի 9 (22)-ի պատմական նշանակությունը:

«Ռուսաստանում դեռ չկա հեղափոխական ժողովուրդ»,— այսպես եր գրում «Արյունոտ կիրակիից» յերկու որ առաջ պարոն Պյոտր Ստրուվեն, ռուսական լիբերալների այն ժամանակվա առաջնորդը, վորն այն ժամանակ անլեգալ, ազատ, արտասահմանյան որգան[4] եր հրատարակում: Այսպիսի անհեթեթություն եր թվում բուրժուական ռեֆորմիստների այդ «գերուսյալ», մեծամիտ և արխիտիմար առաջնորդին այն գաղափարը, թե անգրագետ գյուղացիական յերկիրը կարող է հեղափոխական ժողովուրդ ծնել: Այդպես խորն եր այն ժամանակվա,— այնպես, ինչպես և այժմյան,— ռեֆորմիստների համոզմունքը, թե անհնարին է իսկական հեղափոխություն:

Մինչև 1905 թվի հունվարի 9 (22)-ը Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունը բաղկացած եր մի բուռն մարդկանցից, այն ժամանակվա ռեֆորմիստները (իսկ և իսկ այնպես, ինչպես այժմյանները), ծաղրելով, մեզ «սեկտա» եյին անվանում: Մի քանի հարյուր հեղափոխական կազմակերպիչներ, տեղային կազմակերպությունների մի քանի հազար անդամներ, ամբոխ մեկ անգամից վոչ հաճախ լուսս տեսնող կես դյուժին հեղափոխական թերթիկներ, վորոնք հրատարակվում եյին գլխավորապես արտասահմանում ու կոնտրաբանդային ճանապարհով, աննկարագրելի դժվարություններով, խոշորագույն զոհերի գնով ուղարկվում եյին Ռուսաստան,— այսպես եյին, ահա, հեղափոխական կուսակցությունները Ռուսաստանում և առաջին հերթին՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան մինչև 1905 թվի հունվարի 9 (22)-ը: Այս հանգամանքը ճշմարտորեն իրավունք եր տալիս սահմանափակ ու գոռոզ ռեֆորմիստներին պնդելու, թե Ռուսաստանում հեղափոխական ժողովորուրդ դեռ ևս չկա:

Սակայն, մի քանի ամսվա ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց: Հարյուրավոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները «հանկարծակի» վերածվեցին հազարների, հազարները դարձան առաջնորդներ յերկու — յերեք միլիոն պրոլետարների: Պրոլետարական կռիվը մեծ խմորումներ, մասամբ և հեղափոխական շարժումներ առաջացրեց հիսուն, հարյուր միլիոնանոց գյուղացիական մասսայի խորքերում, գյուղացիական շարժումն արձագանք գտավ բանակում և մղեց դեպի զինվորական ապստամբությունները, դեպի զինված ընդհարումները զորքի զանազան մասերի միջև: Այսպիսով, 130 միլիոն բնակչություն ունեցող հսկայական յերկիրը վոտք դրեց հեղափոխության մեջ, նիրհող Ռուսաստանն այսպիսով դարձավ հեղափոխական պրոլետարիատի ու հեղափոխական ժողովրդի Ռուսաստան:

Անհրաժեշտ է ուսումնասիրել այդ փոխանցումը, հասկանալ նրա հնարավորությունը, նրա, այսպես ասած, մեթոդները և ուղիները:

Այդ փոխանցման ամենագլխավոր միջոցն եր մասսայական գործադուլը[5]: Ռուսական հեղափոխության ինքնահատուկ կողմը

Այս, իհարկե, չի ապացուցում, թե քաղաքային գործարանային բանվորները Ռուսաստանում ավելի կրթված են յեղել, կամ՝ ավելի ուժեղ և կամ թե՝ ավելի ընդունակ դարձած կռվի համար, քան թե Արևմտյան Յեվրոպայի նրանց յեղբայրները: Ճիշտը հենց հակառակն է:

Սակայն, այս ցույց է տալիս, թե վորքան մեծ կարող է լինել պրոլետարիատի նկրտող յեռանդը: Այս վկայում է այն մասին, վոր հեղափոխական եպոխայում, — յես այդ պնդում եմ առանց վորևե չափազանցության՝ ռուսական պատմության ամենատուժ տվյալների հիման վրա, — պրոլետարիատը կարող է հարյուր անգամ ավելի կռվի յեռանդ ցուցաբերել, քան սովորական խաղաղ ժամանակը: Այս վկայում է այն մասին, վոր մարդկությունը մինչև 1905 թվականը դեռ ևս չգիտեր, թե վորքան մեծ, վորքան վիթխարի կարող է լինել և կլինի պրոլետարիատի ուժերի լարումը, յերթե բանը վերաբերում է իրապես մեծ նպատակների համար կռվելուն, իրապես հեղափոխականորեն կռվելուն:

Ռուսական հեղափոխության պատմությունը ցույց է տալիս մեզ, վոր հենց ամենազարդը, վարձու բանվորների ընտիր տարրերն եյին, վոր կռիվ եյին մղում մեծագույն համառությամբ և մեծագույն անձնազոհությամբ: Վորքան ավելի խոշոր եյին գործարանները, այնքան ավելի համառ եյին ընթանում գործադուլները, այնքան ավելի հաճախ եյին կրկնվում նրանք միևնույն տարվա ընթացքում: Վորքան ավելի խոշոր եր քաղաքը, այնքան ավելի մեծ եր պրոլետարիատի դերը նրա մեջ: Յերեք խոշոր քաղաք, վորտեղ ապրում են ամենաբիուրոկրատական բանվորները, Պետերբուրգը, Ռիգան և Վարշավան, տալիս են գործադուլավորների անհամեմատ ավելի մեծ քանակ՝ բանվորների ընդհանուր թվի համեմատությամբ, քան թե բոլոր մյուս քաղաքները, ել չխոսած գյուղի մասին:

Մետաղագործները Ռուսաստանում, — հավանորեն ճիշտ այնպես, ինչպես և կապիտալիստական այլ յերկրներում, — պրոլետարիատի առաջավոր չոկատն են կազմում: Յեվ այստեղ մենք նկատում ենք հետևյալ ուսանելի փաստը. գործարանային բանվորների յուրաքանչյուր հարյուրյակը Ռուսաստանում ընդհանրապես տվել է 1905 թվին 160 գործադուլավոր: Մինչդեռ մետաղագործների յուրաքանչյուր հարյուրյակը նույն այդ թվին տվել է 320 գործադուլավոր: Ըստ կատարած հաշվարկությունների՝ ռուսական յուրաքանչյուր գործարանային բանվոր 1905 թվականին, գործադուլի հետևանքով, կորցնելիս է յեղել մի քանի թվով 10 ռուբլի — մոտավորապես 26 ֆրանկ մինչպատերազմյան կուրսով, — այսպես ասած՝ զոհելիս է յեղել այդ գումարը կռվի համար: Իսկ յերբ վերցնենք մի քանի մետաղագործներին, ապա կստանանք յերեք անգամ ավելի մի գումար: Առաջից գնում եյին բանվոր դասակարգի լավագույն տարրերն՝ իրենց յեռանդով տանելով տատանվողներին, արթնացնելով քնածներին և սիրտ տալով թուլներին:

հենց այն է, վոր նա իր տեղիալական բովանդակությամբ բուրժուա-դեմոկրատական եր, բայց կռվի միջոցներով՝ պրոլետարական: Նա բուրժուա-դեմոկրատական եր, վորովհետև այն նպատակը, վորին անմիջականորեն ձգտում եր և վորին կարող եր հասնել անմիջականորեն իր սեփական ուժերով, դեմոկրատական հանրապետությունն եր, 8-ժամյա քանվորական որը, ազնվականների հակայական խոշոր հողատիրության կոնֆիսկացիան, — այն բոլոր միջոցները, վորոնք դրեթե լիակատար ծավալով կենսագործել եր բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում 1792 և 1793 թվականներին[8]:

Յերբ հետ միասին ռուսական հեղափոխությունը նաև պրոլետարական եր վոչ միայն այն իմաստով, վոր պրոլետարիատը չորժման դեկավարող ուժն եր, նրա ամենագործուն եր, այլ և այն իմաստով, վոր կռվի ամեցիֆիկ պրոլետարական միջոցն, այն է — գործադուլը մասսաները չորժելու գլխավոր միջոցն եր և՝ վճռողական դեպքերի ալիքաձև աճման մեջ առավելապես ընորոշ յերևույթը:

Ռուսական հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ առաջին մեծ հեղափոխությունն է, սակայն անկասկած նա չի լինի վերջին մեծ հեղափոխությունը, վորտեղ քաղաքական մասսայական գործադուլն արտասովոր խոշոր դեր է կատարել: Կարելի չե նույնիսկ պնդել, վոր անհնարին է ընդունել ռուսական հեղափոխության դեպքերն ու նրա քաղաքական ձևերի փոփոխությունը, յեթե գործադուլների վիճակագրության չուսումնասիրենք այդ դեպքերի հիմքն ու ձևերի այդ փոփոխությունը:

Ցես չատ լավ գիտեմ, թե բանվոր զեկուցմանը վորքան չեն հարմարվում վիճակագրական չոր ու ցամաք թվերը և թե վորքան ընդունակ են նրանք ունկնդրին խրտնեցնելու: Բայց և այնպես յես չեմ կարող չհիշատակել մի քանի կլորացված թվեր, վորպեսզի մենք հնարավորություն ունենանք գնահատելու ամբողջ չարժման իսկական որյեկտիվ հիմքը: Գործադուլավոր բանվորների տարեկան միջին թիվը Ռուսաստանում 10 տարվա ընթացքում հեղափոխությունից առաջ հավասար եր 43 հազարի: Ընտեսաբար, գործադուլավորների ընդհանուր թիվը ամբողջ տասնամյակի ընթացքում հեղափոխությունից առաջ կազմում եր 430 հազար: 1905 թվի հունվարին, հեղափոխության առաջին ամսին գործադուլավորների թիվը հավասար եր 440 հազարի: Նշանակում է միմիայն մեկ ամսվա ընթացքում արդեն ավելի յեն, քան ամբողջ նախընթաց տասնամյակում!

Աշխարհիս կապիտալիստական և վոչ մի յերկրում, մինչև անգամ ամենաառաջավոր այնպիսի յերկրներում, ինչպիսին են Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիան, աշխարհը չեր տեսել գործադուլային այնպիսի մի հսկայական չարժում, ինչպես Ռուսաստանում, 1905 թվին: Գործադուլավորների ընդհանուր քանակը հավասար եր 2 միլիոն 800 հազարի, յերկու անգամ ավելի, քան գործարանային բանվորների ընդհանուր թիվը:

Բացառիկ ինքնահատուկ եր տնտեսական ու քաղաքական դրոշադուլների միահյուսումը հեղափոխության ժամանակ:

Կասկածից դուրս ե, վոր գործադուլների այդ յերկու ձևի ամենասերտ կապն եր միմիայն, վոր ապահովեց շարժման խոշոր ուժը: Շահագործվողների լայն մասսաները չեր կարելի վոչ մի կերպ ներգրավել հեղափոխական շարժման մեջ, յեթե միայն այդ մասսաները որինակներ չտեսնեյին իրենց առջև, թե ինչպես են արդյունաբերության տարբեր ճյուղերի վարձու բանվորները հարձակողում կապիտալիստներին, վոր անմիջականորեն և անհապաղ բարելավեն նրանց վիճակը: Այս կռվի ընորհիվ նոր շունչ արթնացավ ռուս ժողովրդի ամբողջ մասսայում: Ճորտատիրական, արջայկին, նահապետական, բարեպաշտ և հնադանդ ու խոնարհ Ռուսաստանը միայն այժմ թոթափեց իրենից հնադարյան Ադամին, միայն այժմ եր, վոր ռուս ժողովուրդը իրապես դեմոկրատական, իսկապես հեղափոխական դաստիարակություն ստացավ:

Յեթե բուրժուական պարոններն ու նրանց վոչ քննադատորեն վերաբերվող ձայնարկուները, սոցիալիստական ռեֆորմիստներն այդպիսի անապարժությամբ են խոսում մասսաների «դաստիարակության մասին», ապա՝ դաստիարակություն ասելով, նրանք սովորաբար հասկանում են ինչ վոր զղրոցական, պեդանտ մի բան, վորպիսին բարոյալքում ե մասսաները, բուրժուական նախապաշարումներ ե պատվաստում նրանց:

Մասսաների իսկական դաստիարակությունը յերբեք չի կարող բաժանվել իրեն իսկ մասսայի ինքնուրույն քաղաքական և մանավանդ՝ հեղափոխական կռվից: Միայն կռվի ե դաստիարակում չահագործվող դասակարգին, միայն կռվի ե ցույց տալիս նրան իր ուժերի չափն, ընդարձակում նրա տեսաչրջանը, բարձրացնում նրա ընդունակությունները, պարզում նրա միտքը և կռում ու կոփում նրա կամքը: Յեվ հենց այս պատճառով ե, վոր նույնիսկ ռեակցիոներներն ստիպված եյին ընդունելու, վոր 1905 թվականը— կռվի տարին, «խելագար տարին» — վերջնականապես դադրը դրեց նահապետական Ռուսաստանը:

Մոտիկից քննենք մետաղագործների և մանածագործների միջև յեղած հարաբերությունը Ռուսաստանում 1905 թվի գործադուլային կռվի ժամանակ: Մետաղագործները լավագույն կերպով վարձատրվող, առավելապես գիտակից և ամենից ավելի կուլտուրական պրոլետարներ են: Մանածագործ բանվորները, վորոնց թիվը Ռուսաստանում 1905 թվին յերկու և կես անգամ ավելի յեր մետաղագործներից, ամենայետամնաց և բոլորից էլ պակաս վարձատրվող մասսան եր, վորը հաճախ դեռ վերջնականապես չեր խզել իր կապը գյուղում յեղած իր գյուղացի ազգականներից: Յեվ այստեղ մենք հանդիպում ենք հետևյալ շատ կարևոր հանգամանքին:

Մետաղագործների գործադուլներն ամբողջ 1905 թվի ընթացքում գերակշռություն են տալիս քաղաքական գործադուլին՝ տնտեսականի համեմատությամբ, թեպետ տարվա սկզբին այդ գերակշռությունը դեռ բնավ այնքան խոշոր չե, վորքան տարվա վերջին: Ընդհակառակը՝ մանածագործների մոտ 1905 թվի սկզբին մենք նկատում ենք տնտեսական գործադուլների վիթխարի գերակշռություն, վորպիսին տարվա վերջին ե միայն, վոր փոխարինվում ե քաղաքական գործադուլի գերակշռությամբ: Այստեղից վիակատար պարզությամբ բղխում ե, վոր միայն տնտեսական կռիվն ե, միայն սեփական վիճակն անմիջապես և անհապաղ բարելավելու կռիվն ե, վոր ընդունակ ե թափ տալու չահագործվող մասսայի յետամնաց խավերը, այդ ե, վոր իրական դաստիարակություն ե տալիս նրանց և դարձնում ե նրանց — հեղափոխական եպոխայում — մի քանի ամսվա ընթացքում քաղաքական մարտիկների մի բանակ:

Իհարկե, դրա համար անհրաժեշտ եր, վոր դասակարգային կռիվ ասելով բանվորների առաջավոր զոհատը նկատի ունենար վոչ թե բանվորների վերին վոգբրիկ չերտի չահերի համար մղվող կռիվը, ինչպես այդ շատ հաճախ աշխատել են ներշնչել բանվորներին ռեֆորմիստները, այլ այն, վոր պրոլետարները իսկապես հանդես գային իբրև չահագործվողների ավանդարդ և դեպի այդ կռիվը ներգրավելին մեծամասնությունը, ինչպես այս տեղի ունեցավ Ռուսաստանում 1905 թվին և ինչպես այս պետք ե տեղի ունենա և անվասկած տեղի յե ունենալու առաջիկա պրոլետարական հեղափոխության մեջ Յեվրոպայում:

1905 թվի սկիզբը գործադուլային շարժման առաջին մեծ հորձանքը առաջացրեց ամբողջ յերկրում: Այդ տարվա գարնանն արդեն մենք նկատում ենք առաջին խոշոր գյուղացիական շարժման վոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական արթնացումը Ռուսաստանում: Թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի պատմության համար չըջադարձային այդ իրողությունը, այդ կարող ե ըմբռնել միմիայն նա, ով կմտաբերի, վոր գյուղացիությունը Ռուսաստանում միմիայն 1861 թ. եր ազատագրվել ամենածանր ու ճնշող ճորտական կախումից[7], վոր գյուղացիներն իրենց մեծամասնությամբ անգրագետ են, ապրում են աննկարագրելի չքավորության մեջ, ճնշված լինելով կալվածատերերից, մոլորեցված՝ տերտերներից, իրարից անջատված հսկայական տարածություններով և ճանապարհների գրեթե բացակայությամբ:

1825 թվականին Ռուսաստանն առաջին անգամ տեսավ հեղափոխական շարժումը ցարիզմի դեմ[8], և այդ շարժումը ներկայացնողը գրեթե բացառապես աղնվականներն եյին: Այդ մոմենտից սկսած և մինչև 1881 թվականը, յերբ տեռորիստների ձեռքով սպանվեց Ալեքսանդր II-ը[9], շարժման գլուխ եյին կանգնած մտիկին դասից դուրս յեկած ինտելիգենտները: Նրանք մեծադույն անձնազոհության ցուցաբերեցին և իրենց կռվի տեռորիստական հերոսական մեթոդով ամբողջ աշխարհի զարմանքը չարժեցին: Անկասկած, իսկույն չընկան այդ զոհերը, անկասկած — ուղղակի թե ան-

ուղղակի — նրանք նպաստեցին ռուս ժողովրդի հետագա հեղափոխական դաստիարակությանը: Սակայն, իրենց անմիջական նպատակին, ժողովրդական հեղափոխության արթնացմանը, նրանք չհասան և չէին էլ կարող հասնել:

Այդ բանը հաջողվեց միայն պրոլետարիատի հեղափոխական կուսին: Ամբողջ յերկրով ծայրից-ծայր անցած մասսայական դրժոդուլի հորձանքներն էին միայն, որ ծնունդ առնելով ռուս-յապոնական իմպերիալիստական պատերազմի դաժան դասերի կապակցությամբ, զարթեցրին դյուղացիության լայն զանգվածները լեթարգիական քնից: «Գործադուլավորը» բառը բոլորովին նոր նշանակություն ստացավ դյուղացիների մոտ. — այս նշանակում էր բունտարարի, հեղափոխականի նման մի բան, ինչ վոր առաջներում արտահայտվում էր «ստուդենտ» բառով: Սակայն՝ ինչ չափով վոր «ստուդենտը» պատկանում էր մի քանի դասի, «գիտուններին», «պարոններին», — նա խորթ էր ժողովրդին: Ընդհակառակը, «գործադուլավորը» հենց ինքն էլ դուրս էր յեկել ժողովրդի միջից, ինքն էլ պատկանում էր շահագործվողների թվին: Աքսորվելով Պետերբուրգից, նա չատ հաճախ վերադառնում էր դյուղը և պատմում էր իր դյուղական ընկերներին այն հրդեհի մասին, վոր ընդգրկում էր քաղաքները և վորը պետք է վոչնչացներ ինչպես կապիտալիստներին, այնպես էլ ազնվականներին: Ռուսական դյուղում յերևան յեկավ մի նոր տիպ — յերիտասարդ գիտակից դյուղացին: Նա չվում էր «գործադուլավորների» հետ, նա թերթեր էր կարդում, նա պատմում էր դյուղացիներին քաղաքներում տեղի ունեցող անցքերի մասին, նա բացատրում էր դյուղական ընկերներին քաղաքական պահանջների նշանակությունը, նա կոչ էր անում նրանց կըռվելու խոշոր հողատեր-ազնվականների, տերտերների և չինովնիկների դեմ:

Գյուղացիները հավաքվում էին խմբերով, քննության էին առնում իրենց վիճակը և կամաց-կամաց ներգրավվում էին կռվի մեջ. — մեծ խմբերով գնում էին նրանք խոշոր կալվածատերերի դեմ, հրկիզում էին նրանց ապարանքներն ու ագարակները, կամ գրավում էին նրանց պաշարները, բռնագրավում էին հացը և այլ կենսամթերքները, սպանում էին վոստիկաններին, պահանջում էին, վոր ժողովրդին հանձնեն ազնվականների հսկայական կալվածատիրական հողերը[10]:

1905 թվի գարնանը գյուղացիական շարժումը դեռ ևս իր սաղմային վիճակումն էր, նա ընդգրկել էր գավառների փոքրամասնությունը միայն, նրանց մոտավորապես յոթերորդ մասը:

Սակայն՝ քաղաքներում պրոլետարական մասսայական գործադուլի միացումը գյուղացիական շարժման հետ գյուղերում բավական էր խախտելու համար ցարիզմի «ամենակայուն» և ամենավերջին հենարանը: Ձեռ նկատի ունիմ բանակը:

Սկսվում է զինվորական ապստամբությունների շրջանը նավատորմում և բանակում[11]: Գործադուլային և գյուղացիական շարժ-

ման ալիքի յուրաքանչյուր բարձրացումը հեղափոխության ժամանակ զուգորդվում է զինվորական ապստամբությունների հետ Ռուսաստանի բոլոր ծայրերում: Ամենահայտնին դրանց մեջ այն ապստամբությունն է, վորն առաջացել էր սևծովյան ըրահանավ «Կընյազ Պատյոմկինի» վրա, վորն ընկնելով ապստամբների ձեռքը, մասնակցել էր հեղափոխությանն Ոդեսայում և վորը՝ հեղափոխության պարտությունից և մի շարք այլ նավահանգիստների գրավելու անհաջող փորձերից հետո (որինակ՝ Թեոդոսիան Ղրիմում) հանձնվեց ռումինական իշխանության ձեռքը Կոնստանցայում:

Թուլլ տվեք լինճ մանրամասն պատմել Սևծովյան նավատորմի ապստամբության մի փոքրիկ միջադեպը, վորպեսզի դուք դեպքերը կոնկրետ պատկերացնեք նրանց զարգացման բարձրագույն կետում:

Կազմակերպվում էին հեղափոխական բանվորների և նավատների ժողովներ, սրանք ավելի և ավելի հաճախ էին տեղի ունենում: Վորովհետև զինվորականներին թուլլ չէին տալիս գնալու բանվորական միտինգները, այդ պատճառով բանվորներն սկսեցին հոծ մասսաներով հաճախել զինվորական միտինգները: Հավաքվում էին հազարներով: Միանգամից յերկու կազմակերպելու գաղափարը կենդանի արձագանք գտավ: Ավելի գիտակից վաշտերում ընտրվում էին պատգամավորներ:

Այն ժամանակ զինվորական իշխանությունը վորոշեց միջոցներ ձեռք առնել: Առանձին սպաների՝ միտինգներում «հայրենասիրական» ճառեր ասելու փորձերը տալիս էին ամենավողբալի արդյունքներ. դեկուսիանների ընտելացած նավատներն խայտառակ վախուստի էին մատնում իրենց պետերին: Այդպիսի անհաջողությունները նկատի առնելով՝ վորոշված էր միտինգներն ընդհանրապես արգելել: 1905 թվի նոյեմբերի 24 (11)-ի առավոտյան նավատեխական դպրոցների դարպասի առջև մարտական մի վաշտ էր կանգնեցված՝ մարտական լիակատար պատրաստությամբ: Կոնտր-ադմիրալ Պիսարևսկին ի լուր ամենի հրաման արձակեց. — «Զորանոցներից վոչ վոքի դուրս չթողնեք: Զհպատակվելու դեպքում — կրակեցեք»: Այն վաշտից, վորին տրված էր հիշյալ հրամանը, առաջ յեկավ նավատ Պետրովը, բոլորի աչքերի առաջ յերեց իր հրացանը, մեկ գնդակով սպանեց Բրեստ-Լիտովսկի գնդի փոխ-գնդապետ Շտեյնին, իսկ յերկրորդ գնդակով վիրավորեց կոնտր-ադմիրալ Պիսարևսկուն: Հնչեց սպայի հրամանը.—«Զերբակալեցեք սրան»: Վոչ վոք տեղից չշարժվեց: Պետրովը դեռևս չպրտեց իր հրացանը. — «Ինչու յեք կանգնել, ձերբակալեցեք ինձ»: Նա ձերբակալվեց: Ամեն կոմպից դեպքի վայրը վազող նավատները բուռն կերպով պահանջում էին ազատել նրան՝ հայտարարելով, վոր իրենք յերաշխավոր են նրա համար: Հուզմունքը հասել էր գագաթնակետին:

— Պետրով, չե՞ վոր կրակոցը պատահական եր, այնպես չե՞, — հարց տվեց սպան՝ առեղծված դրությունից մի յելք գտնելու նպատակով:

— Ինչո՞ւ ես պատահական, ո՞վ ասեց... Ցես առաջ յեկաւ հրացանս լցրի, նշան բռնեցի և կրակեցի, — մի՞թե այս պատահական է...

— Նրանք պահանջում են քեզ ազատել...

Ցեվ Պետրովն ազատ արձակվեց: Սակայն նավաստիները դրանով չբավարարվեցին: Բոլոր հերթապահ սպաները ձերբակալվեցին, զինաթափ արվեցին և ուղարկվեցին դրասենյակ: Նավաստիների պատգամավորները՝ թվով մոտ 40 հոգի՝ խորհրդակցում էին ամբողջ գիշերը: Վորոշեցին սպաներին ազատել և այլևս նրանց ներս չթողնել զորանոցները...

Այս փոքրիկ պատկերն ակնառու ցույց է տալիս ձեզ, թե ինչպես էին կատարվում դեպքերը զինվորական ապստամբությունների մեծ մասում: Հեղափոխական խմորումը ժողովրդի մեջ չէր կարող չընդգրկել նաև զորքը: Բնորոշ է, վոր չարժման առաջնորդներ էին տալիս ռազմական նավատորմի և բանակի հենց այն տարրերը, վորոնք զորակոչվում էին գլխավորապես արդյունաբերական բանվորների միջավայրից և վորոնց համար պահանջվում էր տեխնիկական առավելագույն պատրաստություն, օրինակ՝ սապյորները: Սակայն՝ լայն մասսաները դեռ ևս չափազանց միամիտ էին, չափազանց խաղաղարեն, չափազանց բարեհոգի և քրիստոնեյաբար էին տրամադրված: Նրանք բռնկվում էին բավական դյուրին կերպով, անարդարության վորևե դեպքը, սպաների չափազանց կոպիտ վարվեցողությունը, վատ անունդը և այլն կարող էր զայրույթ առաջ բերել: Բայց՝ պակասում էր տոկունությունը, բացակայում էր խնդրի պարզ գիտակցությունը. — պակասում էր այն բանի պարզ հասկացողությունը, վոր միմիայն զինված կռվի յեռանդուն չարունակությունն է, միմիայն բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությունների հանդեպ տարվող հաղթանակն է, միմիայն ամբողջ պետության մեջ կառավարության տապալումը և իշխանության գրավումն է հեղափոխության հաջողության միակ յերաշխիքը:

Նավաստիների և զինվորների յայն զանգվածները դյուրությամբ սկսում էին բունտ անել: Սակայն՝ հուզնպիսի դյուրությամբ նրանք կատարում էին նաև այն միամիտ հիմարությունը, վոր ազատ էին արձակում ձերբակալված սպաներին: Նրանք թույլ էին տալիս, վոր իշխանությունն իրենց հանգստացնե խոստումներով ու համոզումներով: Այդպիսով, իշխանությունը չահում էր թանգարժեք ժամանակը, ոժանդակություն էր ստանում, ջախջախում էր ապստամբների ուժերը, իսկ դրանց հետևում էր ամենադաժան ճնշումն ու առաջնորդների մահապատիժը:

Հետաքրքրական է համեմատել 1905 թվի զինվորական ապստամբությունները Ռուսաստանում 1825 թվի դեկաբրիստների զինվորական ապստամբության հետ: Այն ժամանակ քաղաքական չարժման ղեկավարությունը գրեթե բացառապես պատկանում էր սպաներին, մանավանդ՝ աղնվական-սպաներին: Նրանք վարակված

էին՝ նապոլեոնյան պատերազմների ժամանակ չվիվելով Ցեվրոպայի դեմոկրատական դաղափարների հետ: Զինվորների մասսան, վոր այն պահին բաղկացած էր դեռ ևս ճորտ գյուղացիներից, իրեն պասսիվ էր պահում:

1905 թվի պատմությունը միանդամայն հակառակ պատկերն է տալիս մեզ: Սպաները՝ չատ աննչան բացառությամբ՝ այդ ժամանակ կամ բուրժուա-լիբերալական, ռեֆորմիստական տրամադրություններ ունեյին, կամ թե՝ պարզապես հակահեղափոխական: Զինվորական համազգեստ հագած բանվորներն ու գյուղացիները ապստամբության հոգին էին կազմում. չարժումը դարձել էր ժողովրդական: Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ էր, վոր նա ընդգրկում էր չահագործվողների մեծամասնության: Այն, ինչ վոր նրան պակասում էր, մի կողմից՝ մասսաների տոկունությունն էր և վճռականությունը, մասսաների, վորոնք չափազանց չատ էին տառապում վատահության հիվանդությունից, մյուս կողմից՝ պակասում էր զինվորական համազգեստ հագած հեղափոխական սոցիալ-դեմոկրատական բանվորների կազմակերպությունը. — նրանք հմտություն չունեյին ղեկավարությունն իրենց ձեռքն առնելու, հեղափոխական բանակի գլուխը կանգնելու և հարձակման դիմելու ընդդեմ կառավարական իշխանության:

Ի դեպ ասած, — թերևս ավելի դանդաղ կերպով, քան մեզ համար ցանկալի կլիներ, սակայն առավել հաստատապես, — յերկու այդ թերություն էլ կվերացվեն վոչ միայն կապիտալիզմի ընդհանուր զարգացմամբ, այլ և ներկա պատերազմով...

Համենայն դեպս, ռուսական հեղափոխության պատմությունը, ինչպես և 1871 թվի Պարիզյան Կոմունայի[12] պատմությունն, անհերքելի մի դաս է տալիս մեզ, վոր միլիտարիզմը յերբեք և վոչ մի դեպքում չի կարող հաղթահարվել և վոչնչացվել վորևե այլ յեղանակով, բայց յեթե միմիայն ժողովրդական բանակի մեկ մասի հաղթական կռվով նրա մյուս մասի դեմ: Բավական չէ միայն հոխորտալ, անիծել, «ժխտել» միլիտարիզմը, քննադատել և փաստարկել նրա վնասը, տխմարություն է խաղաղ կերպովհրաժարվել զինվորական ծառայությունից, — խնդիրն այն է, վոր կարելի լինի լարված դրության մեջ պահել պրոլետարիատի հեղափոխական դիտակցությունը և այն էլ՝ վոչ միայն ընդհանրապես, այլ կոնկրետ կերպով նախապատրաստել նրա լավագույն տարրերն այն բանի համար, վոր ժողովրդի մեջ առաջացած խորագույն խմորումների պահին նրանք կարողանան հեղափոխական բանակի գլուխ կանգնել:

Նույն բանն է ուսուցանում մեզ ամեն մի կապիտալիստական պետության ամենորյա փորձը: Այդպիսի պետության ապրած յուրաքանչյուր «փոքրիկ» ճգնաժամը ցույց է տալիս մեզ մինիատյուր ծավալով այն կռիվների տարրերն ու սաղմերը, վորոնք մեծ ճգնաժամի պահին անխուսափելիորեն կրկնվելու յեն խոշոր մասչտաբով: Հապա ուրիշ ի՞նչ է, որինակ, ամեն մի գործադուլն, յեթե վոչ

կապիտալիստական հասարակութեան մի փոքրիկ ճգնաժամ: Մի՞թե իրավացի չէր պրուսական ներքին գործերի մինիստր պարոն Ֆոն-Պուտտկամերը, յերբ ասում էր իր հայտնի դարձվածքը.— «Յուրաքանչյուր գործադուլից հեղափոխութեան հիշրան է նայում»: Յույց չէ՞ն տալիս արդյոք գործադուլների ժամանակ զորքեր կանչելու դեպքերը բոլոր, մինչև անգամ — յեթե կարելի յե ասել — ամենախաղաղ, ամենա-«դեմոկրատական» կապիտալիստական յերկրներում, թե գործն ինչ դրութեան մեջ է լինելու իրապես խոշոր ճգնաժամերի միջոցին:

Սակայն, յես նորից վերադառնում եմ ռուսական հեղափոխութեան պատմութեանը:

Յես փորձեցի ներկայացնելու ձեզ, թե բանվորական գործադուլները ինչպես ցնցեցին ամբողջ յերկիրը և չահագործվողների ամենալայն յետամնաց խավերը, ինչպես ծայր առավ դյուղացիական չարժումը, ինչպես նրան ուղեկից եկին զինվորական ապստամբութիւնները:

1905 թվի աշնանն ամբողջ չարժումը հասավ իր գագաթնակետին: Ոդոստոսի 19 (6)-ին հրապարակվեց ցարի մանիֆեստը՝ ժողովրդական ներկայացուցչութեան ստեղծելու մասին: Այսպես կոչված Բուլիգինյան Դուման[13] պետք է ստեղծվեր ընտրական այն իրավունքների հիման վրա, որպիսին տարորինակ կերպով վաքսանական ընտրողներ եր յենթադրում և այդ յուրօրինակ «պարլամենտին» չեր տրամադրում որևե որենադրական իրավունքներ, այլ միմիայն — խորհրդակցական իրավունքներ:

Բուրժուազիան, լիբերալները, ոպորտունիստները պատրաստ եկին յերկու ձեռքով պինդ բռնելու վախեցած ցարի այդ «պարգևը»: Բոլոր այլ ռեֆորմիստների նման՝ 1905 թվի մեր ռեֆորմիստներն էլ չկարողացան հասկանալ, որ լինում են պատմական սիտուացիաներ, յերբ ռեֆորմները և մանավանդ ռեֆորմների խոստումները, բացառապես մի նպատակ են հետապնդում — դադարեցնել ժողովրդի խմորումները, հարկադրել հեղափոխական դասակարգին, որ վերջ տա, կամ առնվազն՝ թուլացնի կռիվը:

Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան չատ լավ հասկացավ այդ արտոնաշնորհման, 1905 թ. ոգոստոսին առերևութ սահմանադրութիւն շնորհելու իսկական բնույթը: Յեվ հենց այս պատճառով՝ մի վայրկյան անգամ չդանդաղելով՝ նա լոզունգ արձակեց.— կորչի՛ խորհրդակցական Դուման! բոյկոտ Դումային! Կորչի՛ ցարական կառավարութիւնը! Շարունակել հեղափոխական կռիվն այդ կառավարութեան տապալելու նպատակով! Վոչ թե ցարը, այլ հեղափոխական ժամանակավոր կառավարութիւնը պետք է դումարի առաջին իսկական ժողովրդական ներկայացուցչութիւնը Ռուսաստանում:

Պատմութիւնն ապացուցեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատների իրավացիութիւնը նրանով, որ Բուլիգինյան Դուման յերբեք չդումարվեց: Դեռ չդումարված՝ նրան սրբեց-տարավ հեղափոխական փոթորիկը: Այս փոթորիկը հարկադրեց ցարին մի նոր ընտրական որենք հրատարակել, որը զգալիորեն ավելացնում եր ընտրողների թիվը և ապա՝ ընդունել Դումայի որենադրական բնույթը[14]:

1905 թվի հոկտեմբերը[15] և դեկտեմբերը[16] — ռուսական հեղափոխութեան վերընթաց գծի բարձրագույն կետն են նշանակում: Ժողովրդի հեղափոխական ուժի բոլոր աղբյուրները բացվեցին ավելի լայն կերպով, քան առաջներում: Գործադուլավորների քանակը, որպիսին 1905 թվի հունվարին, ինչպես յես արդեն հաղորդել եմ ձեզ, կազմում եր 440 հազար,— 1905 թվի հոկտեմբերին արդեն կես միլիոնից անցավ (նկատեցեք, որ միմիայն մեկ ամսում!): Սակայն՝ այս քանակի վրա, որը ընդգրկում է միմիայն գործարանային բանվորներին, պետք է ավելացնել նաև մի քանի հարյուր հազար յերկաթուղային բանվորներին, պոստ-հեռագրական ծառայողներին և այլն: Ռուսաստանի յերկաթուղային ընդհանուր գործադուլը դադարեցրեց յերկաթուղային յերթևեկութիւնը և ամենաճոռոտական կերպով ջլատեց կառավարութեան ուժը: Բացվեցին համալսարանների դռները, և այն լսարանները, որոնք խաղաղ ժամանակ հատկացված եկին բացառապես նրա համար, որ չշմեգնեն յերիտասարդ գլուխները պրոֆեսորական ամբիոնային իմաստութեամբ և նրանց դարձնեն բուրժուազիայի և ցարիզմի հլու ծառաները, այժմ ծառայում եկին իբրև ժողովատեղի հազարավոր և հազարավոր բանվորների, արհեստավորների, ծառայողների համար, որոնք ազատ ու համարձակ քննարկում եկին քաղաքական հարցերը:

Նվաճված եր մամուլի ազատութիւնը: Գրաքննութիւնը պարզապես վերացված եր: Վոչ մի հրատարակիչ չեր համարձակվում հրատարակութեան պարտադիր որինակը ներկայացնելու իշխանութիւններին, իսկ իշխանութիւնները չեկին համարձակվում դրա դեմ վորևե միջոցների ձեռնարկել: Ռուսական պատմութեան մեջ առաջին անգամ եր, որ Պետերբուրգում և այլ քաղաքներում ազատ կերպով լույս տեսան հեղափոխական թերթեր: Հենց մենակ Պետերբուրգում լույս եր տեսնում սոցիալ-դեմոկրատական 3 ամենօրյա թերթ՝ 50-ից մինչև 100 հազար տիրաժով[17]:

Պրոլետարիատը չարժման գլուխն եր անցել: Նա խնդիր եր դրել — հեղափոխական ճանապարհով նվաճել 8-ժամյա բանվորական որը: Պետերբուրգի պրոլետարիատի մարտական լոզունգն եր այն ժամանակ.— «8-ժամյա որ և զենք»: Հարցումն բանվորական մասսայի համար այլևս ակներև եր դառնում, որ հեղափոխութեան բախտը կարող է լուծել և լուծելու յե միմիայն զինված կռիվը:

Կռվի բոցերում կազմվեց յուրահատուկ մասսայական կազմակերպութիւնը.— Բանվորական Պատգամավորների[18] Նշանավոր Խորհուրդները, բոլոր գործարանների պատգամավորների ժողովները: Բանվորական Պատգամավորների այդ Խորհուրդները Ռուսաստանի մի քանի քաղաքներում ավելի և ավելի եկին սկսում ժա-

մանակավոր հեղափոխական կառավարության դեր, ապատամբության մարմինների և ղեկավարների դեր կատարել: Փորձեր արվեցին կազմակերպելու Զինվորների և Նավաստիների Պատգամավորների Խորհուրդներ և նրանց միացնելու Բանվորական Պատգամավորների Խորհուրդների հետ:

Ռուսաստանի քաղաքներից մի քանիսն այն որերին տեղային այն մանր «հանրապետությունների» շրջանն էին ապրում, վորոնց մեջ կառավարական իշխանությունը պաշտոնազուրկ եր արված և բանվորական Պատգամավորների Խորհուրդն իսկապես գործում եր իբրև պետական մի նոր իշխանություն: Դժբախտաբար, այդ շրջանները չատ կարճատև էին, «հաղթանակները» չափազանց թեթև, չափազանց մեկուսացած իրարից:

Գյուղացիական շարժումը 1905 թվի աշնանը հասավ ավելի խոշոր չափերի: Ամբողջ յերկրի դավառների մեկ յերրորդական մասից ավելին ընդգրկված եր «գյուղացիական անկարգություններով» և գյուղացիական իսկական ապստամբություններով: Գյուղացիները հրկիզեցին մոտ յերկու հազար կալվածք և իրենց մեջ բաշխեցին այն բոլոր կենսամիջոցները, վոր աղնվական ավազակները կողոպտել էին ժողովրդից:

Դժբախտաբար, այդ աշխատանքը չափազանց քիչ եր հիմնավորված: Դժբախտաբար, գյուղացիները այն ժամանակ վոչնչացրին աղնվականների կալված քների ընդհանուր քանակի միայն մեկ տասնհինգերորդական մասը, միայն մեկ տասնհինգերորդական մասը այն ամենի, ինչ վոր նրանք պետք է վոչնչացնեին, վորպեսզի վերջնականապես ընկճեին ռուսական աշխարհի յերեսից Ֆեոդալական խոշոր հողատիրության ամոթն ու խայտառակությունը: Դժբախտաբար, գյուղացիները գործում էին չափազանց փոշիացած, անկազմակերպ, վոչ բավականաչափ հարձակողական, և այդ է ահա, հեղափոխության պարտության արմատական պատճառներից մեկը:

Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազգային-ազատագրական շարժում[19]: Ռուսաստանում ամբողջ բնակչության կեսից ավելին, գրեթե յերեք հինգերորդականը (ճշգրիտը—57%-ը) յենթարկվում է ազգային ճնշման: Նրանք զրկի են մինչև անգամ մայրենի լեզվի ազատությունից, նրանց բռնի կերպով ռուսացնում են: Բրինձ, մահմեդականները, վորոնք Ռուսաստանում տասնյակ միլիոնների բնակչություն են կազմում, ապչեցնող պարզությամբ, — ընդհանրապես բազմազան կազմակերպությունների հնությական աճման մի եզոխա յեր այն — մահմեդականների միությունն կազմակերպեցին այն ժամանակ:

Ներկա ժողովին և մանավանդ՝ յերիտասարդության ցույց տալու համար, թե այն ժամանակվա Ռուսաստանում ինչպես եր բարձրանում ազգային-ազատագրական շարժումը՝ բանվորական շարժման կապակցությամբ, — յես կհիշատակեմ այստեղ մի փոքրիկ որինակ:

1905 թվի դեկտեմբերին հարյուրավոր գպրոցներում դպրոցական հասակի լեհական յերեխաները վառեցին բոլոր ռուսական գրքերը, պատկերները և ցարերի դիմանկարները, ծեծեցին և դպրոցներից դուրս վռնդեցին ռուս ուսուցիչներին և ռուս ընկերներին, գոչելով.—«Դուրս կորեք, գնացեք Ռուսաստան!» Միևնակարգ դպրոցների լեհ աշակերտների պահանջներն էին, ի միջի այլոց, հետևյալները.—1) բոլոր միևնակարգ դպրոցները պետք է յենթարկվեն Բանվորական Պատգամավորների Խորհրդին, 2) աշակերտական և բանվորական միասնական ժողովների դումարումը դպրոցական շենքերում, 3) գիմնազիաներում կարմիր բաճկոններ հագնելու թույլատվություն՝ ի նշան ապագա պրոլետարական հանրապետության պատկանելության և այլն:

Վորքան ավելի էին բարձրանում շարժման ալիքները, այնքան ավելի յեռանդով ու վճռականությամբ եր զինվում ռեակցիան՝ հեղափոխության դեմ կռվելու համար: 1905 թվի ռուսական հեղափոխության մեջ արդարացավ այն, ինչ վոր 1902 թ. գրում եր Կ. Կաուցկին իր՝ «Սոցիալական հեղափոխություն»[20] գրքում (նա այն ժամանակ, ի դեպ ասած, դեռ հեղափոխական մարքսիստ եր և վոչ թե սոցիալ-պատրիոտների և ոպորտունիստների պաշտպան, ինչպես այժմ): Նա գրում եր հետևյալը.—

«Ապագա հեղափոխությունն... ավելի քիչ է նմանվելու հանկարծական ապստամբության կառավարության և ավելի շատ՝ յերկարատև բպաֆացիական պատերազմի»:

Այդպես էլ յեղավ: Անկասկած, այդպես էլ կլինի յեվրոպական առաջիկա հեղափոխության մեջ:

Յարիզմի ատելությունն ուղղվեց հատկապես հրեաների դեմ[21]: Մեկ կողմից՝ հրեաները հեղափոխական շարժման առաջնորդների առանձնապես բարձր, տոկոս էին տալիս (հրեա բնակչության ընդհանուր քանակի համեմատությամբ): Բեվ այժմ էլ, ի դեպ ասած, հրեաներն ունեն այն յերախտիքը, վոր այլ ժողովուրդների համեմատությամբ, նրանք միջազգայնական հոսանքի ներկայացուցիչների հարաբերականորեն բարձր տոկոսն են տալիս: Մյուս կողմից՝ ցարիզմը հրաշալիորեն ոգտագործել գիտեր բնակչության ամենետգետ խավերի ամենագարչելի նախապաշարումները հրեաների դեմ այն նպատակով, վոր չարդեր կազմակերպի, յերբեմն վոչ անմիջականորեն ղեկավարի այդպիսիները,—այդ հրեշավոր չարդերը խաղաղ հրեաների, նրանց կանանց ու յերեխաների, չարդեր, վորոնք այնպիսի զզվանք առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Բեզ նկատի ունեմ, իհարկե, քաղաքակիրթ աշխարհի իսկապես դեմոկրատական տարրերի զզվանքը, իսկ այդիպիսիք են բացառապես սոցիալիստական բանվորները, պրոլետարները:

Հարյուր քաղաքում այդ ժամանակամիջոցին հաչվվում եր ավելի քան 4·000 սպանված և ավելի քան 10·000 հաշմանդամ դարձված: Արևմտյան Բեվրոպայի մինչև անգամ ամենից ազատ, մինչև անգամ հանրապետական յերկրների բուրժուազիան հրաշալի կեր-

պով կարողանում է գրավոր դիմել «ռուսական գազանությունների» մասին իր կեղծավոր ֆռազներն ամենից անամոթ փողային գործարքների հետ, մանավանդ ցարիզմի[22] ֆինանսական ոժանդակության և Ռուսաստանի իմպերիալիստական չահագործման հետ, որը կատարվում է կապիտալի արտահանման միջոցով և այլն:

1905 թվի հեղափոխությունն իր գագաթնակետին հասավ Մոսկվայի[16] դեկտեմբերյան ապստամբությամբ: Ապստամբների փոքրիկ մի խմբակ, այն է — կազմակերպված և զինված բանվորների, — ղեկավարեց մի այնպիսի զանգվածի, որ ամենևին էլ հազարից ավելի չէր, — բայց որով ընդհանրապես դիմադրություն եր ցույց տալիս ցարական կառավարության բանակին, որը չէր կարողանում վստահել Մոսկվայի գարնիզոնին և ընդհակառակն՝ ստիպված եր փակած պահել այդ, և միմիայն Սեմյոնովսկի գնդի ժամանելուց հետո է վիճակին տեր դառնալ Սեմյոնովսկի գնդի ժամանելուց հետո է վիճակին տեր դառնալ ցարական կառավարությունը:

Բուրժուազիան սիրում է ինչ որ արհեստական բան անվանել Մոսկվայի ապստամբությունը և ծաղրել այն: Այսպես, օրինակ, գերմանական այսպես կոչված «գիտական» գրականության մեջ պարոն պրոֆեսոր Մաքս Վեբերը Ռուսաստանի քաղաքական զարգացման մասին գրած իր մեծ աշխատության մեջ Մոսկվայի ապստամբությունն անվանել է «պուտչ» (խռովություն): «Լենինյան խումբը, — ասում է այդ «մեծագիտունն» պարոն պրոֆեսորը, — և եսերների մի մասը վազուց է արդեն, որ նախապատրաստում էին այդ անիմաստ ապստամբությունը»*:

Վախկոտ բուրժուազիայի պրոֆեսորական այս խմաստությունն ըստ արժանվույն գնահատելու համար բավական է հիշողության մեջ լոկ թարմացնել գործադուլների վիճակագրության չորս ցամաք թվերը: 1905 թվի հոկտեմբերին յեղել է միմիայն 13 հազար քաղաքական գործադուլավոր, հոկտեմբերին — 330 հազար, դեկտեմբերին այդ թիվը հասել եր արդեն մաթեմատիկորեն, այն է — 370 հազար զուտ քաղաքական գործադուլավոր մեկ ամսվա ընթացքում: Վերհիշենք հակահեղափոխության հաջողությունները, ինչպես նաև գյուղացիների և զինվորների ապստամբությունները, և մենք իսկույն և յեթ կդանք հետևյալ հանգման — «բուրժուական գիտության» դասողությունը դեկտեմբերյան ապստամբության մասին վոչ միայն անհեթեթություն է, այլ և վախկոտ բուրժուազիայի ներկայացուցիչների խուսափումն և խոցքով, բուրժուազիայի, որը հանձինս պրոլետարիատի տեսնում է իր ամենավտանգավոր դասակարգային թշնամուն:

Իրականում ռուսական հեղափոխության ամբողջ զարգացումն անխուսափելիորեն մղում եր դեպի վճռողական զինված կռիվը, որ լինելու յեր ցարական կառավարության և դասակարգային գիտակից պրոլետարիատի ավանգարդի միջև:

* Լենինը նկատի ունի պրոֆ. Վեբերի «Ռուսաստանի անցդարձը դեպի կեղծ սահմանադրություն» վերնագրով գիրքը, որը նա լույս եր ընծայել Գերմանիայում 1906 թ.: ՄՄԸ.

Իմ վերհիշյալ դիտողություններում յես արդեն նշել եմ, թե ինչն եր ռուսական հեղափոխության թուլությունը, որն և հասցրեց նրան ժամանակավոր պարտության:

Դեկտեմբերյան ապստամբության ճնշումից սկսվում է հեղափոխության վայրէջքի դիծը[23]: Այս ժամանակաշրջանում էլ կան չափազանց հետաքրքրական մոմենտներ. բավական է միայն վերհիշել բանվոր դասակարգի ամենամարտական տարրերի կրկնակի փորձը — դադարեցնելու հեղափոխության նահանջը և նախապատրաստելու նոր առաջխաղացումը:

Սակայն, ինձ տրված ժամանակը գրեթե լրացել է, և յես չեմ կամենում չարաշահել իմ ունկնդիրների համբերությունը: Սակայն ամենակարևորը հեղափոխության մեջ — նրա դասակարգային բնույթը, նրա շարժիչ ուժերը, նրա կռվի միջոցները յես, — ինչպես ինձ թվում է, — արդեն ուրվագծեցի, ինչ չափով վոր ընդհանրապես հնարավոր է այդպիսի հսկայական թեման սպառել համառոտ դեկուցմամբ:

Միայն մի քանի չատ հակիրճ դիտողություններ ևս ռուսական հեղափոխության համաչխարհային նշանակության մասին:

Ռուսաստանը աշխարհագրորեն, տնտեսապես և պատմականորեն վերաբերում է վո՛չ միայն Եվրոպային, այլ և Ասիային: Եվ հենց այս պատճառով մենք տեսնում ենք, որ ռուսական հեղափոխությունը միայն այն բանին չէ հասել, որ վերջնականապես արթնացել է քնից Եվրոպայի ամենահոշոր և ամենայետամնաց երկիրը և ստեղծել է հեղափոխական մի ժողովուրդ, որը դեկավարվում է հեղափոխական պրոլետարիատի կողմից:

Նա միայն այս չէ գլուխ բերել: Ռուսական հեղափոխությունը չարժում է առաջ բերել բոլանդակ Ասիայում: Հեղափոխությունները Թյուրքիայում, Պարսկաստանում, Չինաստանում ցույց են տալիս, որ 1905 թվականի ղորեղ ապստամբությունը խոր հետքեր է թողել և որ անջնջելի յե նրա ազդեցությունը, որը հարյուր և հարյուր միլիոնավոր մարդկանց առաջընթաց չարժումով է արտահայտվում:

Ռուսական հեղափոխությունն անուղղակի կերպով իր ազդեցությունն է թողել նաև արևմուտքում գտնվող երկրների վրա: Զպետք է մոռանալ, որ հենց վոր 1905 թ. հոկտեմբերի 30 (17)-ին հեռագիր ստացվեց Վիեննայում, ցարի սահմանադրական մանիֆեստի մասին, այս լուրը վճռողական դեր կատարեց Ավստրիայում ընդհանուր ընտրական իրավունքի վերջնական հաղթության համար:

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի համագումարի նիստի ժամանակ, յերբ ընկեր Ելլենբոգենը — այն ժամանակ նա դեռ ևս սոցիալ-պատրիոտ չեր, այն ժամանակ նա դեռ ընկեր եր — իր զեկուցումն եր տալիս քաղաքական գործադուլի մասին, նրա առջև սեղանի վրա դրվեց այդ հեռագիրը: Վիճաբանությունները անմիջապես դադարեցվեցին: Մեր տեղը վտղոցն է, — ահա թե ինչպիսի

կանչ լավեց ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի պատգամավորների նիստերի դահլիճով մեկ: Ցեվ մոտակա որերը վաղոցային խոշորագույն ցույցեր տեսան Վիեննայում և բարիկադներ՝ Պրագայում: Ընդհանուր ընտրական իրավունքի վերաբերյալ որենքի հաղթանակն Ավստրիայում դրանով արդեն վորոշված եր[24]:

Շատ հաճախ արևմտյան յեվրոպացիներ են պատահում, վորոնք ռուսական հեղափոխության մասին այնպես են դատում, կարծես թե այդ յեռամեայց յերկրում տեղի ունեցած դեպքերը, հարաբերությունները և կռվի միջոցները շատ քիչ նմանություն ունեն արևմտյան յեվրոպական հարաբերությունների և հենց այդ պատճառով հազիվ թե կարող են վորևե գործնական նշանակություն ունենալ:

Չկա վոչինչ ավելի սխալ բան, քան այդպիսի կարծիքը:

Անկասկած՝ յեվրոպական առաջիկա հեղափոխության առաջիկա մարտերի ձևերն ու առիթները շատ տեսակետներից տարբերվելու յեն ռուսական հեղափոխության ձևերից:

Բայց, չնայած դրան, ռուսական հեղափոխությունը — հենց իր պրոլետարական բնույթի շնորհիվ՝ այս բառի այն հատուկ նշանակությամբ, վորի մասին յես արդեն խոսեցի, — առաջիկա յեվրոպական հեղափոխության նախաբանն է: Կասկած չկա, վոր այս առաջիկա հեղափոխությունը կարող է լինել մխիթարական պրոլետարական հեղափոխություն և այն էլ՝ այս բառի առավել խոր նշանակությամբ, — պրոլետարական, սոցիալիստական նաև իր բովանդակությամբ: Առաջիկա այս հեղափոխությունը ցույց կտա ավելի խոշոր չափով, մի կողմից այն, վոր մխիթարական դաժան մարտերը, այն է՝ քաղաքացիական պատերազմները կարող են ազատագրել մարդկությունը կապիտալի լծից, իսկ մյուս կողմից, այն, վոր մխիթարական դասակարգայնորեն գիտակից պրոլետարները կարող են հանդես գալ և հանդես կգան իրրև չհաղորդվողների հրամայական մեծամասնության առաջնորդներ:

Յեվրոպայի այժմյան մեռելային լռությունը մեզ բնավ չպիտի խաբի: Յեվրոպան հղի յե հեղափոխությամբ: Իմպերիալիստական պատերազմի հրեշավոր սարսափները, թանգության տանջանքներն ամենուրեք հեղափոխական տրամադրություններ են զարթնեցնում, և տիրող դասակարգերը — բուրժուազիան և նրանց գործակատար կառավարություններն, ավելի և ավելի յեն ընկնում փակուղին, վորից՝ առանց մեծագույն ցնցումների՝ նրանք ընդհանրապես դուրս գալ չեն կարող:

Այնպես, ինչպես Ռուսաստանում 1905 թվին պրոլետարիատի ղեկավարությամբ ժողովրդական ապստամբություն սկսվեց ցարական կառավարության դեմ, նպատակ ունենալով դեմոկրատական հանրապետության նվաճումը, այդպես էլ հենց այս ավազակային պատերազմի կապակցությամբ առաջիկա տարիները կհասցնեն այն բանին, վոր ժողովրդական ապստամբություններ կլինեն Յեվրոպայում պրոլետարիատի ղեկավարությամբ՝ ընդդեմ ֆեոդալական կապիտալի իշխանության, ընդդեմ խոշոր բանկերի, ընդդեմ կապիտալիստների, և այդ ցնցումները չեն կարող այլ կերպ վերջանալ, բայց յեթե բուրժուազիայի եքսպրոպրիացիայով, սոցիալիզմի հաղթանակով միայն:

Մենք, ծերունիներս, թերևս չենք ապրի մինչև այս առաջիկա հեղափոխության վճռական մարտերը: Սակայն, թվում է ինձ, վոր յես կարող եմ մեծ վստահությամբ այն հույսն հայտնել, վոր յերիտասարդությունը, վորն այնքան հրաշալի կերպով գործում է Շվեյցարիայի և Համայն աշխարհի սոցիալիստական շարժման մեջ, բախտ կունենա վոչ միայն կռվելու, այլ և հաղթելու առաջիկա պրոլետարական հեղափոխության մեջ:

Հունվար 1917 թ.

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ[25]

I

«Կորչի՛ ինքնակալութիւնը» լոզունգը սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներից շատերին ընդամենը հինգ տարի առաջ թվում էր վաղաժամ, բանվորական մասսայի համար անհասկանալի[26]: Այդ ներկայացուցիչներն իրավացիորեն դավում էին ոպորտունիստների չարքը: Նրանց բացատրում և բացատրում էին, վոր նրանք յետ են մնում չարժումից, վոր նրանք չեն հասկանում կուսակցության, իբրև դասակարգի առաջավոր ջոկատի, իբրև նրա դեկավարի և կազմակերպչի, իբրև ամբողջական չարժման ներկայացուցչի խնդիրները, նրա արմատական և դլխավոր նպատակները: Այս նպատակները ժամանակավորապես կարող են յետ մղվել առօրյա սովորական աշխատանքում, սակայն յերբեք չպիտի կորցնեն ուղեցույց աստղի նշանակութիւնը կռվող պրոլետարիատի համար:

Յեվ ահա հասավ այն ժամանակը, յերբ հեղափոխութեան բոցերն ընդգրկեցին ամբողջ յերկիրը, յերբ ամենամոտիկ ապագայում ինքնակալութեան տապալման անխուսափելիութեանը հավատացին ամենից անհավատները: Իսկ սոցիալ-դեմոկրատիային, կարծես թե պատմութեան ինչ վոր հեղնանքով, կրկին անդամ վիճակվում է գործ ունենալ չարժումը յետ քաշելու, նրա խնդիրները նվազեցնելու, նրա լոզունգները մթագնելու նույնպիսի ռեակցիոն, ոպորտունիստական փորձերի հետ: Այդպիսի փորձերի ներկայացուցիչների հետ մղվող բանակռիվը օրվա խնդիրը և դառնում, գործնական խոչոր նշանակութիւն և ստանում (հակառակ շատ ու շատ այնպիսիների, վորոնք չեն հանդուրժում բանակռիվը կուսակցութեան մեջ): Ձե՞ վոր ինչքան ավելի յենք մենք մոտենում մեր քաղաքական մոտավոր խնդիրների անմիջական կենսագործմանն, այնքան ավելի անհրաժեշտ և միանդամայն պարզ հասկանալ այս խնդիրները և այնքան ավելի վճռական են ամեն տեսակ յերկդիմութիւնները, դանցառութիւնները կամ թերամտութիւնները այս հարցում:

Իսկ թերամտութիւնը փիչ չէ նոր իսկրայական կամ (վոր դրեթե նույնն է) ռաբոչեդելոյական[27] բանակի սոցիալ-դեմոկրատների մեջ: Կորչի՛ ինքնակալութիւնը, — դրան համաձայն են բոլորը, վո՛չ միայն բոլոր սոցիալ-դեմոկրատները, այլ և բոլոր դեմոկրատները, մինչև անդամ բոլոր լիբերալները, յեթե հավատանք նրանց ամենայն հայտարարութիւններին: Բայց այդ ի՞նչ է նշանակում: Ինչպես է, ապա, կատարվելու ներկայիս կառավարութեան այդ տապալումը: Ո՞վ է դումարելու այն Հիմնադիր ժողովը, վորն այժմ նաև ասլարաժդենեցները պատրաստ են ցուցադրելու իբրև իրենց լոզունգը՝ ընդունելով ընդհանուր և այլն ընտրողական իրավունքը — (տես. «Освобождение» № 67)[28]: Վո՞րն է լինելու այդպիսի ժողովի ազատ և ամբողջ ժողովրդի չահերն արտահայտող ընտրութիւնների իրական ապահովութիւնը:

Ով վոր իրեն պարզ և ճշտորոշ պատասխան չի տալիս այս հարցերին, նա չի հասկանում «Կորչի՛ ինքնակալութիւնը» լոզունգը: Իսկ այս հարցերն անխուսափելիորեն մեզ մոտեցնում են ժամանակավոր հեղափոխական կառավարութեան հարցին: Դժվար չէ հասկանալ, վոր ինքնակալութեան պայմաններում Հիմնադիր ժողովն իրապես ազատ համաժողովրդական ընտրութիւնները՝ ձայների ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկութեան լիակատար ապահովութեամբ՝ վո՛չ միայն հավատալի չեն, այլև ուղղակի անհնարին են: Յեվ յեթե ի դուր չէ, վոր մենք ինքնակալական կառավարութեան անմիջական տապալման գործնական պահանջն ենք առաջադրում, ապա պետք է պարզենք, թե հատկապես ուրիշ ինչ կառավարութեամբ ենք կամենում փոխարինել տապալելի կառավարութիւնը, կամ՝ այլ կերպ ասած. ինչպե՞ս ենք նայում մենք սոցիալ-դեմոկրատիայի՝ դեպի ժամանակավոր հեղափոխական կառավարութիւնն ունենալիք վերաբերմունքին:

Այս հարցում այժմյան սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստներն, այսինքն՝ նոր իսկրայականները նույնպիսի յեռանդով են յետ քաշում կուսակցութիւնը, ինչպես վոր հինգ տարի առաջ ռաբոչեդելեցները՝ ընդհանրապես քաղաքական կռվի հարցում: Նրանց ռեակցիոն հայացքներն այդ կետի վերաբերմամբ ամենից ավելի ամբողջական կերպով զարգացված են Մարտինովի «Յերկու դիկտատուրա» բրոշյուրում, վորը մի հատուկ ակնարկով հավանել և հանձնարարել է «Իսկրան» (№ 84)[29] և վորի վրա մենք արդեն քանի անդամ մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրավիրել:

Իր բրոշյուրի հենց ուղղակի սկզբում Մարտինովը վախեցնում է մեզ այսպիսի սոսկալի հեռանկարով. — «Յեթե վոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ամբակուռ կազմակերպութիւնը կարողանար «նշանակել և դլուխ բերել համաժողովրդական զինված ապստամբութիւնն» ընդդեմ ինքնակալութեան, ինչի մասին վոր յերազում եր Լենինը, ապա՝ ակնհայտ չէ մթթե՞, վոր հեղափոխութիւնից հետո անմիջապես համաժողովրդական կամքը հենց այդ կուսակցութեանն էլ ժամանակավոր կառավարութիւն կկազմեր: Ակնհայտ չէ մթթե՞, վոր ժողովուրդը հենց այդ կուսակցու-

թյանը կհանձներ հեղափոխության ամենամոտավոր բախտը և վոչ թե վորևե մեկ ուրիչ կուսակցության»:

Այս անհավատալի չե, բայց իրողություն է: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ապագա պատմագիրը զարմանքով պիտի տեսնված լինի հավաստելու, վոր ռուսական հեղափոխության հենց սկզբին սոցիալ-դեմոկրատիայի ժիրոնդիստները[30] վախեցնում էին հեղափոխական պրոլետարիատին այդպիսի հեռանկարով: Մարտինովի բրոշյուրի (և նոր «Իսկրայում» տպված մի շարք հոդվածների և հոդվածների առանձին հատվածների) ամբողջ բովանդակությունը հանգում է այդ հեռանկարի «սարսափների» նկարագրմանը: Նոր իսկրայականների դաղափարական առաջնորդի աչքին յերևում է այստեղ «լիբերալության գրավումը», «յակոբինիզմի», բակունիզմի, տկաչովիզմի և բոլոր այլ սարսափելի իզմերի խրտվիլակը, վորոնցով այնպիսի հաճույքով վախեցնում են քաղաքական մանուկներին հեղափոխական զանազան դայակները: Ցավ հասկանալի չե, այստեղ գործը զլուխ չի գալիս առանց Մարքսից ու Ենգելսից վերցրած «ցիտատների»: Ա՛խ Մարքս ու Ենգելս, ել ինչպե՞ս ասես, վոր չարարված չլինեն նրանց յերկերից քաղած ցիտատները: Դուք հիշո՞ւմ եք, վոր այն ճշմարտությունը, թե՝ «ամեն դասակարգային կռիվը—քաղաքական կռիվ է»,—հիշատակում էին արդարացնելու համար մեր քաղաքական խնդիրների և քաղաքական ագիտացիայի ու պայքարի յեղանակների սահմանափակությունն ու յետամնացությունը*: Այժմ հոգուստ պոչականության տուտ վկա չե դուրս բերվում Ենգելսը: «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատության մեջ նա գրում եր.— «Ամենավատթարն այն ամեններից, ինչ վոր կարող է սպասել ծայրահեղ կուսակցության առաջնորդին, իշխանությանը տիրելու ակամա անհրաժեշտությունն է այն ժամանակ, յերբ շարժումը դեռ ևս բավականաչափ չի հասունացել իր ներկայացրած դասակարգի տիրապետության համար»: Բավական է ուշադրությամբ կարդալ Մարտինովի բերած յերկար ցիտատի այս սկիզբը՝ համոզվելու համար, թե մեր պոչականն ինչպես է աղավաղում հեղինակի միտքը: Ենգելսը խոսում է դասակարգի տիրապետության ապահովող իշխանության մասին: Մի՞թե այդ պարզ չե: Հետևաբար պրոլետարիատի վերաբերմամբ այս մի իշխանություն է, վոր ապահովում է պրոլետարիատի տիրապետությունը, այսինքն՝ պրոլետարիատի դիկտատուրան՝ սոցիալիստական հեղաշրջում կատարելու համար: Մարտինովն այս չի հասկանում՝ իբր հետ չմոթելով ժամանակավոր հեղափոխական կառավարությունը ինքնակալության տապալման եպոխայում և պրոլետարիատի ապահովված տիրապետությունը՝ բուրժուազիայի տապալման եպոխայում, իբր հետ չմոթելով պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրան և բանվոր դասակարգի սոցիալիստական դիկտատուրան: Մինչդեռ՝ Ենգելսի ցիտատի չարունակությունից նրա միտքն ավելի պարզ է դառնում: Այդ հեղ կուսակցության առաջնորդն, — ասում է նա, — պարտավորված է լինելու «պաշտպանել այն դասակարգի շահերը, վոր իրեն ոտար է և ոճիրն աղատել իր դասակարգից փռազցներով, խոստումներով և հավաստիացումներով, թե՝ այլ դասակարգի շահերը իր սեփականն են: Ով վոր մեկ անգամ ընկել է այդ կեղծ դրության մեջ, նա կորած է անդառնալիորեն»:

Ընդգծված տեղերը պարզորոշ ցույց են տալիս, վոր Ենգելսը նախազգուշացնում է հենց այն կեղծ դրությունից, վորը առաջնորդի կողմից «իր» դասակարգի իրական շահերն ու հեղաշրջման դասակարգային իսկական բովանդակությունը չհասկանալու հետևանք է: Ակնառության համար վորձենք պարզ որինակով պարզել այդ միտքը մեր խորհրդատու Մարտինովի համար: Ցերբ վոր նարոդովոլցները, ցանկություն ունենալով ներկայացնելու «աշխատանքի» շահերը, իրենց և ուրիշներին հավատացնում էին, թե դյուղացիների 90 տոկոսը ռուսական ապագա Հիմնադիր ժողովում սոցիալիստ[31] են լինելու, նրանք դրանով ընկնում էին կեղծ դրության մեջ, վորն անխուսափելիորեն պետք է քաղաքական անդառնալի կորստյան հասցներ նրանց, վորովհետև այդ «խոստումներն ու հավաստիացումները» օբյեկտիվ իրականության չէին համապատասխանում: Իրականում նրանք պիտի կենսագործեին բուրժուական դեմոկրատիայի շահերը, «այլ. դասակարգի շահերը»: Արդյոք սկսո՞ւմ է մի բան մտնել ձեր գլուխն, ամենահարգելի Մարտինով: Ցերբ վոր սոցիալիստ-հեղափոխականները պատկերում են Ռուսաստանին անխուսափելիորեն սպասող աղրարային փոխակերպությունները իբրև «սոցիալիզացիա», իբրև «հողի հանձնումը ժողովրդին», իբրև սկիզբ «հավասարար հողագործման»,—նրանք կեղծ դրության մեջ են դնում իրենց, վորպիսին անխուսափելիորեն պետք է քաղաքական անդառնալի կորստյան հասցներ նրանց, վորովհետև հենց այդ փոխակերպությունները, վորոնց նրանք ձգտում են, իրականում ապահովելու յին այլ դասակարգի, գյուղացիական բուրժուազիայի տիրապետությունը, այնպես վոր իրականությունն այնքան ավելի շուտ կհերքի նրանց ֆռազները, խոստումները և հավաստիացումները, վորքան ավելի արագ կկատարվի հեղափոխության զարգացումը: Դուք ելի դեռ չե՞ք հասկանում, թե ինչ է բանը, պատվարժան Մարտինով: Դուք ելի դեռ չեք ըմբռնում, վոր Ենգելսի մտքի էությունն այն է, վոր նշվի հեղաշրջման իրական պատմական խնդիրները չըմբռնելու կործանարար լինելը, վոր Ենգելսի խոսքերը կիրառելի յեն, հետևաբար, նարոդովոլցների և «սոցիալիստ-հեղափոխականների» վերաբերմամբ:

II.

Ենգելսը նշում է պրոլետարիատի առաջնորդների կողմից հեղաշրջման վոչ պրոլետարական բնույթը չհասկանալու վտանգը,

* Նկատի ունի եկոնոմիստներին, մասնավորապես՝ «Ռաբոչեյե Դելո» ժուռնալը: ՀՄԲ.

իսկ Խելոք Մարտինովը յեղրակացնում է այստեղից այն բանի վրանգը, թե պրոլետարիատի ղեկավարները, որ իրենց սահմանադնել են հեղափոխական դեմոկրատիայից թե ծրագրով, թե տակտիկայով (այսինքն՝ ամբողջ պրոպագանդով և ագիտացիայով) և թե կազմակերպությամբ կարող են ղեկավարող դեր կատարել ժողովրդական հանրապետության կազմակերպման մեջ: Ենգելսը վտանգ է տեսնում այն բանում, յերբ առաջնորդն իրար հետ չփոթում է հեղաշրջման կեղծ-սոցիալիստական և ռևոլ-դեմոկրատական բովանդակությունը, իսկ Խելոք Մարտինովն այստեղից այն վտանգն է յեղրակացնում, թե պրոլետարիատը դյուղացիության հետ միասին կարող է դիտակցական ղեկավարություն ստանձնել իրականացնելու դեմոկրատական հանրապետության՝ վորպես բուրժուական տիրապետության վերջին ձև և վորպես լավագույն ձև — պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ մղած դասակարգային կռվի համար[32]: Ենգելսը վտանգ է հայտնում այն կեղծ պրոթյունը, յերբ ասում են մի բան, իսկ անում են մի ուրիշ բան, յերբ խոստանում են մի դասակարգի տիրապետություն, իսկ իրականում ապահովում են այլ դասակարգի տիրապետությունը: Այդ կեղծիքի մեջ Ենգելսը տեսնում է քաղաքական անդաստանալի կորստյան անխուսափելիությունը, իսկ Խելոք Մարտինովն այստեղից կործանման վտանգ է յեղրակացնում այն պատճառով, վոր դեմոկրատիայի բուրժուական կողմնակիցները հնարավորություն չեն տա պրոլետարիատին և գյուղացիությանը՝ իրապես դեմոկրատական հանրապետություն ապահովելու: Խելոք Մարտինովը վշշ մի կերպ չի կարողանում հասկանալ, վոր այդպիսի կործանումը, պրոլետարիատի առաջնորդի կործանումը, հազարավոր պրոլետարների կործանումը հանուն իրապես դեմոկրատական հանրապետության մղած կռվում՝ Փիլիկական կործանում լինելով՝ վշշ մեկն քաղաքական կործանում չե, այլ և՝ ընդհակառակը՝ պրոլետարիատի քաղաքական խոշորագույն նվաճումն է, իր հեգեմոնիայի խոշորագույն կենսագործումն և ազատության համար մղվող կռվում: Ենգելսը խոսում է նրա քաղաքական կործանման մասին, ով անդիտակցորեն չեզոքում է իր դասակարգային ճանապարհից դեպի ուրիշ դասակարգային ուղին, իսկ Խելոք Մարտինովը՝ ակնածանքով մեջ բերելով Ենգելսի ցիտատները, խոսում է նրա կործանման մասին, ով ավելի և ավելի առաջ կգնա դասակարգային ճիշտ ճանապարհով:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի և պրչականության տեսակետների տարբերությունն այստեղ հանդես է գալիս ամբողջ ակնհայտությամբ: Մարտինովն ու նոր «Իսկրան» յետ են քաշվում պրոլետարիատի և գյուղացիության վրա ընկնող ամենից արմատական, դեմոկրատական հեղաշրջման խնդրից, յետ են քաշվում այդ հեղաշրջման սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունից, այդպիսով թեկուզ և անգիտակցաբար, պրոլետարիատի չհաղթը հանձնելով բուրժուական դեմոկրատիայի ձեռքը: Մարքսի այն արտայայտ-

մտքից, թե մենք պետք է պատրաստենք վոչ թե կառավարական, այլ՝ ապագայի ոպոզիցիոն կուսակցությունը, Մարտինովն այն յեղրակացությունն է հանում, թե մենք պրչական ոպոզիցիա պիտի կազմենք ներկայիս հեղափոխության հանդեպ: Սրան է հանգում նրա քաղաքական իմաստությունը: Ահա նրա դատողությունը՝ վորի մասին մտածելու խորհուրդ կտայինք ընթերցողին:

«Պրոլետարիատը չի կարող ստանալ պետության վո՛չ ամբողջ քաղաքական իշխանությունը, վո՛չ էլ նրա մի մասը մինչև վոր նա սոցիալիստական հեղափոխություն չիատարի: Սա — այն անվիճելի սկզբունքն է, վորը բաժանում է մեզ ոպորտունիստական ժռեվիզմից»... (Մարտինով, եջ 58), — և վորը — կավելացնենք մենք մեր կողմից — անվիճելիորեն ապացուցում և պատվելի Մարտինովի անընդունակությունը՝ հասկանալու, թե վորն ինչին է տինովի անընդունակությունը՝ հասկանալու, թե վորն ինչին է վերաբերում: Շփոթել սոցիալիստական հեղաշրջմանը դիմադրող իշխանության մեջ պրոլետարիատի ունեցած մասնակցությունը պրոլետարիատի այն մասնակցության հետ, վոր նա ունի դեմոկրատական հեղափոխության մեջ, այս նշանակում է անհուսալիորեն չհասկանալ, թե ինչի մասին է խոսքը: Այս միևնույն է, թե շփոթել Միլլերանի մասնակցությունը մարդասպան Գալլիֆեյի[33] մինիստրության մեջ Վարլենի մասնակցության հետ հանրապետության պաշտպանող և պաշտպանության հաղորդացած Կոմունայի մեջ:

Սակայն՝ լսեցեք չարունակությունը՝ տեսնելու համար, թե ինչպես է խճճվում մեր հեղինակը:

«Ինչ յեթե այդպես է, ապա պնեերև է, վոր առաջիկա հեղափոխությունը չի կարող իրացնել քաղաքական վշշ մի ձև ամբողջ բուրժուազիայի կամքի հակառակ (ընդգծումը Մարտինովինն է), վորովհետև նա չե լինելու վաղվա որվա տերը»...

Նախ և առաջ՝ ինչի՞ համար է այստեղ խոսվում միմիայն քաղաքական ձևերի մասին, մինչդեռ նախընթաց պարբերության մեջ խոսքը վերաբերում էր պրոլետարիատի իշխանության ընդհանրապես՝ ընդհուպ մինչև սոցիալիստական հեղափոխությունը: Ինչո՞ւ հեղինակը չի խոսում տնտեսական ձևերի իրացման մասին: Վորովհետև նա իրեն համար անկասելի կերպով սոցիալիստական հեղաշրջումից ցատկել և արդեն դեպի դեմոկրատական հեղաշրջումը: Եթե ուրեմն այդպես է (այս էլ յերկրորդը), ապա հեղինակը միանգամայն սխալ է խոսում tout court (պարզ ի պարզ) «ամբողջ բուրժուազիայի կամքի» մասին, վորովհետև դեմոկրատական հեղաշրջման եպոխան հենց տարբերվում է նոր-նոր միայն արտյուտիզմից ազատագրվող բուրժուազիայի զանազան չերտերի կամքի տարբերությամբ: Խոսել դեմոկրատական հեղաշրջման մասին և ահմանափակվել «պրոլետարիատի» և «բուրժուազիայի» պարզ ու մերկ հակադրությամբ — բացարձակ անհեթեթություն է, վորովհետև այդ հեղաշրջումը նշանակում է հասարակության զարգացման հենց այն շրջանը, յերբ նրա մասսան կանգնած է միաստո-

քեն պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, կազմում է մանր-բուրժուական, դյուղացիական ամենալայն շերտը: Այդ հսկայական շերտը, հատկապես հենց այն պատճառով, որ դեմոկրատական հեղաշրջումը դեռ չի կատարված, շատ ավելի ընդհանուր շահեր ունի պրոլետարիատի հետ քաղաքական ձևերի իրացման գործում, քան թե «բուրժուազիան»՝ բառիս իսկական և նեղ իմաստով: Այս պարզ բանը չհասկանալն է, ահա, մարտինովյան խառնաչփոթության գլխավոր աղբյուրներից մեկը:

Այնուհետև.

«...Եթե այսպես է, ապա՝ բուրժուական տարրերի մեծամասնության սոսկ ահաբեկման միջոցով մղվող պրոլետարիատի հեղափոխական կռիվը կարող է հանգել միայն մի բանի, — արտոլյուտիզմի վերականգնման իր սկզբնական ձևով, — և պրոլետարիատն, իհարկե, հնարավոր այդ հետևանքի առջև կանգ չի առնի, նա վատթար վախճանի դեպքում չի հրաժարվի բուրժուազիային ահաբեկելուց, եթե բանը վըճռականապես թեքվելու լինի դեպի այն, որ սահմանադրական կեղծ ղիջումով հնարավոր լինի կենդանացնել և ամրացնել լինքնակալական քայքայվող իշխանությունը: Սակայն՝ լինքնին հասկանալի է, որ պրոլետարիատը կռվի չելնելով, նկատի ունի վոչ այդ վատթարագույն դեպքը»:

Դուք մի բան հասկանո՞ւմ եք, ընթերցո՛ղ: Պրոլետարիատը կանգ չի առնի դեպի արտոլյուտիզմի վերականգնումը տանող ահաբեկման առջև, այն դեպքում, եթե սպառնալիս լինի կեղծ-սահմանադրական ղիջումը: Այդ միևնույն է, թե յես ասեյի.— ինձ սպառնում է յեղիպտական մահապատիժ՝ մենակ Մարտինովի հետ միևրյա խոսակցություն ունենալու ձևով, հենց այս պատճառով վատթար վախճանի դեպքում յես դիմում եմ ահաբեկման, որը կարող է միայն հանգել յեկորյա խոսակցության Մարտինովի և Մարտովի հետ: Չե՞ վոր սա պարզապես չիլափիլավ է, պատվելի՛ս:

Այն միտքը, վոր յերևում եր Մարտինովի աչքին, յերբ վոր նա դրում եր մեր կողմից վերարտադրած անհեթեթությունը, հետևյալն է,— եթե դեմոկրատական հեղաշրջման եպոխայում պրոլետարիատն սկսի ահաբեկել բուրժուազիային սոցիալիստական հեղափոխությամբ, ապա՝ այդ կհասցնի նաև դեմոկրատական նվաճումները թուլացնող ռեակցիայի: Ահա և բոլորը: Իհարկե, խոսք անդամ չի կարող լինել վո՛չ սկզբնական ձևով արտոլյուտիզմը վերականգնելու, վո՛չ էլ պրոլետարիատի պատրաստականության մասին՝ վատթարագույն դեպքում վատթարագույն տիմարություն դիմելու համար: Ամբողջ բանը հանգում է դարձյալ ելի նույն տարրերության, վոր կա դեմոկրատական և սոցիալիստական հեղաշրջման միջև և վորը Մարտինովը մոռանում է, հանգում է գյուղացիական և մանր-բուրժուական այն հսկայական բնակչության գոյության, վորն ընդունակ է ոժանդակելու դեմոկրատական հեղաշրջմանն, իսկ սոցիալիստականին՝ տվյալ մոմենտին ընդունակ չէ:

Ելի ականջ դնենք մեր խելոք Մարտինովին.

«...Ակներև է, վոր բուրժուական հեղափոխության նախօրյակին կռիվը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև վորոշ տեսակետներից պետք է տարբերվի նույն այդ կռվից՝ նրա վերջնական շրջանում, սոցիալիստական հեղափոխության նախօրյակին»...

Այո՛, այդ ակներև է, և յեթե Մարտինովը մտածեր, թե վորն է հատկապես այդ տարբերությունը, ապա հազիվ թե դրած լիներ նախընթաց ցնդաբանությունները, նաև ամբողջ իր բրոշյուրը:

«...Բուրժուական հեղափոխության ընթացքի և յելքի վրա ազդելու համար մղվող կռիվը կարող է արտահայտվել միայն նրանով, վոր պրոլետարիատը հեղափոխական ճնշում կգործադրի լիբերալ և արմատական բուրժուազիայի կամքի վրա, նրանով, վոր հասարակության ավելի դեմոկրատական «ստորին խավերը» կհարկադրեն նրա «վերին խավերին» համաձայնվելու բուրժուական հեղափոխությունն իր տրամաբանական վախճանին հասցնելուն: Այդ կարտահայտվի նրանով, վոր պրոլետարիատը յուրաքանչյուր դեպքում յերկընտրանք կդնի բուրժուազիայի առջև. կամ յետ՝ դեպի արտոլյուտիզմի դեղոցները, վորտեղ նա խեղդվում է, կամ հառա՛ջ ժողովրդի հետ միասին»:

Այս տիրադը — Մարտինովի բրոշյուրի կենտրոնական կետն է: Այստեղ է նրա ամբողջ եյությունը, նրա բոլոր հիմնական «դաշափարները»: Ցավ ի՞նչ են դուրս տալիս այդ խելացի դաշափարները: Նայեցե՛ք. ի՞նչ են հասարակության այդ «ստորին խավերը», այդ «ժողովուրդը», վորի մասին վերջապես մտաբերել է մեր իմաստունը: Այդ հենց այն բազմամիլիոն մանր-բուրժուական քաղաքային և գյուղացիական շերտն է, վորն ըստ ամենայնի ընդունակ է հանդես գալու իբրև հեղափոխական դեմոկրատ: Իսկ ի՞նչ բան է պրոլետարիատի պլյուս գյուղացիության այդ ճնշումը հասարակության վերին խավերի վրա, ի՞նչ բան է պրոլետարիատի այդ շարժումը ժողովրդի հետ միասին դեպի հառաջ՝ հակառակ հասարակության վերին շերտերի: Այդ պրոլետարիատի և գյուղացիության հենց այն հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան է, վորի դեմ մաքառում է մեր պոչականը: Նա վախենում է միայն իր միտքը մինչև վերջը հասցնելուց, վախենում է առարկանեին իրենց իսկական անունը տալուց: Հենց այդ պատճառով նա ասում է խոսքեր, վորոնց նշանակությունը չի ըմբռնում, նա յերկչոտությամբ և ծիծաղելի ու անմիտ սեթևեթանքներով* կրկնում է լոզունգներ, վորոնց իսկական իմաստը նրանից խուսափում է: Հենց այդ պատճառով ել միայն պոչականին է, վոր այդպիսի մի կուրյոզ

* Մենք արդեն նշել ենք այն մտքի անհեթեթությունը, թե պրոլետարիատը կարող է թեկուզ և ամենավատթարագույն դեպքու՛մ յետ մղել բուրժուազիային:

կարող է պատահել նրա վերջնական յեղրակացութիւնների ամենա-«հետաքրքրական» տեղում.— պրոլետարիատի և «ժողովրդի» հեղափոխական ճնշումը հասարակութեան վերին խավերի վրա, սակայն՝ առանց պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի,—մինչև այս անհեթեթութեանը կարող եր հասնել միայն Մարտինովը: Մարտինովն ուզում է, որ պրոլետարիատը սպառնա հասարակութեան վերին խավերին, թե ինքը ժողովրդի հետ առաջ կգնա, բայց՝ որ մեևնույն ժամանակ պրոլետարիատը հատատապես վորոշի իր նոր իսկրայական առաջնորդների հետ միասին առաջ չգնալ դեմոկրատական ճանապարհով, վորովհետև այդ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ճանապարհն է: Մարտինովն ուզում է, որ պրոլետարիատը ճնշում գործադրի վերին խավերի կամքի վրա՝ սեփական կամազրկութիւնը հանդես բերելով: Մարտինովն ուզում է, որ պրոլետարիատը դրժի վերին խավերին «համաձայնվելու»՝ բուրժուական հեղափոխութիւնն իր դեմոկրատական-հանրապետական տրամաբանական վախճանին հասցնելուն, դրժի նրանով, որ արտահայտի իր սեփական յերկյուղը՝ ժողովրդի հետ միասին հաճախ առնելու հեղափոխութեան այդ ավարտումը, իշխանութեան և դեմոկրատական դիկտատուրայի առանձնումը: Մարտինովն ուզում է, որ պրոլետարիատը դեմոկրատական հեղաշրջման մեջ ավանդարդ լինի և հենց այդ պատճառով խլելով Մարտինովը վախեցնում է պրոլետարիատին ժամանակավոր հեղափոխական կառավարութեան մեջ մասնակցելու հեռանկարով, յերեք ապստամբութիւնը հաղողութիւն ունենա:

Ռեակցիոն պոչականութեան մեջ ավելի հեռուն գնալու տեղ չի մնում: Մարտինովին, իրրև սուրբ մարդու, խոնարհ ղլուխ պետք է տալ այն բանի համար, որ նա մինչև վերջը հասցրեց նոր «իսկրայի» պոչական տենդենցները և այդպիսիները ռեյխֆ ու սիսատմատիկ կերպով արտահայտեց ամենահրատապ և արմատական քաղաքական հարցում**:

III.

Վո՞րն է Մարտինովյան խառնաչփոթութեան աղբյուրը: Դեմոկրատական և սոցիալիստական հեղաշրջումն իրար խառնելը, «բուրժուազիայի» և «պրոլետարիատի» մեջև յեղած ժողովրդական միջնակյալ խավի (քաղաքային և գյուղական չքավորութեան մանր-բուրժուական մասսայի, «կիսապրոլետարների», կիսանոտեռատերերի) դերի մոռանալը, մեր մինիմում-ծրագրի իսկական նշանակութիւնը չհասկանալը: Մարտինովը լսել է, որ սոցիալիստին վայել չէ մասնակցել բուրժուական մինիստերութեանը (յերբ որ պրոլետարիատը կռվում է սոցիալիստական հեղաշրջման համար) և շտապել է այդ «հասկանալ» այնպես, թե հեղափոխական բուր-

* Հոդվածն արդեն չարված եր, յերբ մենք ստացանք «Իսկրայի» № 93-ը, որին մենք ծանոթված կլինենք դառնալու[35]:

ժուական դեմոկրատիայի հետ միասին չպետք է մասնակցել հեղափոխական-դեմոկրատական հեղաշրջմանը և այն դիկտատուրային, որն անհրաժեշտ է այդպիսի հեղաշրջման լիակատար իրագործման համար: Մարտինովը կարդացել է մեր մինիմում-ծրագիրը[34], բայց չի նկատել, որ բուրժուական հասարակութեան հողի վրա իրագործելի վերակազմութիւնների խոտիվ առանձնացումը՝ տարբերվելով սոցիալիստական վերակազմութիւններից՝ ունի վոչ միայն մասնական, այլև ամենակենսական, պրակտիկ նշանակութիւն: Նա չի նկատել, որ հեղափոխական շրջանում նա յենթակա է անմիջական սուտպան և գործնական կերարկման: Մարտինովը չի մտածել, որ իշխանակալութեան անկման եպոխայում հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի գաղափարից հրաժարվելը հավասարազոր է մեր մինիմում-ծրագրի իրագործումից հրաժարվելուն: Յեվ իսկապես, միայն վերհիշենք այդ ծրագրում առաջադրված բոլոր տնտեսական և քաղաքական վերակազմութիւնները, հանրապետութեան, ժողովրդի զինման, յեկեղեցին պետութիւնից բաժանելու, լիակատար դեմոկրատական ազատութիւնների, տնտեսական վճռական ռեֆորմների պահանջները: Մի թե՞ պարզ չէ, որ այդ վերակազմութիւնները բուրժուական կարգերի հողի վրա կկրառեն անհնարին և առանց ստորին դասակարգերի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի: Մի թե՞ պարզ չէ, որ խոսքն այստեղ հենց վոչ թե մենակ պրոլետարիատի մասին է՝ ի տարբերութիւն «բուրժուազիայից», այլ «ստորին դասակարգերի» մասին, վորոնք յուրաքանչյուր դեմոկրատական հեղաշրջման ակտիվ շարժիչներն են: Այս դասակարգերն են — պրոլետարիատը պլյուս քաղաքի և գյուղի տառապյակ միլիոնավոր չքավորութիւնը, վորոնք ապրում են մանր-բուրժուական գոյութեան պայմաններում: Անկասկածելի է, որ այդ մասսայի շատ բազմաթիվ ներկայացուցիչներ պատկանում են բուրժուազիային: Սակայն՝ շատ ավելի անկասկածելի է, որ այդ մասսայի շահերը պահանջում են դեմոկրատիզմի լիակատար կենսագործումը և որ ինչքան ավելի է լուսավորված այդ մասսան, այնքան ավելի անխուսափելի է նրա կռիվը այդ լիակատար կենսագործման համար: Սոցիալ-դեմոկրատը յերբեք չի մոռանա, իհարկե, քաղաքի և գյուղի մանր-բուրժուական մասսայի քաղաքատնտեսական յերկակի բնութեան մասին, նա յերբեք չի մոռանա, որ անհրաժեշտ և սոցիալիզմի համար մարտնչող պրոլետարիատի առանձին և ինքնուրույն դասակարգային կազմակերպութիւն ունենալ: Սակայն, նա չի մոռանա նաև այն, որ այդ մասսան «անցյալից զատ՝ ունի նաև ապագա, նախապաշարումներից զատ՝ նաև բանականութիւն», վորը առաջ է մղում նրան դեպի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա, նա չի մոռանա, որ լուսավորութիւնը տրվում է վո՛չ միայն գրքով և նույն իսկ՝ վոչ այնքան գրքով, վորքան հեղափոխութեան բուն ընթացքով, որն աչքեր է բաց անում և քաղաքական չկոլա է տալիս: Այդ-

ալիսի պայմաններում հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի գաղափարից հրաժարվող թեորիան չի կարող այլ անուն ստանալ, բայց յեթե քաղաքական յեռանիացության փիլիսոփայական արդարացում:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատն արհամարհանքով դեն կշպրտի այդօրինակ թեորիան: Նա հեղափոխության նախօրյակին միայն չի նշիլ նրա «վատթարագույն վախճանը»: Վո՛չ, նա կնչի նաև լավագույն վախճանի հնարավորությունը: Նա կյերազի, — նա պարտավոր է յերազել, յեթե միայն նա անհուսալի փիլիսոփա չէ, — այն մասին, որ Ցեվրոպայի հսկայական փորձից հետո, Ռուսաստանում բանվոր դասակարգի յեռանդի աննախընթաց թափից հետո մեզ կհաջողվի այնպես, ինչպես դեռ յերբեք չի հաջողվել, վառել հեղափոխական լույսի ջահը խավար ու ճնշված մասայի առջև, մեզ կհաջողվի, — չնորհիվ այն բանի, որ մենք կանգնած ենք Ցեվրոպայի մի ամբողջ չորք հեղափոխական սերունդների ուսերի վրա, — կենսագործել բոլոր դեմոկրատական ռեֆորմները դեռ ևս չտեսնված լիակատարությամբ, մեր ամբողջ մինիմում-ծրագիրը, մեզ կհաջողվի այնպես անել, որ ռուսական հեղափոխությունը լինի ոչ թե մի քանի ամիսների, այլ՝ շատ տարիների մի չարժում, որ նա հանգի ոչ միայն սոսկ մանր դիջումների՝ տիրող իշխանության կողմից, այլ՝ այդ իշխանության լիակատար տապալմանը: Իսկ յեթե այս հաջողվի, — այն ժամանակ... այն ժամանակ հեղափոխական հրդեհը կբռնացավառի Ցեվրոպան, բուրժուական ռեակցիայից հոգնատանջ յեվրոպական բանվորը վոտքի կկանգնի իր հերթին և ցույց կտա մեզ, թե՝ «այդ ինչպես ե կատարվում»: Այն ժամանակ Ցեվրոպայի հեղափոխական վերելքը հետադաձ ներգործություն կանի Ռուսաստանի վրա, և հեղափոխական մի քանի տարիների եպոխայից հեղափոխական մի քանի տասնամյակների եպոխա կստեղծի, այն ժամանակ... բայց մենք դեռ շատ անգամ կխոսենք այն մասին, թե ինչ կանենք «այն ժամանակ», կխոսենք վոչ թե ժբնևյան անիծյալ հեռուներից, այլ՝ բանվորների հազարավոր ժողովների առջև — Մոսկվայի և Պետերբուրգի փողոցներում, ռուսական «մուժիկների» ազատ ժողովների առջև:

IV.

Նոր «Իսկրայի» փիլիսոփաներներին և նրա «խոհերին իշխողին», մեր բարի ղպիր Մարտինովին այսպիսի յերաղներն, իհարկե, խորթ են և տարօրինակ: Նրանք վախենում են մեր մինիմում-ծրագրի լիակատար իրագործումից, որ լինելու յե հասարակ ու սև ժողովրդի հեղափոխական դիկտատուրայի միջոցով: Նրանք վախենում են իրենց սեփական դիտակցականության համար, վախենում են բերանացի արած (բայց չմտածված) գրքի գրացույցը կորցնելուց, վախենում են, որ ե վիճակի չլինեն տարբերելու իրարից դեմոկրատական վերակազմությունների ճիշտ և համարձակ քայլերը՝ վոչ դասակարգային նարոդնիկական սոցիալիզմի կամ անարխիզմի

ավանտյուրիստական ցատկումներից: Նրանց փիլիսոփայական հոգին արդարացիորեն հուշում է նրանց, որ արագ թափով առաջ գնալու դեպքում ավելի դժվար է տարբերել ճիշտ ճանապարհը և արագ կերպով լուծել բարդ և նոր խնդիրները, քան թե առօրյա, մանր աշխատանքի սովորամոլության պայմաններում: Դրա համար է, որ նրանք բնազդորեն չշնչում են. — յես չկամ, յես չկամ, և թող անցցի հինեն բաժակն այս հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի: Զգուշանալիք հանկարծ, պարոններ! ավելի լավ է դուք եղ առաջ շարժվեք «դանդաղ քայլերով, յերկչոտ զիգզագով»:

Զարմանալի չէ, որ Պարվուսն էլ, որն այնպիսի մեծահոգությամբ պաշտպանում եր նոր իսկրայականներին, քանի դեռ բանը վերաբերում եր առավելապես ավազակությունների և վատակավորների կոոպտացիային, վերջ ի վերջո էլ չդիմացավ այդպիսի ճահճային հասարակության մեջ: Զարմանալի չէ, որ նա այնտեղ ավելի ու ավելի հաճախ սկսեց taedium vitae, կյանքի դարչանք զգալ: Ցեվ նա վերջապես ապստամբվեց: Նա չսահմանափակվեց «հեղափոխությունը կազմակերպելու» այն լոզունգի պաշտպանությամբ, որ մահացու կերպով վախեցրել է նոր «Իսկրային», չսահմանափակվեց այն կոչերով, որ «Իսկրան» տպագրեց առանձին թերթիկներով, թագցնելով «յակոբինյան» սարսափների պատճառով մինչև անգամ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մասին հիշատակումը*: Վո՛չ: Ազատագրվելով ամենաեշտ ակսելռոդյան (կամ լյուքսեմբուրգյա՞ն) պրոցես-կազմակերպության[36] թեորիայի մղձավանջից, Պարվուսը կարողացավ, վերջապես, առաջ գնալ՝ վոխանակ խեցգետինի նման յետ-յետ քաշվելու: Նա չկամեցավ կատարել մարտինովյան և մարտովյան տխմարությունների անհատնում ուղղումների «սիզիֆյան աշխատանքը»[37]: Նա բացե ի բաց հանդես յեկավ (դժբախտաբար, Տրոցկու հետ միասին), պաշտպանելով հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի գաղափարը, ինքնակալության հետո՝ ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատիայի պարտադիր մասնակցության գաղափարը: Հազար անգամ իրավացի յե Պարվուսը, յերբ ասում է, թե սոցիալ-դեմոկրատիան չպիտի վախենա դեպի առաջ արվող համարձակ քայլերից, չպիտի յերկյուղ կրի թշնամուն մխանական «հարվածների» հասցնելուց՝ ձեռք ձեռքի տված հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի հետ, այն պարտադիր (և շատ տեղին հիշատակվող) պայմանով, որ կազմակերպությունները չխառնեն իրար հետ, դատ-դատ գնան, միասին խփեն, չթագցնեն չհերի դանդաղ-

* Զգիտեմ, նկատել են արդյոք մեր ընթերցողները բնորոշ փաստը. Նոր «Իսկրայի» կողմից թերթիկներով հրատարակած մեծաքանակ խլամի մեջ կային և լավ թերթիկներ՝ Պարվուսի ստորագրությամբ: «Իսկրայի» խմբագրությունը յերես դարձրեց ահա հենց այդ թերթիկներից, չկամենալով հիշատակել վո՛չ մեր կուսակցության, վո՛չ հրատարակչության մասին:

նուիթյունը, աչալուրջ լինեն սեփական դաշնակցի նկատմամբ, վորպես թշնամու և այլն:

Բայց վորքան ավելի ջերմ և մեր համակրանքը դեպի պուչկանները յերես դարձրած հեղափոխական սոցիալ-դեմոկրատ բոլոր այդ լոզունգները, այնքան ավելի անհաճելի զարմանք պատճառեցին մեզ Պարվուսի վերցրած մի քանի սխալ նոտաները: Ցավ բծախնդրությունից չէ, վոր մենք նշում ենք այդ փոքրիկ անճշտությունները, այլ վորովհետև ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի: Ամենից վտանգավորը հիմա այն կլիներ, յեթե Պարվուսի ճիշտ դիրքը վարկաբեկվեր հենց իր իսկ սեփական անչրջահայեցողության պատճառով: Հենց այդ՝ առնվազն անչրջահայաց փոքրների թվին են պատկանում Տրոցկու բրոշյուրի համար Պարվուսի դրած քննարկվող հառաջաբանի հետևյալ փոքրները.— «Յեթե մենք կամենում ենք առանձնացնել հեղափոխական պրոլետարիատին քաղաքական այլ հոսանքներից, ապա մենք պիտի կարողանանք հեղափոխական չարժման դլուխը կանգնել դաշտարապես» (այդ ճիշտ է), «լինել ամենից էլ ավելի հեղափոխական»: Այս ճիշտ չէ: Այսինքն՝ այս ճիշտ չէ, յեթե վերցնենք այս դրույթներն այն ընդհանուր իմաստով, վոր դրան տվել է Պարվուսի փոքրը, այդ ճիշտ չէ ընթերցողի տեսակետից, վորը վերցնում է այդ հառաջաբանը, իրրև ինքնամփոփ մի բան՝ ակսիս Պարվուսի կողմից չհիշատակված Մարտինովից և նոր իսկրայականներից: Յեթե նայենք այդ սկզբունքին դիալեկտիկորեն, այսինքն՝ հարաբերական, կոնկրետ և բազմակողմանի հայացքով, չնմանվելով դրական այն հնձյալ արշավողներին՝ վորոնք մինչև անգամ շատ տարիներ հետո կորցում են ամբողջական դրվածքից առանձին փոքրներ և աղճատում են նրանց իմաստը,— այն ժամանակ պարզ կլինի, վոր Պարվուսի կողմից այդ ուղղված է հատկապես պուչկանության դեմ և այդ չափով արդարացի յե (համեմատիր մանավանդ Պարվուսի՝ դրան հաջորդող խոսքերը.— «յեթե մենք յետ մնանք հեղափոխական զարգացումից» և այլն): Բայց ընթերցողը չե՞ վոր չի կարող նկատի ունենալ մենակ պուչկաններին. հեղափոխության վտանգավոր բարեկամների չարքում,— հեղափոխականների բանակից,— պուչկաններից զատ՝ կան նաև բոլորովին այլ մարդիկ, կան «սոցիալիստ-հեղափոխականներ», կան դեպքերի հոսանքով ներքրավող, հեղափոխական փոքրի առջև անոգնական մարդիկ, ինչպես Նաղեժդինները[38], կամ այնպիսիները, վորոնց մոտ հեղափոխական աշխարհահայեցողությունը փոխարինված է բնազդով (Դապոնի նման): Պարվուսը դրանց մասին մոռացել է, և մոռացել է այն պատճառով, վոր նրա չարաքրանքը, նրա մտքի դարգացումը աղատ չէ ընթացել, այլ կաշկանդված է յեղել այն մարտնովչինայի մասին ունեցած հաճելի հիշողությամբ, վորից նա աշխատում է նախազգուշացնել ընթերցողին: Պարվուսի չարագրանքը բավականաչափ կոնկրետ չէ, վորովհետև նա հաշվի չի առնում Ռուսաստանում յեղած այն տարբեր հեղափոխական հոսանքները

ամբողջությունը, վորոնք անխուսափելի յեն դեմոկրատական հեղաշրջման եպոխայում և բնականաբար արտացոլում են հասարակության դասակարգային չանդամատված վիճակն այդպիսի եպոխայում: Անորոշ, յերբեմն նույնիսկ սոցիալիստական ռեակցիոն մտքերն այդպիսի ժամանակ միանգամայն բնականաբար պարուրում են հեղափոխական-դեմոկրատական ծրագրերը, թաղնվելով հեղափոխական փոքրի յեռևում (մտաբերեցեք սոցիալիստ-հեղափոխականներին և Նաղեժդինին, վորը, կարծում, միայն կոչումն և փոխել, «հեղափոխական – սոցիալիստներից»[38] անցնելով նոր «Իսկրայի» կողմը): Իսկ նման պայմաններում մենք, սոցիալ-դեմոկրատներս, յերբեք չենք կարող առաջադրել և չենք առաջադրի «ամենից ավելի հեղափոխական լինելու» լոզունգը: Մենք չե՛նք ել մտածի, վոր ընկնենք դասակարգային հողից կտրված, փրազներով պարծեցող, եժան ու տրորված լոզունգների սիրահար (մանավանդ՝ ազրարային ասպարիզում) դեմոկրատի հեղափոխականության յեռևից: Մենք, ընդհակառակը, միշտ ել քննադատաբար կվերաբերվենք դրան, կմերկացնենք բառերի իսկական նշանակությունը, իդեալականացվող մեծ դեպքերի իսկական բովանդակությունը, ուսուցանելով, վոր դասակարգերի և նրանց ներքին յերանգավորումների ղդոն հաշվառում լինի հեղափոխության ամենատաք մոմենտներին:

Նմանապես և միևնույն պատճառով անճիշտ են Պարվուսի այն դրույթները, թե՝ «ժամանակավոր հեղափոխական կառավարությունը Ռուսաստանում բանվորական դեմոկրատիայի կառավարություն կլինի», վոր «յեթե սոցիալ-դեմոկրատիան կանգնած լինի ռուսական պրոլետարիատի հեղափոխական չարժման դլուխը, ապա այդ կառավարությունը սոցիալ-դեմոկրատական կլինի», վոր սոցիալ-դեմոկրատական ժամանակավոր կառավարություն «ամբողջական կառավարություն կլինի՝ սոցիալ-դեմոկրատական մեծամասնության»: Այդ չի կարող լինել, յեթե խոսենք վոչ թե պատահական, անցողակի եպիզոդների, այլ քիչ թե շատ տևական, պատմության մեջ վորևե հետք թողնելու ընդունակ հեղափոխական դիկտատուրայի մասին: Այդ չի կարող լինել, վորովհետև քիչ թե շատ կայուն կարող է լինել (իհարկե, վո՛չ բացարձակապես, այլ հարաբերականորեն) սոսկ ժողովրդի խոշորագույն մեծամասնության վրա հենվող հեղափոխական դիկտատուրան: Այնինչ՝ ռուսական պրոլետարիատը ներկայումս Ռուսաստանի բնակչության փոքրամասնությունն է կազմում: Հակառակը, ճնշող մեծամասնություն կարող է դառնալ նա միմիայն այն դեպքում, յերբ կմիանա կիսապրոլետարների և կիսատեռատերերի մասսային, այսինքն՝ քաղաքի և դյուղի մանր-բուրժուական չքավորության մասսային: Ցավ հնարավոր ու ցանկալի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի սոցիալական հենարանի այսօրինակ կազմն, իհարկե, կանդրադառնա հեղափոխական կառավարության կազմի վրա, անխուսափելի կդարձնի նրանում հեղափոխական դե-

մոկրատական ամենաբազմապիսի ներկայացուցիչների մասնակցությունը կամ նույնիսկ գերիշխումը: Մեծապես հնարավոր կլինեն այդ առթիվ վորևե իլլյուզիաներ ստեղծելը: Եթե դատարկաբան Տրոցկին ըրում է այժմ (դժբախտաբար, Պարվուսի հետ միասին), թե՝ «Գապոն քահանան կարող եր հանդես գալ միայն մեկ անգամ», վոր «յերկրորդ Գապոնն էլ տեղ չունի», ապա այդ բառապես այն պատճառով է, վոր նա դատարկաբան է: Եթե Ռուսաստանում յերկրորդ Գապոնի համար էլ տեղ լիներ, ապա մեզնում տեղ չեր լինի նաև իսկապես «մեծ», մինչև վերջը հասնող, դեմոկրատական հեղափոխության համար: Մեծ լինելու համար, հիշեցնել տալու համար 1789—1793, այլ վոչ թե 1848—1850 թվականները[39], նա պետք է ակտիվ կյանքի, հերոսական ջանքերի, «պատմական հիմնավոր ստեղծագործության» կոչե վիթխարագույն մասսաները, նրանց բարձրացնի ահավոր խավարից, չեմնվածք խեղճությունից, անհավատալի վայրենությունից և անլուսաշող բթությունից: Նա արդեն բարձրացնում է նրանց, նա կբարձրացնի նրանց, — իր ջղաձգական դիմադրությամբ այդ դործը դյուրացնում է հենց ինքը՝ կառավարությունը, սակայն՝ հասկանալի չե, վոր խոսք անգամ չի կարող լինել այդ մասսաների և նրանց «լինքնուրույն», ժողովրդական և նույնիսկ դեղացիական բազմաթիվ առաջնորդների քաղաքական մտածված դիտակցության, սոցիալ-դեմոկրատական դիտակցության մասին: Նրանք առանց հեղափոխական մի շարք փորձություններ կատարելու չեն կարող հենց այժմ և յեթ՝ սոցիալ-դեմոկրատներ դառնալ վո՛չ միայն խավարամտության պատճառով (հեղափոխությունը լուսավորում է, կրկնում ենք, առասպելական արագությամբ), այլ՝ վորովհետև նրանց դասակարգային դրությունը պրոլետարական չե, վորովհետև պատմական զարգացման օբյեկտիվ արամաբանությունը ներկա մոմենտին նրանց առջև դնում է բնավ վոչ սոցիալիստական, այլ՝ դեմոկրատական հեղաշրջման խնդիրները:

Յեվ այդ հեղաշրջման մեջ ամբողջ յեռանդով մասնակցելու յե հեղափոխական պրոլետարիատը. իրենից դեն չպրտելով վոմանց վորմնդլի պրոչականությունը և մյուսների հեղափոխական ֆռազը, դասակարգային պարզորոշություն և դիտակցականություն մրցելով դեպքերի դլխապտույտ հոդմասարի մեջ, անշեղ ու համարձակ առաջ ընթանալով, վոչ թե յերկյուղ կրելով հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայից, այլ՝ ջերմագին ցանկանալով այն, կավելով հանուն հանրապետության և հանրապետական լիակատար ազատության, հանուն տնտեսական լուրջ ռեֆորմների, վորպեսզի ստեղծի հանուն սոցիալիզմի մղվող կռվի իսկապես լայնարձակ և XX դարին իսկապես արժանավայել մի ռազմաբեմ:

Ապրիլ (մարտ) 1905 թ.

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՐԿՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ[40]

Ա.ՌԱՋԱԲԱՆ

Հեղափոխական մոմենտում չատ դժվար ե համաքայլ ընթանալ դեպքերի հետ, վորոնք զարմանալի չատ նոր նյութ են տալիս հեղափոխական կուսակցությունների տակտիկական լոզունգները դնահատելու համար: Ներկա բրոշյուրը գրված ե Ողեսսայի դեպքերից առաջ*: Մենք «Пролетарий»-ի մեջ (№ 9, «Հեղափոխությունը սովորեցնում ե»)** արդեն նշել ենք, վոր այդ դեպքերը նույնիսկ այն սոցիալ-դեմոկրատներին, վորոնք ստեղծել եյին պրոցես-ապատամբության թեորիան և ժխտում եյին ժամանակավոր հեղափոխական կառավարության պրոպագանդը, ստիպեցին փաստորեն անցնել կամ սկսել անցնել իրենց ընդդիմախոսների կողմը[41]:

Հեղափոխությունն անկասկած սովորեցնում ե այնպիսի արագությամբ ու այնպիսի հիմնավորությամբ, վորոնք քաղաքական զարգացման խաղաղ եպոխաներում անհավատալի յեն թվում: Յեվ հեղափոխությունը — մի բան, վոր առանձնապես կարևոր ե — սովորեցնում ե վոչ միայն դեկավարներին, այլև մասսաներին:

Վորևե կասկածից դուրս ե, վոր Ռուսաստանում հեղափոխությունը բանվորական մասսաներին սոցիալ-դեմոկրատիզմ կսովորեցնի: Հեղափոխությունը դործով կհաստատի սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրն ու տակտիկան, ցույց տալով հասարակական տարբեր դասակարգերի իսկական բնությունը, ցույց տալով մեր դեմոկրատական բուրժուականության իսկական ձգտումները դյուղացիության, վորը հեղափոխական ե բուրժուա-դեմոկրատական վոդով, սակայն իր մեջ թաղցնում և վոչ թե «սոցիալիզացիայի» դաղափարը, այլ դասակարգային մի նոր կռիվ դյուղացիական բուրժուազիայի և դյուղական պրոլետարիատի մեջը: Հին նարոդնիկության հին ցնորքները, վորոնք այնպես բացահայտ յերևում են, որինակ, «սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության»[42] ծրագրի նախագծի մեջ թե Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հար-

* Նկատի յե առնված «Պատմական»[11] դրահանավի ապստամբությունը: (Հեղինակի 1908 թ. հրատարակությանը կցած ծանոթություն: Խմբ.)

** Տես ռուս. Сочинения т. VIII եջ 13—20: Խմբ.

ցում, թե մեր «հասարակության» դեմոկրատականության հարցում և թե դյուղացիական ապստամբության լիակատար հաղթության նշանակության հարցում, — այդ բոլոր ցնորքներն անխնա և վերջնականապես քամուն է տալու հեղափոխությունը: Նա առաջին անգամ քաղաքական իսկական մկրտություն կտա տարբեր դասակարգերին: Այդ դասակարգերը հեղափոխությունից կընդունեն քաղաքական վորոշ կերպարանք ստացած, իրենց ցույց տալով վոչ միայն ծրագրերում և իրենց դաղափարախոսների տակտիկական լոզունգներում, այլև մասսաների քաղաքական բացարձակ դործողության մեջ:

Անտարակույս է, վոր հեղափոխությունը կսովորեցնի մեզ, կսովորեցնի ժողովրդական մասսաներին: Բայց կավոդ քաղաքական կուսակցության համար հարցի էությունն այն է, թե արդյոք մենք կարո՞դ ենք հեղափոխությանը վորևե բան սովորեցնել, կարո՞դ ենք արդյոք ոդավել մեր սոցիալ-դեմոկրատական ուսմունքի ճշտությունից, միակ մինչև վերջ հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի հետ ունեցած մեր կապից, վորպեսզի հեղափոխության վրա պրոլետարական դրոշմ դնենք, վորպեսզի հեղափոխությունը վոչ թե խոսքով, այլ իրականում հասցնենք իսկական վճռական հաղթության, վորպեսզի ուժեղացնենք դեմոկրատական բուրժուազիայի անկայունությունը, կիսատ-պռատությունն ու դավաճանությունը:

Մենք պետք է այս նպատակին ուղղենք մեր բոլոր ջանքերը: Իսկ սրան հասնելը կախված է, մի կողմից, նրանից, թե վորքան ճիշտ ենք գնահատում քաղաքական դիրքը, կախված է մեր տակտիկական լոզունգների ճիշտ լինելուց, իսկ մյուս կողմից, այդ լոզունգներին բանվորական մասսաների մարտական ոևալ ուժով ոժանդակելուց: Մասսայի հետ կապերն ամրապնդելուն և ընդլայնելուն և ուղղված մեր կուսակցության բոլոր կազմակերպությունների և խմբերի սովորական, ամենորյա, ընթացիկ աշխատանքը, պրոպագանդի, ագիտացիայի և կազմակերպման աշխատանքը: Այդ աշխատանքը միշտ անհրաժեշտ է, բայց ավելի քիչ, քան յերբևե կարող է բավարար համարվել հեղափոխական մոմենտում: Այսպիսի մոմենտում բանվոր դասակարգը բնազդորեն մղվում է հեղափոխական բացարձակ յելույթի, և մենք պետք է կարողանանք ճիշտ դնել այս յելույթի խնդիրները, վորպեսզի հետո ինչքան կարելի յե լայնորեն ծանոթացնենք այդ խնդիրներին և հասկանալի դարձնենք: Ցպետք է մոռանալ, վոր մասսայի հետ ունեցած մեր կապի մասին չդիտող հոռետեսությունն այժմ առանձնապես հաճախ է քաղաքական հեղափոխության մեջ պրոլետարիատի ունեցած դերի վերաբերմամբ բուրժուական դաղափարները[43]: Անշուշտ, մենք դեռ շատ ու շատ պետք է աշխատենք բանվոր դասակարգը դաստիարակելու և կազմակերպելու վրա, բայց այժմ հարցի ամբողջ եությունն այն է, թե վորը պետք է լինի այդ դաստիարակման և այդ կազմակերպման քաղաքական դլխավոր ծանրության կենտրոնը: Արդյոք արհեստակցական միությունները ու լեգալ ընկերությունները, թե՞ զինված ապստամբությունը, հեղափոխական բանակ և հեղափոխական կառավարություն ստեղծելու դործը: Թե այս և թե այն դասախարակում ու կազմակերպում են բանվոր դասակարգը: Թե մեկը և թե մյուսն, իհարկե, անհրաժեշտ են: Սակայն այժմ, ներկա հեղափոխության մեջ ամբողջ հարցը հանդում է այն բանին, թե վորը պետք է լինի բանվոր դասակարգի դաստիարակության ու կազմակերպման ծանրության կենտրոնը — առաջինը թե յերկրորդը:

Հեղափոխության յելքը կախված է նրանից, թե բանվոր դասակարգը բուրժուազիային ոժանդակողի՞ դեր կխաղա, վորը հզոր և ինքնակալության վրա արած իր ճնշման ուժով, բայց անզոր է քաղաքականապես, թե՞ ժողովրդական հեղափոխության դեկավարի դեր: Բուրժուազիայի գլխավոր ներկայացուցիչներն հիանալի գիտեմ են այդ: Հենց դրա համար է, վոր «Освобождение»-ն դովաբանում է սոցիալ-դեմոկրատիայի մեջ ակիմովշչինան*, «եկոնոմիզմը», վորն այժմ առաջին չարքն է քաշում արհեստակցական միություններն ու լեգալ ընկերությունները: Հենց դրա համար է, վոր պ. Ստրուվեն եվ վողնուսում է («Освобождение»-ի № 72) ակիմովշչինայի ակզբունքային տենդենցները նոր-իսկրայականության մեջ[44]: Հենց դրա համար է, վոր նա իր զայրույթն է թափում ՌՍԴԲԿ III համադումարի վորոշումների հեղափոխական տակտի նեղության վրա:

Սոցիալ-դեմոկրատիայի տակտիկական ճիշտ լոզունգներն այժմ հատկապես կարևոր նշանակություն ունեն մասսաները դեկավարելու համար: Հեղափոխական ժամանակում ավելի վտանգավոր բան չկա, քան ակզբունքորեն փորձած, դիմացկուն տակտիկական լոզունգների նշանակությունը նվաստացնելը: Որինակ, «Искра»-ն № 104-ում փաստորեն անցնում է սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած իր ընդդիմախոսների կողմը, բայց միևնույն ժամանակ արհամարհանքով է խոսում այն լոզունգների ու տակտիկական վորոշումների մասին, վորոնք գնում են կյանքի առջևից, ցույց են տալիս այն ուղին, վորով շարժումն է ընթանում, մի շարք անհաջողություններով, սխալներով և այլն[45]: Ընդհակառակը, տակտիկական ճիշտ վորոշումներ մշակելը հակայական նշանակություն ունի կուսակցության համար, վորը ցանկանում է մարքսիզմի փորձած, դիմացկուն սկզբունքների ոգով դեկավարել պրոլետարիատին, այլ վոչ թե լոկ դեպքերի պոչից քաշ գալ: ՌՍԴԲԿ III համադումարի և կուսակցության անջատված մասի* կոնֆե-

---

* Ակիմովշչինա — ծայրահեղ աջ եկոնոմիզմն է, վոր իր անունն ստացել է ամենանշանավոր «եկոնոմիստներից» մեկի — Ակիմովի (Մախնովեցի) անունից: ԽՄԲ.

* Ռ. Ս.-Դ. Բ. կ. III համագումարին (Լոնդոն, 1905 թ. մայիս) մասնակցում էին միայն բոլշևիկները: Կանֆերանսում (Ժընև, նույն ժամանակ)՝ միայն մենշևիկները, վորոնք առաջարկվող բրոշյուրի մեջ «նոր-իսկրայականներ» են կոչվում հանախ, վորովհետև չարունակելով հրատարակել «Искра»-ն, նրանք այն ժամանակ իրենց համախոհ Տրոցկու բերանով հայտարարեցին, թե հին ու նոր «Искра»-ի մեջ անդունդ կա[46]: (Հեղինակի ծանոթությունը, կված 1908 թվի հրատարակությանը: ԽՄԲ.)

բանակի բանաձևերում մենք տակտիկական հայացքների ամենաճիշտ, ամենամտածված, ամենալրիվ արտահայտություններն ունենք, որոնք առանձին դրականազեհեների պատահարար ասածները չեն, այլ ընդունված են սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի պատասխանատու ներկայացուցիչների կողմից:

Մեր կուսակցությունը բոլոր կուսակցություններից առաջ է, ունենալով ամենից ընդունված և վորոշակի ծրագիրը: Նա մնացած կուսակցություններին պետք է որինակ ցույց տա նաև իր տակտիկական բանաձևերին խստորեն վերաբերվելու գործում, իրրև հակակշիռ «Освобождение»-ի դեմոկրատական բուրժուազիայի ոպորտունիզմին և սոցիալիստ-հեղափոխականների հեղափոխական ֆռազին, վորոնք միայն հեղափոխության ժամանակ գլխի ընկան, վոր ծրագրի «նախագծով» հանդես գան և առաջին անգամ զբաղվեն այն հարցով, թե իրենց աչքերի առաջ կատարվողն արդյոք բուրժուակա՞ն հեղափոխություն է[42]:

Ահա թե ինչու մենք հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ամենակենսական գործն ենք համարում՝ ջանադրությամբ ուսումնասիրել ՌՍԴԲԿ III համագումարի և կոնֆերանսի տակտիկական բանաձևերը, նրանց մեջ վորոշել մարքսիզմի սկզբունքներից արված չեղումները, մեզ համար պարզել սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի կոնկրետ խնդիրները դեմոկրատական հեղափոխության մեջ: Առաջարկվող բրոշյուրը հենց այդ աշխատանքին է նվիրված: Մարքսիզմի սկզբունքների և հեղափոխության դասերի տեսակետով մեր տակտիկայի ստուգումն անհրաժեշտ է նաև նրան, ով ցանկանում և ունակ կերպով նախապատրաստել տակտիկայի միանականությունը, իրրև հիմք ամբողջ ՌՍԴԲԿ ապագա լիակատար միավորման, այլ վոչ թե միայն համոզարար խոսքերով ամրանալ:

Հուլիս 1905 թ.

I. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԱՄԵՆԱԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մեր ապրած հեղափոխական մոմենտում որվա հերթական հարցը համաժողովրդական Սահմանադիր ժողովի գումարման հարցն է: Այս հարցի լուծման ձևի մասին կարծիքները տարբեր են: Բաղաքական յերեք ուղղություն են նկատում: Ցարական կառավարությունն ընդունում է ժողովրդական ներկայացուցիչների գումարման անհրաժեշտությունը, բայց վոչ մի դեպքում չի ցանկանում թույլ տալ, վոր ժողովը լինի համաժողովրդական և սահմանադիր: Ցեթե հավատանք Բուլիգինյան հանձնաժողովի աշխատանքների մասին յեղած լրագրական տեղեկագրություններին, նա իրրև թե համաձայն է, վոր ժողովը խորհրդակցական լինի[47], ընտրված լինի ազիտացիայի ազատության բացակայության և ընտրությունների նեղ-ցենզային ու նեղ դասային լինելու պայմաններում: Հեղափոխական պրոլետարիատը, վորքան վոր նրան սոցիալ-դեմոկրատիան է ղեկավարում, պահանջում է, վոր իշխանությունը լիովին անցնի սահմանադիր ժողովին, այդ նպատակով ձգտելով վոչ միայն ընդհանուր ընտրական իրավունքի և վոչ միայն ազիտացիայի լիակատար ազատության, այլև, բացի այդ, նաև ցարական կառավարության անհապաղ տապալմանը և այդ կառավարությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությամբ փոխարինելուն: Վերջապես, լիբերալ բուրժուազիան, վոր իր ցանկություններն արտահայտում է այսպես կոչված «սահմանադրական-դեմոկրատական կուսակցության»[48] առաջնորդների բերանով, ցարական կառավարության տապալում չի պահանջում, ժամանակավոր կառավարության լողունգ չի առաջ քաշում, չի պնդում, թե ռեալ յերաշխիքներ լինեն, վոր ընտրությունները կլինեն լիովին ազատ ու կանոնավոր, և վոր ներկայացուցիչների ժողովը կարողանա դառնալ իսկապես համաժողովրդական և իսկապես սահմանադիր: Ըստ գործի եության, լիբերալ բուրժուազիան, վորը «ասլաբաժդենեցների» ուղղության սոցիալական միակ լուրջ հենարանն է, ձգտում է, վոր ցարն ու հեղափոխական ժողովրդի միջև վորքան կարելի յե ավելի խաղաղ գործարք լինի, այն էլ այնպիսի գործարք, վորի ժամանակ ամենից ավելի նրան, բուրժուազիային հասներ իշխանության, ամենից քիչ՝ հեղափոխական ժողովրդին, պրոլետարիատին և գյուղացիության:

Տվյալ մոմենտում այսպես է քաղաքական դրության: Այսպես են քաղաքական այն յերեք գլխավոր ուղղությունները, վորոնք համապատասխանում են արդի Ռուսաստանի սոցիալական յերեք գլխավոր ուժերին: Թե ինչպես են «ասլաբաժդենեցները» իրր-դեմոկրատական ֆռազներով քողարկում իրենց կիսատ-պռատ, ավելի ուղիղ ու պարզ ասած՝ հեղափոխության վերաբերությամբ դավաճանական քաղաքականությունը, մի անգամ չե, վոր մենք խոսել ենք «Пролетарий»-ում (№№ 3, 4, 5)*: Այժմ տեսնենք, թե ինչպես են սոցիալ-դեմոկրատները հաշվի առնում մոմենտի խնդիրները: Այս կողմից գերազանց նյութ են այն յերկու բանաձևը, վոր ամենամոտ անցյալում ընդունել են ՌՍԴԲԿ III համագումարը և կուսակցության անջատված մասի «կոնֆերանսը»: Թե այդ բանաձևերից վորն է ավելի ճիշտ հաշվի առնում քաղաքական մոմենտը և ավելի ճիշտ վորոշում հեղափոխական պրոլետարիատի տակտիկան, — այս հարցը հսկայական նշանակություն ունի, և յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատ, վոր ցանկանում է դիտակցորեն կատարել պրոպագանդիստի, ագիտատորի և կազմակերպչի իր պարտականությունները, պետք է ամենայն ուշադրու-

* Տես ռուս. Сочинения т. VII հետևյալ հոդվածները. «Հեղափոխական կռիվը ու լիբերալ մակլերությունը», էջ 339 — 345, «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները», էջ 346 — 351, «Բուրժուական դավաճանության առաջին քայլերը», էջ 352 — 357 և «Հեղափոխականները» սպիտակ ձեռնոցներով», էջ 358 — 361: ԽՄԲ.

թյամբ պարզի երեն այդ հարցը, բոլորովին մի կողմ թողնելով գործի եությունը չվերաբերող նախապատմությունները:

Կուսակցության տակտիկա ասելով հասկացվում է նրա քաղաքական վարքագիծը, կամ նրա քաղաքական գործնեության բնույթը, ուղղությունը, յեղանակները: Կուսակցական համապատասխան տակտիկական քայլերը ընդունում է, վորպեսզի նոր խնդիրների վերաբերմամբ կամ քաղաքական նոր դրության հանդեպ ճիշտ վորոշի կուսակցության երբև ամրողջության՝ քաղաքական վարքագիծը: Այսպիսի նոր դրություն ստեղծեց Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը, որ բերեց ժողովրդի հսկայական մեծամասնության լիակատար, վճռական և բացարձակ պահանջը ազգային կառավարության: Նոր հարցի եությունն այն է, թե վորոնք են իսկապես համաժողովրդական և իսկապես Սահմանադիր ժողովի դեմարշին, գործնական յեղանակները (այդպիսի ժողովի հարցը տեսականորեն վաղուց արդեն և մյուս բոլոր կուսակցություններից ավելի առաջ պահանջել է սոցիալ-դեմոկրատիան, իր կուսակցական ծրագրում): Եվթե ժողովուրդը պահանջվեր և կառավարության, և մասնավորապես գիտակցել և նորից սահմանելու անհրաժեշտությունը, ապա կառավարության առաջին իրեն նախատակ դրած կուսակցությունն անհրաժեշտաբար պետք է մտածի այն մասին, թե հին, տապալված կառավարությունը ինչպիսի կառավարությունով պետք է փոխարինել: Առաջ և գալիս ժամանակավոր հեղափոխական կառավարության ճոր հարցը: Այս հարցին լրիվ պատասխան տալու համար դիտակից պրոլետարիատի կոնսակցությունը պետք է պարզի 1-ին, ժամանակավոր հեղափոխական կառավարության նշանակությունը կատարվող հեղափոխության և առհասարակ պրոլետարիատի ամրողջ կռվի մեջ. 2-րդ, իր վերաբերմունքը դեպի ժամանակավոր հեղափոխական կառավարություն. 3-րդ, այդ կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության առումով պայմանները. 4-րդ, այդ կառավարության վրա ցածից արվող ճնշման պայմանները, այսինքն՝ յերբ այդ կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատները բացակայում են: Ամենայն այս բոլոր հարցերը պարզելու դեպքում կուսակցության քաղաքական վարքագիծը ամբողջ կրոմից կլինի սկզբունքային, պարզ և ամուր:

Այս տեսանենք, թե այս հարցերն ինչպես է լուծում ՌՍԴԲԿ III համագումարի բանաձևը: Սկսենք նրա լրիվ տեքստը.

«Քանաձև ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին.

Նկատի առնելով,

1) վոր թե պրոլետարիատի անմիջական շահերը և թե սոցիալիզմի վերջնական նպատակների համար մղվող նրա կռվի շահերը պահանջում են հնարավորինս լիակատար քաղաքական ազատություն, ուրեմն և կառավարման ինքնակալ ձևերը դեմոկրատական հանրապետությունով փոխարինել,

2) վոր Ռուսաստանում դեմոկրատական հանրապետության իրականացումը հնարավոր է միմիայն իբրև հետևանք ժողովրդական հաղթական ապստամբության, վորի ոգևորը կլինի ժամանակավոր հեղափոխական կառավարությունը, վորը միակ ընդունակն է ապահովելու նախընտրական ազատության լիակատար ազատությունը և իսկապես ժողովրդի կամքն արտահայտող սահմանադիր ժողով գումարելու ընդհանուր, գաղտնի և ուղղակի ընտրական իրավունքի ու գաղտնի ձայնատվության հիմունքներով,

3) վոր այս դեմոկրատական հեղաշրջումը Ռուսաստանում, նրա սվյալ հասարակական-տնտեսական կարգի որով, չի թուլացնի, այլ կուժեղացնի սերտաեությունը բուրժուազիայի, վորն անխուսափելիորեն կիմորճի վորոշ մոմենտում, վոչ մի քանի ամսով կանդ չառնելով, Ռուսաստանի պրոլետարիատից խլել հեղափոխական ժամանակվոշվանի նվաճումների գլխ հնարավորության ամենի մեծ մասը,—

ՌՍԴԲԿ III համագումարը վորոշում է.

ա) անհրաժեշտ և բանվոր դասակարգի մեջ կոնկրետ պատկերացում տարածել հեղափոխության ամենից ավելի հավանական ընթացքի և այն մասին, վոր նրա վորոշ մոմենտում անհրաժեշտ է, վոր ասպարեզ գա ժամանակավոր հեղափոխական կառավարությունը, վորից պրոլետարիատը պահանջի իրականացնել մեր ծրագրի քաղաքական ու տնտեսական բոլոր ամենամոտակա պահանջները (մինիմում ծրագիրը),

բ) նայած ուժերի և նախնական ճշգրիտ վորոշման չենթարկվող այլ գործոնների փոխհարաբերությանը, թույլատրելի է, վոր ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցեն մեր կուսակցության լիազորները, ինչպես ունենալով անխոնջ կռիվ հակահեղ. բոլոր փորձերի դեմ և պահպանել բանվոր դասակարգի ինքնուրույն չահերը,

գ) ապահով մասնակցության անհրաժեշտ պայման դրելով և կուսակցության խիստ վերահսկողություն իր լիազորների վրա և սոցիալ-դեմոկրատիայի անկախության պահպանությունը, սոցիալ-դեմոկրատիայի, վորը ձգտում է սոցիալիստական լիակատար հեղաշրջման և այդ իսկ պատճառով անհաշտ թշնամի է բուրժուական բոլոր կուսակցություններին.

դ) անկախ այն բանից, թե արդյոք հնարավոր է սոցիալ-դեմոկրատիայի մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը, պետք է պրոլետարիատի ամենալայն խավերում պրոպագանդ մղել, թե անհրաժեշտ է, վոր պահված և սոցիալ-դեմոկրատիայից դեկավարվող պրոլետարիատը ժամանակավոր կառավարության վրա միջտական ճնշում գործ դնե հեղափոխության նվաճումները պահպանելու, ամրապնդելու և ընդլայնելու նպատակով:

II. ԻՆՉ Է ՏԱԼԻՍ ՄԵԶ ՌՍԴԲԿ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՌՍԴԲԿ III համագումարի բանաձևը, ինչպես անունից էլ երևում, ամբողջովին և բացառապես նվիրված է ժամանակավոր հեղափոխական կառավարության հարցին: Այս նշանակում է, որ սոցիալ-դեմոկրատները՝ ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցելը մտնում է այսօրեղ երբևէ հարցի մի մաս: Մյուս կողմից, խոսքը մխիթարյան ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին է և ոչ թե այլ բանի մասին. հետևապես, այստեղ բոլորովին չի մտնում թեկուզ «իշխանությունը նվաճելու» հարցը ընդհանրապես և այլն: Սրդյոք համագումարը ճի՞շտ է վարվել՝ մեջ տեղից հանելով այս վերջին և նման հարցերը: Անշուշտ ճիշտ, որովհետև Ռուսաստանի քաղաքական դրությունը բնավ չի դարձնում այդպիսի հարցերը որևէ հերթական հարց: Ընդհակառակը, ամբողջ ժողովուրդը հերթի է դրել ինքնակալության տապալումը և Սահմանադիր ժողովի գումարումը: Կուսակցության համագումարները լուծման պետք է դնեն վոչ թե այն հարցերը, որոնք տեղի կամ անտեղի շոշափել և այս կամ այն գրականաղեսը, այլ այնպիսիները, որոնք մոմենտի պայմանների մղումով և հասարակական զարգացման օբյեկտիվ ընթացքի հետևանքով քաղաքական լուրջ նշանակություն ունեն:

Այժմյան հեղափոխության և պրոլետարիատի ընդհանուր կուսի մեջ ի՞նչ նշանակություն ունի ժամանակավոր հեղափոխական կառավարությունը: Համագումարի բանաձևը բացատրում է այս, հենց սկզբում նշելով «հնար չեղածին չափ լիակատար քաղաքական ազատության» անհրաժեշտությունը թե պրոլետարիատի անմիջական շահերի տեսակետից և թե «սոցիալիզմի վերջնական նպատակների» տեսակետից: Իսկ քաղաքական լիակատար ազատությունը պահանջում է ցարական ինքնակալությունը փոխարինել դեմոկրատական հանրապետությամբ, ինչպես արդեն ընդունել է մեր կուս. ծրագիրը: Համագումարի բանաձևի մեջ դեմոկրատական հանրապետության լոզունգն ընդգծելը որամաբանորեն և սկզբունքորեն անհրաժեշտ է, որովհետև պրոլետարիատը, իբրև դեմոկրատիայի համար կռվող առաջավոր մարտիկ, հենց լիակատար ազատության և ձգտում. բայց դրանից, այս ընդգծումն է՛լ ավելի նպատակահարմար և տվյալ մոմենտում, քանի որ մեզ նում հենց այժմ «դեմոկրատիզմի» դրոշի տակ հանդես են գալիս մի շարք պատճառականները, այն է՝ այսպես կոչված սահմանադրական-«դեմոկրատական» կամ «տավարաժղենեցական» կուսակցությունը: Հանրապետության հիմնելու համար անպայման անհրաժեշտ է ժողովրդական ներկայացուցիչների ժողով, և այն էլ անպայման համաժողովրդական (ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիմունքներով և գաղտնի ձայնատվությամբ) և սահմանադիր ժողով: Եվ հենց այս էլ ընդունում է համագումարի բանաձևը չարունակության մեջ: Բայց սրանով չի սահմանափակվում: «Իսկապես ժողովրդի կամքն արտահայտող» նոր կարգ սահմանելու համար դեռ բավական չէ ներկայացուցչական ժողովը սահմանադիր անվանել: Պետք է, որ այդ ժողովը «սահմանելու» իշխանություն և ուժ ունենա: Այս դիտակցելով համագումարի բանաձևը չի սահմանափակվում «սահմանադիր ժողովի» ձևական լոզունգով, այլ ավելացնում է այն նյութական պայմանները, որոնցով միայն հնարավոր է, որ այդ ժողովը իր խնդիրը կատարի: Ձավալանց անհրաժեշտ է այդպես նշել այն պայմանները, որոնց ժամանակ խոսքով սահմանադիր ժողովը կարող է դառնալ գործով սահմանադիր ժողով, որովհետև լիբերալ բուրժուազիան ի դեմս սահմանադրական-միապետական կուսակցության, ինչպես մի անգամ չէ, որ նշել ենք, դիտավորյալ կերպով խեղաթյուրում է համաժողովրդական սահմանադիր ժողովի լոզունգը, դառնորկ փոաղ դարձնելով այն:

Համագումարի բանաձևն ասում է, որ նախընտրական ագիտացիայի լիակատար ազատություն ապահովելու և իսկապես ժողովրդի կամքն արտահայտող ժողով գումարելու ընդունակ է միմիայն ժամանակավոր հեղափոխական կառավարությունը, այն էլ այնպիսին, որը ժողովրդական հաղթական ապստամբության օրգան կլինի: Ճի՞շտ է արդյոք այս դրույթը: Ամ մտքով որ անցնի վիճել այս մասին, նա պետք է պնդի, թե ցարական կառավարությունը կարող է ռեակցիային ձեռք չմեկնել, թե նա ընդունակ է ընտրություններին չեզոք լինելու, թե նա կարող է ժողովրդի կամքի իսկական արտահայտման մասին հոգալ: Նման պընդումներն այնքան անհեթեթ են, որ վոչ վոք նրանց բացահայտ պաշտպան չի կանգնի, բայց թագուն, լիբերալ դրոշի տակ այդպիսի պնդումներ անց են կացնում հենց մեր ասլաբաժղենեցները: Վորևե մեկը պետք է գումարի սահմանադիր ժողովը. վորևե մեկը պետք է ապահովի ընտրությունների ազատությունն ու կանոնավորությունը. վորևե մեկը պետք է ուժն ու իշանութ. լրիվ հանձնի այդ ժողովին. միմիայն հեղափոխական կառավարությունը, որ ապստամբության օրգան է հանդիսանում, կարող է բոլորովին անկեղծ ցանկանալ այս բանը և ուժ ունենալ սրա իրականացման համար ամեն ինչ անելու: Ցարական կառավարությունն անխուսափելիորեն կղլմաղրի սրան: Լիբերալ կառավարությունը, որը գործարքի չի մտել ցարի հետ և ամբողջությամբ չի հենվում ժողովրդական ապստամբությանը, ընդունակ չէ վոչ այս բանն անկեղծորեն ցանկանալու և վոչ էլ այս իրականացնելու, նույնիսկ եթե ամենից անկեղծ կերպով ցանկանա: Հետևաբար, համագումարի բանաձևը տալիս է միակ ճիշտ և լիովին հետևողական դեմոկրատական լոզունգը:

Սակայն ժամանակավոր հեղափոխական կառավարության պնահատականը թերի և անճիշտ կլիներ, եթե նկատի չառնվեր դեմոկրատական հեղաշրջման դասակարգային բնույթը: Այս պատ-

մամբ նա պետք է լինի համաժողովրդական Սահմանադիր ժողովի գումարման գործիք: Ըստ գործնեության բովանդակության նա պետք է իրականացնի պրոլետարական դեմոկրատիայի մինիմում-ծրագիրը, իրրև ինքնակալության դեմ ապստամբած ժողովրդի չահերն ապահովող միակ ընդունակ ծրագիրը:

Կարող են առարկել, թե ժամանակավոր կառավարությունը լինելով ժամանակավոր, չի կարող կենսագործել մի դրական ծրագիր, որը տակավին չի ստացել ամբողջ ժողովրդի հավանության: Նման առարկությունը լոկ ռեակցիոներների և «ինքնակալականների» (самодержавщик) սոփեստություն կլիներ: Վոչ մի դրական ծրագիր չկիրառել՝ նշանակում է հանդուրժել փտած ինքնակալության ճորտատիրական կարգերի գոյությունը: Այսպիսի կարգեր հանդուրժել կարող է հեղափոխական գործի դավաճան կոտավարությունը միայն, և վոչ թե ժողովրդական ապստամբության օրգան հանդիսացող կառավարությունը: Ծագը կլիներ, յեթե վորևե մեկը առաջարկեր ժողովների ազատությունը գործով իրականացնելուց հրաժարվել, մինչև վոր այս ազատությունը ճանաչեր Սահմանադիր ժողովը, — այն պատրվակով, թե Սահմանադիր ժողովը կարող է դեռ չճանաչել ժողովների ազատությունը: Նույնպիսի ծագը է՝ առարկությունն անել այն բանի դեմ, վոր ժամանակավոր հեղափոխական կառավարությունն անհապաղ պետք է իրականացնի մինիմում-ծրագիրը:

Նկատենք, վերջապես, վոր բանաձևը ժամանակավոր հեղափոխական կառավարության խնդիրը դնելով մինիմում-ծրագրի իրականացումը, սրանով հենց վերացնում է մաքսիմում-ծրագիրն անհապաղ իրականացնելու, իշխանությունը սոցիալիստական հեղաշրջումի համար նվաճելու կես-անիշխանական մաքերը[49]: Ռուսաստանի տնտեսական զարգացման ասպիճանը (օբյեկտիվ պայման) և պրոլետարիատի լայն մասսաների գիտակցականության ու կազմակերպվածության ասպիճանը (սուբյեկտիվ պայման, վոր անխզելի կապված է օբյեկտիվի հետ) անհնարին են դարձնում բանվոր դասակարգի անհապաղ լիակատար ազատագրումը: Միմիայն ամենատգետ մարդիկ կարող են անտեսել կատարվող դեմոկրատական հեղաշրջման բուրժուական բնույթը. միմիայն ամենամիտ լավատեսները կարող են մոռանալ, թե բանվորների մասսան տակավին վորքան քիչ բան գիտե սոցիալիզմի նպատակների և նրա իրականացման յեղանակների մասին: Իսկ մենք ամենքս համոզված ենք, վոր բանվորների ազատագրումը կարող է միայն բանվորների իրենց գործը լինել. առանց մասսաների գիտակցականության ու կազմակերպվածության, առանց բանվորներին նախապատրաստելու և ամբողջ բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային բացարձակ կռվով դաստիարակելու՝ սոցիալիստական հեղափոխության մասին խոսք լինել չի կարող: Ցեղ է պատասխան անարխիստական այն հակաճառությունների, թե մենք յեսաձգում ենք սոցիալիստական հեղաշրջումը, մենք կասենք. մենք այն չենք յե-

ճառով բանաձևն ավելացնում է, վոր հեղաշրջումը կուժեղացնի բուրժուազիայի տիրապետությունը: Այս անխուսափելի յե ավյալ, այսինքն կապիտալիստական հասարակական-տնտեսական կարգի ժամանակ: Իսկ քաղաքականապես քիչ թե շատ ազատ պրոլետարիատի վրա բուրժուազիայի տիրապետության ուժեղացման հետևանքն անխուսափելիորեն պետք է լինի իշխանության համար նրանց միջև մղվող կատաղի կռիվը, պետք է լինեն բուրժուազիայի հուսահատ փորձերը՝ «պրոլետարիատից խլելու հեղափոխական ժամանակաշրջանի նվաճումները»: Այս պատճառով պրոլետարիատի համար կռվելով ամենից առաջ և ամենի դեմ, չպետք է վոչ մի րոպե մոռանա բուրժուական դեմոկրատիայի խորքերում թագնված նոր հակասությունների ու նոր կռիվը:

Այդպիսով՝ ժամանակավոր հեղափոխական կառավարության նշանակությունը բանաձևի մեր քննած մասում լիովին դնահատված է՝ թե դեպի ազատության ու հանրապետության համար մղվող կռիվն ունեցած վերաբերմունքի տեսակետից, թե դեպի Սահմանադիր ժողովն ունեցած վերաբերմունքի տեսակետից և թե նրա վերաբերմունքի տեսակետից դեպի դեմոկրատական հեղաշրջումը, վորը հող և հարդարում դասակարգային նոր կռվի համար:

Այնուհետև հարց է առաջ գալիս, թե ինչպիսի դիրք պետք է բռնե պրոլետարիատն առհասարակ ժամանակավոր հեղափոխական կառավարության վերաբերմամբ: Համաձայնության բանաձևը սրան պատասխանում է ամենից առաջ կուսակցության խորհուրդ տալով բանվոր դասակարգի մեջ համոզմունք տարածելու, թե ժամանակավոր հեղափոխական կառավարությունն անհրաժեշտ է: Բանվոր դասակարգը պետք է դիտակցի այս անհրաժեշտությունը: Մինչդեռ «դեմոկրատական» բուրժուազիան սովերի մեջ է թողնում ցարական կառավարությունը տապալելու հարցը, մենք այս հարցը պետք է առաջին չարքը քաշենք և պնդենք, թե անհրաժեշտ է ժամանակավոր հեղափոխական կառավարությունը: Այս դեռ քիչ է. մենք պետք է մատնանշենք այդ կառավարության գործողությունների ծրագիրը՝ մեր ապրած պատմական մոմենտի որակտիվ պայմանների և պրոլետարական դեմոկրատիայի խնդիրների համապատասխան: Այդ ծրագիրը մեր կուսակցության[34] ամբողջ մինիմում-ծրագիրն է, ամենամոտակա քաղաքական ու տնտեսական բարեփոխումների ծրագիրը, վորոնք, մի կողմից, լիովին իրագործելի յեն ավյալ հասարակական-տնտեսական հարաբերությունների հողի վրա, և, մյուս կողմից, անհրաժեշտ են դեպի առաջ հաջորդ քայլն անելու, սոցիալիզմն իրականացնելու համար:

Այսպիսով, բանաձևը լիովին պարզում է ժամանակավոր հեղափոխական կառավարության բնույթն ու նպատակը: Այդ կառավարությունն իր ծագումով և հիմնական բնույթով պետք է լինի ժողովրդական ապստամբության օրգան: Իր ձևական կոչ-

տաճղում, այլ դեպի այն տանող առաջին քայլն անում ենք մի ակ հնարավոր յեղանակով, միակ ճշմարիտ ճանապարհով, այն է՝ դեմոկրատական հանրապետության ճանապարհով[32]: Ով ուզում է դեպի սոցիալիզմը գնալ ուրիշ ճանապարհով, բացի քաղաքական դեմոկրատիզմը, նա անխուսափելիորեն հանում է անհեթեթ ու ռեակցիոն յեղրակացությունների՝ թե տնտեսական և թե քաղաքական լսմաստով: Ցեթե այս կամ այն բանվորը համապատասխան մոմենտում մեզանից հարցնե, թե ինչո՞ւ մենք չէրականացնենք՝ մաքսմում–ծրագիրը, մենք կպատասխանենք՝ մատնանշելով այն, թե դեռ ևս սոցիալիզմին ինչքան խորթ են ժողովրդի դեմոկրատորեն տրամադրված մասսաները, թե տակավին ինչպես անզարգացած են դասակարգային հակասությունները, ինչպես անկազմակերպ են դեռ ևս պրոլետարները: Հապա կազմակերպեցեք ամբողջ Ռուսաստանում հարյուր–հազարավոր բանվորներ, միլիոնների մեջ տարածեցեք համակրանք դեպի ձեր ծրագիրը: Փորձեցեք այդ անել՝ չահմանափակվելով հնչուն, բայց դատարկ անարխիստական ֆռազներով, — և դուք խոհուն կտեսնեք, վոր այդ կազմակերպության իրականացումը, այդ սոցիալիստական լուսավորության տարածումը կախված է դեմոկրատական բարեփոխումների հնար յեղածին չափ լրիվ իրականացումից:

Գնանք առաջ: Բանի վոր պարզված է ժամանակավոր հեղափոխական կառավարության նշանակությունը և պրոլետարիատի վերաբերմունքը նրա հանդեպ, հեռևյալ հարցն է ծագում. արդյոք թույլատրելի՞ յե և ի՞նչ պայմաններում է թույլատրելի մեր մասնակցությունը նրան (դործողության վերից): Ի՞նչպես պիտի լինի մեր դործողությունը ցածից: Բանաձևն այս յերկու հարցին ճշգրիտ պատասխաններ է տալիս: Նա վճռականորեն հայտարարում է, վոր սոցիալ–դեմոկրատիայի մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը (դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում, հանրապետության համար մղած կռվի դարաշրջանում) սկզբունքորեն թույլատրելի յե: Այս հայտարարությամբ մենք անդարձ կերպով զատում ենք մեզ թե անարխիստներից, վորոնք այս հարցին սկզբունքորեն բացասաբար են պատասխանում, և թե սոցիալ–դեմոկրատիայի պոչականներից (ինչպես Մարտինովն ու նոր–իսկրայականներն են), վորոնք մեզ այնպիսի դրության հետևանքով են վախեցնում, յերբ այս մասնակցությունը մեզ համար կարող էր անհրաժեշտ լինել*: ՌՍԴԲԿ III համագումարն այս հայտարարությամբ մերժեց նոր «Искра»-ի այն միտքը, իբր սոցիալ–դեմոկրատների մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մելլերանիզմի տարատեսակն է, իբր սկզբունքորեն անթույլատրելի է այդ, իբրև բուրժուական կարգի սրբագործում, և այլն:

---

* Տես «Սոցիալ-դեմոկրատիան ու ժամանակավոր հեղափոխական կառավարությունը» հոդվածը այս գրքում, էջ 22 — 36· ԽՄԲ.

Սակայն ինքնին հասկանալի յե, վոր սկզբունքորեն թույլատրելի լինելու հարցով դեռ ևս չի լուծվում դործնական նպատակահարմարության հարցը: Ի՞նչ պայմաններում և նպատակահարմար կռվի, «վերուստ» մղվող կռվի այդ նոր տեսակը, վոր ճանաչված է կուսակցության համագումարի կողմից: Ինքնին հասկանալի յե, վոր այնպիսի կոնկրետ պայմանների մասին, ինչպիսին ուժերի փոխհարաբերությունն է և այլն, այժմ խոսելու հնարավորություն չկա, և բանաձևը, բնականաբար հրաժարվում է այդ պայմանները նախապես վորոշելուց: Վոչ մի բանական մարդ ներկա մոմենտում հանձն չի առնի վորևե դուշակություն անել մեզ հետաքրքրող հարցի մասին: Կարելի յե և պետք է վորոշել մեր մասնակցության բնույթն ու նպատակը: Բանաձևը հենց այս էլ անում է՝ մասնակցության յերկու նպատակ մատնանշելով· 1) անողոք կռիվ հակահեղափոխական փորձերի դեմ և 2) բանվոր դասակարգի ինքնուրույն չահերի պաշտպանություն: Մինչդեռ լիբերալ բուրժուազիան սկսում են յեռանդագին խոսել ռեակցիայի հոգեբանության մասին (տես՝ պ. Ստրուվեյի ամենից ուսանելի «Բաց նամակը» «Освобождение»-ի № 72–ում)[50], աշխատելով վախեցնել հեղափոխական ժողովրդին և նրան դրդել, վոր ինքնակալության վերաբերմամբ զիջող լինի, — նույն այդ ժամանակ առանձնապես տեղին է, վոր պրոլետարիատի կուսակցությունը հիշեցնի հակահեղափոխության դեմ մղվող ներկա պատերազմի խնդիրը: Վերջին հաշվով մի՛միայն ուժն է լուծում քաղաքական ազատության և դասակարգային կռվի մեծ հարցերը, և մենք պետք է հոդանք այդ ուժի նախապատրաստման, կազմակերպման և նրա ակտիվ, վոչ միայն պաշտպանողական, այլ և հարձակողական ոգտագործման մասին: Ցեվրոպայում Պարիզի Կոմունայից սկսած դրեթե անընդհատ թագավորող քաղաքական ռեակցիայի յերկարատև դարաշրջանը մեզ չատ է մոռեցրել, հարազատ դարձրել միմիայն «ցածից» դործելու մտքին, չափազանց և վարժեցրել միմիայն պաշտպանողական կռիվ դիտելուն: Մենք այժմ, անշուշտ, նոր դարաշրջան ենք մտել· քաղաքական ցնցումների ու հեղափոխությունների շրջանն է սկսվել: Այնպիսի մի ժամանակաշրջանում, ինչպիսին Ռուսաստանն է ապրում, հին չարլոնով սահմանափակվելն անթույլատրելի յե: Պետք է քարոզել վերից կատարվող դործողության դաղափարը, պետք է պատրաստվել ամենայեռանդուն հարձակողական դործողությունների, պետք է ուսումնասիրել այսպիսի դործողությունների պայմաններն ու ձևերը: Համագումարի բանաձևն այսպիսի պայմաններից յերկուսն առաջին չարքն է քաշում. մեկը վերաբերում է սոցիալ–դեմոկրատիայի՝ ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցելու ձևական կողմին (կուսակցության խիստ վերահսկողության իր լիազորների վրա), մյուսը՝ այս մասնակցության բուն բնույթին (վոչ մի րոպե աչքաթող չանել սոցիալիստական լիակատար հեղաշրջման նպատակը):

Ա.յալխով, ամեն կողմից պարզելով կուսակցության քաղաքականությունը «վերուստ» կատարվող դործողության ժամանակ,— կռվի այս նոր, մինչև այժմ գրեթե չտեսնված յեղանակի միջոցին,— բանաձևը նախատեսում է նաև այն դեպքը, յերբ մեզ չի հաջողվի վերից դործել: Ցածից ազդել ժամանակավոր հեղափոխական կառավարության վրա մենք, համենայն դեպս, պարտավոր ենք: Ցածից այսպես ճնշելու համար պրոլետարիատը պետք է զինված լինի,— վորովհետև հեղափոխական մոմենտում բանն առանձնապես արագ է հասնում ուղղակի քաղաքացիական պատերազմի,— և պետք է զեկավարվի սոցիալ-դեմոկրատիայի կողմից: Նրա զինված ճնշման նպատակն է՝ «պաշտպանել, ամրապնդել և ընդլայնել հեղափոխության նվաճումները», այսինքն այն նվաճումները, վորոնց իրագործությունը, պրոլետարիատի չահերի տեսակետից, մեր ամբողջ մինիմում-ծրագիրն իրականացնելու մեջ պետք է կայանա:

Սրանով մենք կվերջացնենք ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին III համաչուսաստանի ընդունած բանաձևի համառոտ վերլուծումը: Ինչպես ընթերցողը տեսնում է, այս բանաձևը պարզում է թե՛ նոր հարցի նշանակությունը, թե՛ պրոլետարիատի կուսակցության վերաբերմունքը դեպի այս հարցը, թե՛ կուսակցության քաղաքականությունը, վոր լինելու է ժամանակավոր հեղափոխական կառավարության ներսից ու դրսից:

Այժմ տեսնենք «կոնֆերանսի» համապատասխան բանաձևը:

III. ԻՆՉ Է «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՑԱՐԻԶՄԻ ՀԱՆԴԵՊ»

«Կոնֆերանսի» բանաձևը նվիրված է «իշխանությունը գրավելու և ժամանակավոր կառավարությանը մասնակցելու» հարցին*: Հարցի հենց այդ դրման մեջ արդեն, ինչպես մենք նշեցինք, խառնաճաղանդություն կա: Մի կողմից՝ հարցը նեղ է դրվում՝ խոսելով միմիայն մեր մասնակցության մասին ժամանակավոր կառավարությանը, այլ վոչ թե ժամանակավոր կառավարության վերաբերմամբ կուսակցության ունենալիք խնդիրների մասին ընդհանրապես: Մյուս կողմից, իրար են խառնվում բոլորովին այլասեռ յերկու հարց՝ մեր մասնակցության հարցը դեմոկրատական հեղաշրջման վերելքից մեկի ժամանակ և սոցիալիստական հեղաշրջման հարցը: Իրոք, «իշխանության նվաճումը» սոցիալ-դեմոկրատիայի կողմից՝ սոցիալիստական հեղաշրջում է իսկապես և չի կարող այլ բան լինել, յեթե այս խոսքերը դործածենք իրենց ուղղակի և սովորական նշանակությամբ: Իսկ յեթե արանք հասկանանք իշխանությունը վոչ թե սոցիալիստական, այլ դեմոկրատական հեղաշրջման համար նվաճելու իմաստով, այս դեպքում էլ ինչ միտք ունի խոսելը վոչ միայն ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցելու, այլ և ընդհանրապես «իշխանության նվաճելու» մասին: Ակնհայտ է, վոր մեր «կոնֆերենսներն» իրենք լավ չեն իմացել, թե ինչի մասին պետք է խոսեն՝ դեմոկրատակա՞ն, թե՞ սոցիալիստական հեղաշրջման մասին: Ով հարցի դրականությանը հետևել է, նա դիտե, վոր այդ խառնաճաղանդության սկիզբը դրել է ընկ. Մարտինովը իր հռչակավոր «Յերկու դիկտատուրա»-յով. նոր-իսկրայականները հաճույքով չեն հիշում հարցի այն դրումը, վոր տրված է (դեռ հունվարի 9-ից առաջ) որինակելի-պռչական այս յերկրի մեջ, բայց կասկածից դուրս է նրա զաղափարական ազդեցությունը կոնֆերանսի վրա:

Բայց մի կողմը թողնենք բանաձևի վերնագիրը: Նրա բովանդակությունը մեզ ցույց է տալիս անհամեմատ ավելի խոր և ավելի լուրջ սխալներ: Ահա նրա առաջին մասը.

> «Յարիզմի հանդեպ հեղափոխության վճռական հաղթությունը կարող է հավերժանալ կամ ժողովրդական հաղթական ապստամբությունից յելած ժամանակավոր կառավարություն սահմանելով, կամ թե այս կամ այն ներկայացուցչական հիմնարկի հեղափոխական նախաձեռնությամբ, վորը, ժողովրդի անմիջական հեղափոխական ճնշման տակ, վորոշում է համաժողովրդական Սահմանադիր ժողով կազմակերպելը»:

Այսպես ուրեմն, մեզ ասում են, թե յարիզմի հանդեպ հեղափոխության վճռական հաղթություն կարող է լինել թե հաղթական ապստամբությունը և թե... ներկայացուցչական հիմնարկի վորոշումը Սահմանադիր ժողով կազմակերպելու մասին: Ի՞նչ է այս. վո՞նց թե: Վճռական հաղթությունը կարող է հավերժանալ Սահմանադիր ժողով կազմակերպելու «վորոշումո՞վ»: Ցեմ այդպիսի «հաղթությունը» «ժողովրդական հաղթական ապստամբությունից յելած» ժամանակավոր կառավարության հետ մի չորքոսանի և դասո՞վ: Կոնֆերանսը չի նկատել, վոր ժողովրդական հաղթական ապստամբությունը և ժամանակավոր կառավարություն սահմանելը նշանակում են հեղափոխության հաղթություն գործով, իսկ Սահմանադիր ժողով կազմակերպելու «վորոշումը» նշանակում է հեղափոխության հաղթություն լոկ խոսքով:

Նոր-իսկրայական-մենշևիկների կոնֆերանսը նույն սխալն է արել, ինչ չարունակ անում են լիբերալները, ասվաբաժդենեցները: Ասվաբաժդենեցները փոազարանում են «Սահմանադիր ժողովի մասին, ամոթխածորեն աչք փակելով ուժն ու իշխանությունը ցարի ձեռքում պահելու հանդեպ, մոռանալով, վոր «սահմանելու» համար հարկավոր է սահմանելու ուժ ունենալ: Կոնֆերանսը մոռացել է նույնպես, վոր ներկայացուցիչների (ինչ սահմանելու յել լինեն) «վորոշումից» մինչև այդ վորոշման իրականացումը դեռ հեռու է: Կոնֆերանսը մոռացել է նույնպես, վոր քանի իշխանությունը ցարի ձեռքում է դանվում, ներկայացուցիչների

* Ընթերցողն այս բանաձևի ամբողջական տեքստը կարող է վերականգնել տվյալ բրոշյուրի 400, 403, 407, 431 և 433 եջերում սրած մեջբերումներով: (Հղրդում տես 51, 56, 61, 81, 85 եջերը: ՀՄԲ.)

(ինչ տեսակի յել լինեն) այս կամ այն վորոշումները նույնպիսի դատարկ ու խղճուկ չաղակրատանք կինան, ինչպիսին եյին 1848 թվականին գերմանական հեղափոխության պատմության մեջ հռչակավոր՝ Ֆրանկֆուրտի պարլամենտի[51] «վորոշումները»: Հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցիչ Մարքսը իր «Հունոսի նոր լրագրի» մեջ հենց նրա համար եր անխնա սարկաստով խարազանում Ֆրանկֆուրտի լիբերալ «տալաբաժդենեցներին», վոր նրանք լավ խոսքեր եյին խոսում, ամեն տեսակ դեմոկրատական «վորոշումներ» եյին ընդունում, ամեն տեսակ պատասխանատվություններ եյին «սահմանում», իսկ գործով իշխանությունը թագավորի ձեռքին եյին թողնում, թագավորը տրամադրության տակ յեղած ռազմական ուժի դեմ ընկնված կռիվ չեյին կազմակերպում: Ցեյ մինչդեռ Ֆրանկֆուրտի տալաբաժդենեցները չազակրատում եյին, թագավորը ժամանակ չահեց, ամրապնդեց իր ռազմական ուժերը, և հակահեղափոխությունը, հենվելով ռեալ ուժին, գլխովին ջարդեց դեմոկրատներին իրենց հիանալի «վորոշումների» հետ միասին:

Կոնֆերանսը վճռական հաղթության հավասարեցրեց այն, ինչի մեջ հենց հաղթության վճռական պայմանը չկար: Ի՞նչպես կարող եյին մեր կուսակցության հանրապետական ծրագիրն ընդունող սոցիալ-դեմոկրատները այդ սխալը գործել: Այդ տարորինակ յերևույթը հասկանալու համար պետք է դիմել III համագումարի այն բանաձևին, վոր վերաբերում է կուսակցության անջատված մասին*: Այս բանաձևում մատնանշվում է, վոր մեր կուսակցությունը մեջ «եկոնոմիզմին հարազատ» հոսանքներ են վերակենդանանում: Մեր «կոնֆերենսները» (յերևի դուբ չե, վոր նրանք Մարտինովի դաշտապարական ղեկավարության տակ են) հեղափոխության մասին բոլորովին նույն վոգով են դատում, ինչպես եկոնոմիստներն եյին դատում քաղաքական կռվի կամ 8-ժամյա աշխատանքային ռեժիմ մասին: Եկոնոմիստներն իսկույն և յեթ «վուլերի թեորիան» եյին գործի դնում. 1) կռիվ իրավունքների համար, 2) քաղաքական ագիտացիա, 3) քաղաքական կռիվ, — կամ՝ 1) 10-ժամյա աշխատանքային որ, 2) 9-ժամյա, 3) 8-ժամյա: Թե այդ «տակտիկա-պրոցեսից» ինչ հետևանքներ եյին ստացվում, բավականաչափ հայտնի յե ամենքին: Այժմ մեզ առաջարկում են հեղափոխությունն ել առաջուց վուլերի բաժանել սիրուն կերպով. 1) ցարը ներկայացուցչական հիմնարկ ե դումարում, 2) այդ ներկայացուցչական հիմնարկը «ժողովրդի» ճնշման տակ «վորոշում ե» Սահմանադիր ժողով կազմակերպել, 3)... յերրորդ վուլի մասին մենշևիկները դեռ մի խոսքի չեն յեկել. նրանք մոռացել են, վոր ժողովրդի հեղափոխական ճնշումը ցարիզմի հակահեղափոխական ճնշմանն ե հանդիպում, և վոր, այդ պատճառով, կամ «վորոշումն» ե չիրականացած մնում, կամ գործը վճռում ե, այնուամենայնիվ, ժողովրդական ապստամբության հաղթությունը կամ պարտությունը: Կոնֆերանսի բանաձևը ճիշտ և ճիշտ եկոնոմիստների այսպիսի դատողության ե նմանում. բանվորների վճռական հաղթանակը կարող ե հավերժանալ կամ 8-ժամյա աշխատանքային որը հեղափոխականորեն իրականացնելով, կամ 10-ժամյա աշխատանքային որը չնորհելով և 9-ժամյայի անցնելու «վորոշումով»... Իսկ և իսկ նույնը:

Մեզ կարող են, դուցե, առարկել թե բանաձևի հեղինակները նկատի չեն ունեցել ապստամբության հաղթությունը հավասարեցնել ցարի դումարած ներկայացուցչական հիմնարկի «վորոշմանը», թե նրանք կամեցել են միայն նախատեսել կուսակցության տակտիկան այս և այն դեպքում: Մենք դրան կպատասխանենք. 1) բանաձևի տեքստը ներկայացուցչական հիմնարկի վորոշմանը ուղղակի և աներկիմիտ «ցարիզմի վրա հեղափոխության տարած վճռական հաղթություն» անունն ե տալիս: Դուցե թե անփութությամբ գրելու հետևանք ե այդ, դուցե այդ կարելի լինի ուղղել արձանագրությունների հիման վրա, բայց քանի դեռ ուղղված չէ, այդ խմբագրության իմաստը միայն մեկ բան կարող ե լինել, և այդ իմաստն ամբողջովին ասվաբաժդենեցական ե: 2) Մոքի «տալաբաժդենեցական» այն ընթացքը, վորի մեջ ընկել են բանաձևի հեղինակները, անհամեմատ ավելի ցայտուն յերևում ե նոր-իսկրա-

---

* Բերում ենք այս բանաձևի ամբողջական տեքստը[52]. «Համագումարը հավատում ե, վոր ՌՍԴԲԿ մեջ եկոնոմիզմի դեմ մղած պայքարի ժամանակից սկսած մինչև այժմ զանազան չափով և զանազան հարաբերությամբ պահպանվել են նրան հարազատ յերանգները, վորոնք բնորոշվում են պրոլետարական կռվի մեջ դիտակցականության տարրերի նշանակության նսեմացման ընդհանուր տենդենցով, սրանք տարերայնության տարրերին յենթարկելով: Այդ յերանգների ներկայացուցիչները կազմակերպչական հարցում տեսականորեն ցուցադրում են կազմակերպություն–պրոցեսի[36] սկզբունքը, վորը կուսակցության պլանաչափ ձևակերպված աշխատանքին անհամապատասխան ե, իսկ գործնականում չատ դեպքերում կուսակցության դիսցիպլինայից չեղվելու սիստեմ են կիրառում, իսկ ուրիշ դեպքերում, կուսակցության ամենից ավելի փիլ պիտակից մասին ուղղելով բնորական սկզբունքի լայն, ռուս իրականության օբյեկտիվ պայմանները հաշվի չառնող կիրառման քարոզը, աշխատում են խախտել կուսակցական կապի՝ ներկայումս միակ հնարավոր հիմունքները: Տակտիկական հարցերում նրանք ձգտում են ցույց տալիս նեղացնելու կուսակցական աշխատանքի թափը, դեմ արտահայտվելով լիբերալ-բուրժուական կուսակցությունների վերաբերմամբ լիակատար անկախ կուսակցական տակտիկային, դեմ արտահայտվելով այն բանին, վոր մեր կուսակցության համար հնարավոր և ցանկալի յե ժողովրդական ապստամբության մեջ դեկավարող դեր ստանձնել, դեմ արտահայտվելով նրան, վոր կուսակցությունը ինչ պայմաններում ուղում ե լինի՝ ժամանակավոր դեմոկրատական–հեղափոխական կառավարությանը մասնակցի:

Համագումարը կուսակցության բոլոր անդամներին առաջարկում է ամենուրեք դաղափարական յերանգուն պայքար մղել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներից արվող այդպիսի մասնակի չեղումների դեմ, բայց միաժամանակ դանում է, վոր նման հայացքներին այս կամ այն կերպ հարող

անձերի մասնակցությունը կուսակցական կազմակերպություններին այն անհրաժեշտ պայմանով է թույլատրելի, վոր նրանք, ընդունելով կուսակցական համագումարներն ու կուսակցական կանոնադրությունը, ամբողջովին հպատակվեն կուսակցական կարգապահությանը: (Հեղինակի ծանոթությունը, վոր կցված է 1908 թ. հրատարակությանը: ՄՄԲ.)

յականների զրական ուրիչ յերկերի մեջ: Որինակ, Թիֆլիսի կոմիտեյի «Սոցիալ-դեմոկրատ» որգանում (վրացերեն. դուրս գալով և «Искра»-ի № 100-ում) «Զեմսկի սաբորը և մեր տակտիկան» հոդվածը մինչև այն տեղն և հասնում, վոր ասում է, թե «մեր այն «տակտիկան», վորով մենք գործողության կենտրոն ենք ընտրում «Զեմսկի սաբորն» (մեր կողմից ավելացնենք, վոր այդ Զեմսկի սաբորի գումարման մասին դեռ ստույգ բան չգիտենք) «մեզ համար ավելի ոգտավետ է», քան զինված ապստամբության և ժամանակավոր հեղափոխական կառավարության հիմնելու «տակտիկան»[53]: Մենք ներքևում այդ հոդվածին ելի կվերադառնանք: 3) Չի կարելի վորևե բանով դեմ լինել, վոր նախապես քննարկվի կուսակցության տակտիկան թե հեղափոխության հաղթության դեպքում և թե նրա պարտության դեպքում, թե ապստամբության հաջողության դեպքում և թե այն դեպքում, յերբ ապստամբությունը բոցավառվելով լուրջ ուժ դառնալ չկարողանա:

Հնարավոր է, վոր ցարի կառավարությանը հաջողվի, լիբերալ բուրժուազիայի հետ գործարքի մտնելու նպատակով, ներկայացուցչական ժողով գումարել, — III համագումարի բանաձևը, նախատեսելով այդ, խոսում է ուղղակի «կեղծավոր քաղաքականության» մասին, «կեղծ-դեմոկրատիզմի» մասին, «այսպես կոչված Զեմսկի սաբորի նման ժողովրդական ներկայացուցչության ծաղրանկարային ձևերի» մասին*: Բայց բանն ել հենց այն է, վոր այդ չի սպառում ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին յեղած բանաձևի մեջ, վորովհետև ժամանակավոր հեղափոխական կառավարությանը չի վերաբերում այդ: Այս դեպքը յետ է քաշում ապստամբության և ժամանակավոր հեղափոխական կառավարություն հիմնելու պրոբլեմը, ձևափոխում է այն և այլն: Իսկ խոսքն այժմ այն մասին չէ, վոր ամեն տեսակի կոմբինացիաներ հնարավոր են, վոր հնարավոր է թե հաղթություն, թե պարտություն, թե ուղիղ, և թե զարտուղի ճանապարհներ, — այլ խոսքն այն մասին է, վոր սոցիալ-դեմոկրատին թույլատրելի չէ իսկական հեղափոխական ճանապարհի մասին բանվորների ունեցած պատկերացման մեջ խառնաշփոթություն մտցնել, վոր անթույլատրելի յե ամբարժեքներով վճռական հաղթություն անվանել այն, ինչի մեջ վոր հաղթության հիմնական պայմանը չկա: Հնարավոր է, վոր մենք 8-ժամյա աշխատանքային որն ել միանգամից չստանանք, այլ զարտուղի յերկար ճանապարհով միայն. բայց ի՞նչ կասեք դուք այն մարդու մասին, վորը բանվորների հաղթություն կանվանի պրոլետարիատի այնպիսի անուժություն, այնպիսի թուլություն, վորոնց ժամանակ նա ի վիճակի չի լինի խանգարելու քաշքշուկները, ձգձգումները, չարչիություն, դավաճանությունը և ռեակցիան: Հնարավոր է, վոր ռուսական հեղափոխությունը վերջանա «սահմանադրական վիժվածքով», ինչպես մի անգամ «Вперед»-ն ասաց*, բայց մի՞թե այդ կարող է արդարացնել այն սոցիալ-դեմոկրատին, վորը վճռական կռվի նախորյակին կոչեր այդ վիժվածքը «ցարիզմի վրա վճռական հաղթանակ» անվանել: Վատթարագույն դեպքում հնարավոր է, վոր վոչ միայն հանրապետություն չհաճենք, այլ սահմանադրությունն ել յերևութական, «չխպովյան»[54] լինի, բայց մի՞թե ներելի կլիներ սոցիալ-դեմոկրատին մթագնել մեր հանրապետական լոզունգը:

Իհարկե, նոր-իսկրայականները դեռ չեն հասել այս լոզունգը մթագնելուն: Բայց թե հեղափոխական վոգին ինչ աստիճան է թռել հեռացել նրանցից, ինչ աստիճան է ռեզոնյորությունը նրանցից վարագուրել մոմենտի մարտական խնդիրները, այս բանը հատկապես ակնառու յերևում է նրանից, վոր նրանք իրենց բանաձևի մեջ հենց հանրապետության մասին բան ասելն են մոռացել: Այս անհավանական է, բայց իրողություն է: Սոցիալ-դեմոկրատիայի բոլոր լոզունգները հաստատված են, կնքված, պարզաբանված,

* Ահա այս բանաձևի տեքստը, հեղաշրջման նախորյակին կառավարության տակտիկայի նկատմամբ:

«Ուշադրության առնելով, վոր կառավարությունը մեր ապրած հեղափոխական ժամանակաշրջանում ինքնապահպանման նպատակով, ուժեղացնելով դեռ խավորապես պրոլետարիատի դիտակից տարրերի դեմ ուղղված ռեպրեսիաները, միաժամանակ 1) փորձում է գլխումների և ռեֆորմների խոստումներով քաղաքականապես անարդյունավետ բանվոր դասակարգը և դրանով նրան հեղափոխական կռվից յետ պահել, 2) նաև նպատակով գլխումների իր կեղծավոր քաղաքականությունը կեղծ դեմոկրատական ձևերով և պարուրում, սկսելով հանձնաժողովների ու խորհրդակցությունների համար բանվորներին իբրև ներկայացուցիչներ ընտրելու հրավեր կարդալուց և վերջացնելով այսպես կոչված Զեմսկի սաբորի նման ժողովրդական ներկայացուցչության ծաղրանկարային ձևը սահեցնելով, 3) կազմակերպում է այսպես կոչված սև հարյուրակներ և հեղափոխության դեմ և հանում առհասարակ ժողովրդի բոլոր ռեակցիոն, անդիտակից կամ ցեղային ու կրոնական առեւտրությամբ կուրացած տարրերը, —

ՌՍԴԲԿ III համագումարը վորոշում է կուսակցական բոլոր կազմակերպություններին առաջարկել՝

ա) մերկացնելով կառավարական գիշերւաների ռեակցիոն նպատակները, պրոպագանդի և ագիտացիայի մեջ մի կողմից ընդգծել նրանց հարկադրված լինելությունը և մյուս կողմից՝ պրոլետարիատին բավարարող բարենորոգումներ առանց անհնարինության ինքնակալության համար.

բ) ոգտվելով նախընտրական ագիտացիայից, բանվորներին պարզել կառավարության նման ձևնարկումների իսկական իմաստը և ապացուցել, վոր պրոլետարիատն անհրաժեշտ է հեղափոխական ճանապարհով գումարել Սահմանադիր ժողով ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիմունքներով և գաղտնի ձայնատվությամբ.

գ) պրոլետարիատը կազմակերպել՝ հեղափոխական ճանապարհով անհապաղ իրականացնելու համար 8-ժամյա աշխատանքային որը և բանվոր դասակարգի մյուս հերթական պահանջները.

դ) զինված հակահարված կազմակերպել սև հարյուրակների և առհասարակ կառավարության դեհավարած ռեակցիոն այլ ասրերի յերկրին: (Հեղինակի ծանոթությունը, վոր կցված է 1908 թ. հրատարակությանը: ՄՄԲ.):

* Ժրևի «Вперед» թերթն սկսեց լույս տեսնել 1905 թ. հունվարին, իբրև կուսակցության բոլշևիկական մասի որգան: Հունվարից մինչև մայիսը 18 համար լույս տեսավ: Մայիսից «Вперед»-ի փոխարեն սկսեց լույս տեսնել «Пролетарий»-ն, իբրև ՌՍԴԲԿ կենտրոնական որգան, ՌՍԴԲԿ III համագումարի վորոշման համաձայն (այդ համագումարը կայացավ Լոնդոնում մայիսին. մենշևիկները չգնացին, իրենց «կոնֆերանսը» սարքելով Ժրևում): (Հեղինակի ծանոթությունը, վոր կցված է 1908 թ. հրատարակությանը: ՄՄԲ.):

մանրամասնած են կոնֆերանսի զանազան բանաձևերում, չի մոռացված նույնիսկ ձեռնարկությունների բանվորների ավագների ու պատգամավորների ընտրությունը, — միայն թե ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին յեղած բանաձևի մեջ առիթ չի յեղել հանրապետության մասին հիշելու:

Խոսել ժողովրդական ապստամբության «հաղթության» մասին, ժամանակավոր կառավարություն հիմնելու մասին և չմատնանշել, թե այդ «քայլերն» ու ակտերն ինչ առընչություն ունեն հանրապետություն նվաճելու հետ, — նշանակում է բանաձև դրել վոչ թե պրոլետարիատի կռիվը ղեկավարելու, այլ պրոլետարական չարժման պոչից ընդընդալու համար:

Հանրագումար. բանաձևի առաջին մասը 1) բոլորովին չի պարզել ժամ. հեղափ. կառավարության նշանակությունը հանրապետության համար մղվող կռվի տեսակետից և իրոք համաժողովրդական և իսկապես Սահմանադիր ժողովի ապահովման տեսակետից. 2) ուղղակի խառնակնթորություն է մտցրել բրիատի դեմոկրատական դիտակցության մեջ, ցարիզմի դեմ տանելիք հեղափոխության վճռական հաղթությանը հավասարեցնելով իրերի մի այնպիսի դրություն, յերբ հենց իսկական հաղթանակի հիմնական պայմանը ղեռ չկա:

IV. ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԼՈՒԾԱՐՔՆ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Անցնենք բանաձևի հետևյալ մասին.

«...Թե այս և թե այն դեպքում այդպիսի հաղթանակը հեղափոխական ղարաչրջանի նոր փուլի սկիզբ կլինի:

Այն խնդիրը, վոր հասարակական ղարգացման օբյեկտիվ պայմանները՝ տարերայնորեն առաջադրում են այդ նոր փուլին, դասային–մխակտական ամբողջ ուժմի վերջնական լուծարքն է քաղաքականապես ազատագրված բուրժուական հասարակության տարրերի մյուս յեղող փոխադարձ կռվի պրոցեսում, մի կռիվ վոր նրանք մղում են իրենց սոցիալական չահերն իրականացնելու և անմիջականորեն իշխանությունը տիրելու նպատակով:

Ուստի և ժամանակավոր կառավարությունը, վորը կրտանձներ այդ, իր պատմական բնույթովը, բուրժուական հեղափոխության խնդիրների իրականացումը, պետք է վոր, կարդավորելով ազատագրվող ազգի հակադիր դասակարգերի մեջ փոխադարձ կռիվը, վոչ միայն առաջ չարժեր հեղափոխական ղարգացումը, այլ և կռիվը նրա այն գործոնների դեմ, վորոնք սպառնում են \կապիտալիստական հասարակարգի հիմունքներին»:

Կանգ առնենք այս մասի վրա, վորը բանաձևի ինքնուրույն մի բաժինն է: Մեր արտադրած դասողությունների հիմնական միտքը նույնն է, ինչ վոր չարադրված է համագումարի բանաձևի 3–րդ կետում: Սակայն յերկու բանաձևի այդ մասը համեմատելիս իսկույն հետևյալ արմատական տարբերությունն է աչքի ընկնում նրանց միջև: Համագումարի բանաձևը, մի յերկու բառով բնորոշելով հեղափոխության հասարակական–տնտեսական հիմունքը, ամբողջ ուշադրությունը փոխադրում է վորոշ նվաճումների համար մղվող՝ դասակարգերի խաղորոշ կռվի վրա և առաջին չարքն է քաշում պրոլետարիատի մարտական խնդիրները: Կոնֆերանսի բանաձևը, յերկարորեն, մշուշապատ և խճողած յեղանակով նկարագրելով հեղափոխության հասարակական – տնտեսական հիմունքը, չատ մոլին է խոսում վորոշ նվաճումների համար մղվող կռվի մասին և բացարձակապես ստվերի մեջ է թողնում պրոլետարիատի մարտական խնդիրները: Կոնֆերանսի բանաձևը խոսում է հասարակության տարրերի միջև փոխադարձ մղվող կռվի պրոցեսում հին կարգի լուծարքի մասին: Համագումարի բանաձևն ասում է, թե մե՛նք, վոր պրոլետարիատի կուսակցություն ենք, պետք է կատարենք այդ լուծարքը, թե իսկական լուծարքը միմիայն դեմոկր. հանրապետություն հիմնելն է, թե այդ հանրապետությունը մենք պետք է նվաճենք, թե մենք նրա և լիակատար ազատության համար վոչ միայն ինքնակալության դեմ, այլ և բուրժուազիայի դեմ կկռվենք, յերբ նա փորձի (իսկ նա անպայման կփորձի) մեզնից խլել մեր նվաճումները: Համագումարի բանաձևը վորոշ դասակարգ կռվի չ կոչում մերձավորագույն ճչտորոշ նպատակի համար: Կոնֆերանսի բանաձևը դասում է տարբեր ուժերի փոխադարձ կռվի մասին: Մեկ բանաձևն արտահայտում է ակտիվ կռվի հոգեբանությունը, մյուսը՝ պասիվ հանդիսատես լինելու հոգեբանությունը. մեկը համակված է կենդանի գործնեության կոչով, մյուսը՝ մեռելային ռեզոնյորությամբ: Յերկու բանաձևն էլ հայտարարում են, թե տեղի ունեցող հեղաչրջումը մեզ համար առաջին քայլն է միայն, վորին կհետևի յերկրորդը, բայց այստեղից մեկ բանաձևն այն յեզրակացությունն է հանում, թե հենց դրա համար էլ հարկավոր է ավելի չուտափուլթ անցնել այդ առաջին քայլը, ավելի չուտափուլթ լուծարքի յենթարկել այն, նվաճել հեղափոխությունը, անխնայորեն ճնշել հակահեղափոխությունը և հող ստեղծել յերկրորդ քայլի համար: Իսկ մյուս բանաձևն, այսպես ասած, այդ առաջին քայլի առատարան նկարագիրն է դուրս տալիս և (ներեցեք դեհեհիկ արտահայտությունս) նրա առիթով մոքեր է լվլում: Համագումարի բանաձևն առնում է մարքսիզմի հին և հավիտենապես նոր մոքերը (դեմոկրատական հեղաչրջման բուրժուական բնույթի մասին), իրրև առաջարան կամ առաջին նախադրյալ թե դեմոկրատական և թե սոցիալիստական հեղաչրջման համար կռվող առաջավոր դասակարգի առաջավոր խնդիրների համար: Կոնֆերանսի բանաձևը՝ հենց այնպես էլ առաջարանից դենը չի անցնում, այն ծամծմելով և նրա առիթով խելքին դող տալով:

Այս տարբերությունը հենց այն տարբերությունն է, որ վաղվանից առաջ մարքսիստներին չերկու թևի չի բաժանում՝ ռեֆորմական թևի ու մարտական թևի՝ լեզալ մարքսիզմի անցած ժամանակներում, և անտեսական թևի ու քաղաքական թևի՝ ակտիվ մասսայական չարժման դարաշրջանում: Ընդհանրապես դասակարգային և հատկապես քաղաքական կռվի անտեսական խոր արմատների մասին մարքսիզմի ճիշտ նախադրյալից եկոնոմիստներն այն յուրահատուկ յեղրակացությունն եյին հանում, թե պետք է կրճատել գործնական քաղաքական կռվին և կասեցնել նրա զարգացումը, նեղացնել նրա թափը, նվաստացնել նրա խնդիրները: Քաղաքական գործունեությունն եյին հանում, այն է՝ ինչքան խորն են հիմա մեր կռվի արմատները, այնքան մենք ավելի լայն, ավելի համարձակ, ավելի վճռական, ավելի մեծ նախաձեռնությամբ պետք է վարենք այդ կռիվը: Մեր առջև այժմ էլ նույն վեճն է, միայն այլ պարագաներում, ձևափոխված կերպարանքով: Այն նախադրյալներից, թե դեմոկրատական հեղաչրջումը դեռ բնավ սոցիալիստական չե, թե նա միմիայն չունևորներին չե, որ «հետաքրքրում» է, թե նրա ամենախոր արմատները գտնվում են բուրժուական ամբողջ հասարակության՝ անդիմադրավելի կարիքների ու պետքերի մեջ,—այդ նախադրյալներից մենք յեղրակացնում ենք, որ առաջավոր դասակարգն այնքան ավելի համարձակ պետք է դնի իր դեմոկրատական խնդիրները, այնքան ավելի սրությամբ պետք է մինչև վերջն ասի դրանք, առաջադրի հանրապետության անմիջական լոզունգը, քարոզի ժամանակավոր հեղափոխական կառավարության անհրաժեշտությունը, հակահեղափոխության դաղափարը անհրաժեշտության դաղափարը, հակահեղափոխությունն անխնայորեն ճղմելու անհրաժեշտության դաղափարը: Իսկ մեր ընդդիմախոսները, նոր-իսկրայականները նույն նախադրյալներից այն են յեզրակացնում, թե պետք չե դեմոկրատական յեղրակացություններն ասել մինչև վերջ, թե կարելի յե գործնական լոզունգների չարքում հանրապետությունը չառաջադրել ել, թե կարելի յե չքարոզել ժամանակավոր հեղափոխական կառավարության անհրաժեշտության դաղափարը, թե Սահմանադիր ժողով գումարելու վորոշումն ել կարելի յե վճռական հաղթություն անվանել, թե կարելի յե առաջ չքաշել հակահեղափոխության դեմ կռվելու խնդիրն իբրև մեր ակտիվ խնդիր, այլ խեղդել այն՝ «փոխադարձ կռվի պրոցեսի» մշուշապատ (և, ինչպես իսկույն կտեսնենք, անճիշտ ձևակերպված) մատնանշումով: Այս քաղաքական դործիչների լեզու չե, այս ինչ-վոր արխիվային առենակալների լեզու յե:

Ցավ դուք վորքան ավելի ուշադիր դիտեք նոր-իսկրայական բանաձևի առանձին ձևակերպումները, այնքան ավելի ակնառու կլինեն ձեր դեմ նրա մատնանշված հիմնական առանձնահատկությունները: Մեզ ասում են, որինակ, «քաղաքականապես ազատագրված բուրժուական հասարակության տարրերի մեջև մղվող փոխադարձ կռվի պրոցեսի» մասին: Մի քանի բերելով այն նյութը, վորի

մասին դրվել է բանաձևը (ժամանակավոր հեղափոխական կառավարություն), մենք տարակուսանքով հարց ենք տալիս. յերե՞ խոսվում է փոխադարձ կռվի պրոցեսի մասին, հապա ի՞նչպես կարելի յե լուծություն պահպանել բուրժուական հասարակությունը քաղաքականապես ստրկացնող տարրերի մասին: Արդյոք «կոնֆերենսները» կարծում են, թե մի անգամ վոր հեղափոխության հաղթությունն յենթադրեցին, նման տարրերն արդեն անհետացա՞ն: Նման միտքը կլիներ առհասարակ արատավոր և մանավանդ քաղաքական մեծագույն միամտություն, քաղաքական կարճատեսություն: Հակահեղափոխության վրա հեղափոխության տարած հաղթությունից հետո հակահեղափոխությունը չի անհետանա, այլ, ընդհակառակը, նոր, ավելի կատաղի կռիվ կսկսի անխուսափելիորեն: Մեր բանաձևը նկատելով հեղափոխության հաղթության ժամանակի խնդիրների վերլուծությանը, մենք պետք է ահագին ուշադրություն նվիրենք հակահեղափոխական հարձակումը յետ մղելու խնդիրներին (ինչպես այդ արված է համագումարի բանաձևում) և վոչ թե մարտական կուսակցության այդ մերձավորագույն, կենսական, քաղաքական հրատապ խնդիրները խեղդենք այն դատողությունների մեջ, թե ինչ է լինելու այժմյան հեղափոխական դարաշրջանից հետո, ինչ է լինելու այն ժամանակ, յերբ արդեն առկա կլինի «քաղաքականապես ազատագրված հասարակություն»: Ինչպես եկոնոմիստները քաղաքականությունը եկոնոմիկային յենթարկելու մասին ընդհանուր ճշմարտությունները մատնանշելով սքողում եյին իրենց՝ քաղաքական հրատապ խնդիրներ չհասկանալը, այնպես էլ նոր-իսկրայականները քաղաքականապես ազատագրված հասարակության ներսում տեղի ունեցող կռվի մասին ընդհանուր ճշմարտություններ մատնանշելով սքողում են իրենց անհասկացողությունն այդ հասարակության քաղաքականապես ազատագրելու հեղափոխական հրատապ խնդիրների վերաբերյալ:

Վերցնենք «դասային-միապետական ամբողջ ռեժիմի վերջնական լուծարք» արտահայտությունը: Միապետական կարգի վերջնական լուծարքը մեր լեզվով կոչվում է դեմոկրատական հանրապետություն սահմանել: Բայց մեր բարի Մարտինովին և իր յերկրպագուներին այսպիսի արտահայտությունը չաա հասարակ ու պարզ է թվում: Նրանք անպայման ուզում են «խորացնել» և «ավելի խելոք» յեղանակով ասել: Ստացվում են, մի կողմից, խորամտության ծիծաղելի զալարումներ: Իսկ մյուս կողմից, լոզունգի փոխարեն ստացվում է նկարագրություն, առաջ գնալու առույգ կռվի փոխարեն ստացվում է ինչ-վոր մելամաղձոտ հետադարձ հայացք: Կասես թե մեր առջև վոչ թե կենդանի մարդիկ են, վորոնք ահա հենց հիմա, այս րոպեիս ուզում են հանրապետության համար կռվել, այլ ինչ-վոր փայտացած մումիաներ, վորոնք sub specie aeternitatis* հարցը դիտում են plusquamperfectum-ի** տեսակետից:

* Հավիտենականության տեսակետից: ՄՄԲ.
** Վաղակատարի: ՄՄԲ.

Առաջ գնանք. «...ժամ. կառավարությունը... կատանձները այդ... բուրժուական հեղափոխության խնդիրների իրականացումը»... Ա՛յ այստեղ մխանգամից հայտնի յեղավ, վոր մեր «կոնֆերենսներն» աչքաթող են արել մի կոնկրետ հարց, վորը պրոլետարիատի քաղաքական ղեկավարների առաջ է կանգնել: Ժամանակավոր հեղափոխական կառավարության կոնկրետ հարցը նրանց տեսադաշտից չքացել է, տեղի տալով այն ապագա կառավարության հարցին, վորոնք պետք է իրականացնեն բուրժուական հեղափոխության խնդիրներն ընդհանրապես: Յեթե դուք ցանկանում եք հարցը «պատմականորեն» քննել, հապա ուշադիր յեվրոպական յերկրի որինակը ձեզ ցույց կտա, վոր հենց մի չարք, վոչ «ժամանակավոր», կառավարություններ են իրականացրել բուրժուական հեղափոխության պատմական խնդիրները, վոր նույնիսկ հեղափոխությանը հաղթած կառավարություններն այնուամենայնիվ հարկադրված են յեղել իրականացնելու այդ պարտված հեղափոխության պատմական խնդիրները[55]: Բայց «ժամանակավոր հեղափոխական կառավարություն» ամենևին այն չի կոչվում, ինչի մասին դուք խոսում եք. այսպես կոչվում է հեղափոխական դարաշրջանի կառավարությունը, վորն անմիջականորեն փոխարինել է տապալված կառավարությանը և հենվում է ժողովրդի ապստամբության և վոչ թե ժողովրդից յեղած ինչ-վոր ներկայացուցչական հիմնարկների վրա: Ժամանակավոր հեղափոխական կառավարությունը հեղափոխության անհապաղ հաղթության համար, հակահեղափոխական փորձերն անհապաղ յետ մղելու կռվի որգանն է, և վոչ յերբեք բուրժուական հեղափոխության պատմական խընդիրների իրականացման որգանն առհասարակ: Թողնենք, պարոններ, վոր ապագա պատմագիրներն ապագա «Русская старина»-ում վորոշեն, թե բուրժուական հեղափոխության իրոք ինչ խնդիրներ ենք իրականացրել մենք ձեզ հետ կամ թե այս կամ այն կառավարությունը, — այս բանը կարող են 30 տարի հետո յել անել, իսկ մենք այժմ պետք է լողունգներ ու գործնական ցուցումներ տանք հանուն հանրապետության կռվելու համար և այդ կռվի մեջ պրոլետարիատի ամենայեռանդուն մասնակցության համար:

Հիշված պատճառներով անբավարար են բանաձևի մեր արտադրած մասի վերջին դրույթներն էլ: Ծայրահեղ անհաջող կամ, առնվազն, անհարմար և այն արտահայտությունը, թե ժամանակավոր կառավարութ. պետք է վոր «կարդավորեր» հակադիր դասակարգերի փոխադարձ կռիվը. մարքսիստները չպետք է գործադրեյին այդպիսի լիբերալ-ավաքսաժղնիենգական ձևակերպում, վորն առիթ է տալիս կարծելու, թե հնարավոր են կառավարություններ, վորոնք վոչ թե դասակարգային կռվի որգան են, այլ նրա «կարգավորիչն» են... Կառավարությունը պետք է վոր «վոչ միայն առաջ չարժեր հեղափոխական դարգացումը, այլ և կռվեր նրա այն գործոնների դեմ, վորոնք սպառնում են կապիտալիստական կարգի հիմունքներին»: Այս «գործոնն» է հենց այն պրոլետարիատը, վորի անունից խոսում է բանաձևը: Փոխանակ ցույց տալու, թե պրոլետարիատը ավյալ մոմենտում ինչպես պետք է «առաջ չարժի հեղափոխական դարգացումը» (ավելի առաջ չարժի, քան կոնստիտուցիոնալիստական բուրժուազիան կկամենար գնալ), փոխանակ խորհուրդ տալու, վոր պատրաստվենք վորոշ յեղանակով կռվելու բուրժուազիայի դեմ, յերբ նա հեղափոխական նվաճումների դեմ կդառնա, — սրա փոխարեն մեզ տալիս են պրոցեսի ընդհանուր նկարագիրը, վորը մեր գործնեության կոնկրետ խնդիրների մասին վոչինչ չի ասում: Նոր-իսկրայականները՝ իրենց մտքերը չափազանցելու յեղանակը հիշեցնում է Մարքսի կարծիքը (Ֆոյերբախի[56] վերաբերյալ նրա հայտնի թեզիսների մեջ) հին, դիալեկտիկային խորթ մատերիալիզմի մասին: Փիլիսոփաները տարբեր ձևով միայն մեկնաբանում եյին աշխարհը, — ասում եր Մարքսը, — բայց բանը հենց այն է, վոր այս աշխարհը փոխենք: Այդպես էլ նոր-իսկրայականներն կարող են տանելի կերպով նկարագրել և բացատրել նրանց աչքի առաջ կատարվող կռվի պրոցեսը, բայց բնավ չեն կարող այդ կռվի մեջ ճիշտ լողունգը տալ: Յեվ անդադրմ չեր անելով, բայց վատ ղեկավարելով, նրանք պատմության մատերյալիստական հասկացողությունն ստորացնում են, արհամարհելով այն գործոն, ղեկավար և ուղղություն տվող դերը, վոր պատմության մեջ կարող են և պետք է խաղան հեղաշրջման նյութական պայմանները գիտակցած և առաջավոր դասակարգերին ղեկավ կանգնած կուսակցությունները:

V. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋ ՇԱՐԺԵԼ»

Բերում ենք բանաձևի հետագա հատվածը.

«Այդպիսի պայմաններում սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի հեղափոխության ամբողջ ընթացքում պրոլետի դերը պահպանելու, վորը նրա համար լավագույն կերպով կապահովի հողի հեղափոխությունն առաջ չարժելու հնարավորությունը, նրա ձեռքերը չի կապի բուրժուական կուսակցությունների անհետևողական ու չահախնդիր քաղաքականության դեմ մղած կռվում և կպահպանի նրան բուրժուական դեմոկրատիայի մեջ լուծվելուց:

Այս պատճառով սոցիալ-դեմոկրատիան չպետք է իրեն նպատակ դնի գրավել կամ կիսել իշխանությունը ժամանակավոր կառավարության մեջ, այլ պետք է ծայրահեղ հեղափոխական ոպոզիցիայի կուսակցություն մնա»:

Մեզ շատ ու շատ դուր է գալիս այդպիսի դերը բռնելու խորհուրդը, վոր լավագույն կերպով է ապահովում հեղափոխությունն առաջ չարժելու հնարավորությունը: Մենք կցանկանայինք միայն, վոր այս բարի խորհրդից գոնե առկա լիներ նաև ուղղակի ցուցում, թե սոցիալ-դեմոկրատիան հենց այժմ, քաղաքական ավյալ սիտուացիայում; դատողությունների, յենթադրությունների, խո-

ակցութիւնների և ժողովրդական ներկայացուցիչների դումարման նախագծերի դարաշրջանում լինչպես պետք է հեղափոխությունն առաջ չարժի: Կարո՞ղ է արդյոք այժմ հեղափոխությունն առաջ չարժել նա, ով չի հասկանում ժողովրդի և ցարի միջև նելիք «համաձայնության» ամբաժդեհնեցական թեորիայի վտանգավորությունը, ով հաղթության և անվանում Սահմանադիր ժողով գումարելու լոկ «վորոշումը», ով խնդիրը չի դնում ժամանակավոր հեղափոխական կառավարության անհրաժեշտության դաշտի պրոպագանդը, ով սովերի մեջ և թողնում դեմոկրատական հանրապետության լոզունգը: Այդպիսի մարդիկ հեղափոխությունը իրոք շարժում են յետ, վորովհետև գործնական–քաղաքականի կողմից նրանք կանգ են առել ամբաժդեհնեցական դիրքի մակարդակի վրա: Ի՞նչ չահ, յեթե նրանք ընդունեն լինքնակալության հանրապետությունով փոխարինել պահանջող ծրագիրը, յերբ հեղափոխական մոմենտում կուսակցության ներկա և մերձավորագույն խնդիրները վորոշող տակտիկական բանաձևի մեջ հանրապետության համար մղվող կռվի լոզունգը բացակայում է, Ձե՞ վոր հենց ամբաժդեհնեցական դիրքը, կոնստիտուցիոնալիստական բուրժուազիայի դիրքն այժմ փաստորեն նրանով է բնորոշվում, վոր համաժողովրդական Սահմանադիր ժողով գումարելու վորոշումը վճռական հաղթություն է նկատում, իսկ ժամանակավոր հեղափոխական կառավարության և հանրապետության մասին խոհեմությամբ լռություն են պահպանում: Վորպեսզի հեղափոխությունն առաջ չարժենք, այսինքն անցնենք այն սահմանից, մինչև ուր նրան միապետական բուրժուազիան և չարժում, պետք է ակտիվ կերպով առաջադրենք, ընդգծենք, առաջին չարքը քաշենք բուրժուազիայի դեմոկրատիայի «անհեռանալիությունը» բացառող լոզունգները: Ներկա մոմենտում միմիայն յերկու այդպիսի լոզունգ կա 1) ժամանակավոր հեղափոխական կառավարություն և 2) հանրապետություն, վորովհետև միապետական բուրժուազիան համաժողովրդական Սահմանադիր ժողովի լոզունգը վորդեգրել է (տես Ազատագրության Միության ծրագիրը)[48] և վորդեգրել է հենց հեղափոխությունը դավելու համար, հեղափոխության լավագույն հաղթությունը չթույլատրելու համար, խոչոր բուրժուազիայի և ցարիզմի միջև վերերկային դործարքը կնքելու համար: Ձեվ մենք ամա տեսնում ենք, վոր կոնֆերանսի այդ յերկու, հեղափոխության իսկապես առաջ չարժելու ընդունակ լոզունգներից հանրապետության լոզունգը բոլորովին մոռացել է, իսկ ժամանակավոր հեղափոխական կառավարության լոզունգն ուղղակի հավասարեցրել է համաժողովրդական Սահմանադիր ժողովի ամբաժդեհնեցական լոզունգին, «հեղափոխության վճռական հաղթություն» անվանելով թե այս և թե այն:

Այո, այս է անտարակուսելի իրողությունը, վորը, մենք համոզված ենք, Ռուսաստանի սոցիալ–դեմոկրատիայի ապագա պատմագրի համար նշանաձող կծառայի: Սոցիալ դեմոկրատների

կոնֆերանսը 1905 թ. մայիսին ընդունում է մի բանաձև, վորը դեղեկ խոսքեր է ասում դեմոկրատական հեղափոխության առաջ չարժելու անհրաժեշտության մասին և վորն իրոք այն յետ է չարժում, վորը մի պատեհական բուրժուազիայի դեմոկրատական լոզունգներից այն կողմը չի դնում իրականում:

Նոր–իսկրայականները սկզբում են մեզ հանդիմանել այն բանի համար, վոր մենք արհամարհում ենք բուրժուական դեմոկրատիայի մեջ պրոլետարիատի լուծվելու վտանգը[57]: Կկամենայինք տեսնել այն մարդուն, վորը հանձն կառներ այդ հանդիմանությունը տեղալ ՌՍԴԲԿ III համագումարի ընդունած բանաձևերի տեքստի հիման վրա: Մենք կպատասխանենք մեր ընդդիմախոսներին. բուրժուական հողի վրա գործող սոցիալ–դեմոկրատիան չի կարող քաղաքականությանը մասնակցել, մեկ այս, մեկ այն առանձին դեպքում չդնալով բուրժուական դեմոկրատիայի հետ կողք–կողքի: Ձեվ մեր ու ձեր միջև տարբերությունն այն է, վոր մենք գնում ենք հեղափոխական և հանրապետական բուրժուազիայի կողքին, չմիախառնվելով նրան, իսկ դուք գնում եք լիբերալ ու միապետական բուրժուազիայի հետ, նույնպես չմիախառնվելով նրան: Ահա թե բանի ինչումն է:

Կոնֆերանսի անունից տված՝ ձեր տակտիկական լոզունգները նույնանում են «սահմանադրական–դեմոկրատական» կուսակցության, այսինքն միապետական բուրժուազիայի կուսակցության լոզունգների հետ, և դուք չեք նկատել, չեք դիտակցել այդ զուգադիպությունը և այդպիսով վտանգին կտած եք մեծացել ասպարեզ բաժդեհնեցականների պաչից:

ՌՍԴԲԿ III համագումարի անունից տրված մեր տակտիկական լոզունգները նույնանում են դեմոկրատական–հեղափոխական և հանրապետական բուրժուազիայի լոզունգների հետ: Ռուսաստանում այդպիսի բուրժուազիան և մանր բուրժուազիան տակավին ժողովրդական խոշոր կուսակցության չեն կազմել*:

Բայց այդպիսի կուսակցության տարրերի դոյության մասին կասկածել կարող է միմիայն նա, ով զազափար չունի, թե այժմ ինչ է կատարվում Ռուսաստանում: Մենք մտադիր ենք (ռուսական մեծ հեղափոխության հաջող ընթացքի դեպքում) ղեկավարել վոչ մի այն սոցիալ–դեմոկրատական կուսակցության կազմակերպած պրոլետարիատին, այլ և այդ մանր բուրժուազիային, վորն ընդունակ է մեզ հետ կողք–կողքի ընթանալու:

Կոնֆերանսն իր բանաձևով անդիտակցորեն իջնում է մինչև լիբերալ և միապետական բուրժուազիայի մակարդակը: Կուսակցության համագումարն իր բանաձևով գիտակցորեն իր մակարդակին և բարձրացնում վոչ թե մակլերության ընդունակ, այլ կռվի ընդունակ հեղափոխական դեմոկրատիայի տարրերին:

* «Սոցիալիստ–հեղափոխականներն» ավելի չուտ լինտելիգենտական տերրորիստական խումբ են, քան այդպիսի կուսակցության սաղմ, թեպետ և այդ խմբի գործնեության օբյեկտիվ նշանակությունը հանգած է հենց հեղափոխական հանրապետական բուրժուազիայի խնդիրները իրականացնելուն:

Այսպիսի տարբեր ամենից ավելի շատ կան դյուղացիության մեջ: Հասարակական խոշոր խմբերն ըստ իրենց քաղաքական տենդենցների բաշխելիս մենք առանց մեծ սխալ անելու կարող ենք հեղափոխական և հանրապետական դեմոկրատիան դյուղացիության մասսայի հետ նույնացնել, — սարդ է, նույն խմասում, նույն վերապահումներով և հասկանալի պայմաններով, ինչպես վոր դասակարգը սոցիալ-դեմոկրատիայի հետ կարելի յե նույնացնել: Մենք, ուրիշ խոսքով, մեր յեղրակացությունները կարող ենք ձևակերպել հետևյալ արտահայտություններով. կոնֆերանսի իր բաղաքական համագգային* լողունգներով հեղափոխական մոմենտում անդիտակցորեն իջնում է մինչև կալվածատերերի մասսայի մակարդակը: Կուսակցության համաձայնարն իր քաղաքական հայացքներով դյուղացիական մասսան բարձրացնում է մինչև հեղափոխական մակարդակը: Ոչ այս յեղրակացությունից պատճառով մենք կմեղադրե պարադոքսամոլության համար, նրան մենք մարտակոչ կանենք. թող նա հերքի այն դրույթը, թե յեթե մենք ուժ չենք ունենա հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու, յեթե հեղափոխությունը կավարտվի ասվարաժդենիականորեն տրած այնպիսի «վճռական հաղթությամբ», վորպիսին մենակ ցարդ դումարած ներկայացուցչական ժողովը կլինի, վորը ծաղրի համար միայն կարող եր Սահմանադիր կոչվել,—այն ժամանակ այդ կլինի մի հեղափոխություն կալվածատիրական և խոշոր բուրժուական տարրի գերակշռությամբ: Ընդհակառակը, յեթե մեզ վիճակված է իսկապես մեծ հեղափոխություն ունենալ, յեթե պատմությունն այս անգամին էլ «վիժվածք» չի թույլ տա, յեթե մենք ուժ կունենանք հեղափոխությունը մինչև վերջ, մինչև վճռական հաղթության հասցնելու, խոսքի վոչ-ասվարաժդենիական և վոչ-նորիկյան իսկրայական իմաստով, այն ժամանակ այդ կլինի հեղափոխության՝ դյուղացիական և պրոլետարական տարրի գերակշռության:

Դուցե վոմանք այսպիսի գերակշռության միտք թույլ տալը հրաժարումն համարեն այն համոզումից, թե առաջիկա հեղափոխությունը բուրժուական բնույթ ունի: Այս շատ հնարավոր է այդ հասկացողության այն չարարկման դեպքում, ինչպիսին մենք «Искра»-ում ենք տեսնում: Ուստի և բնավ ավելորդ չե այս հարցի վրա կանգ առնելը:

VI. ՎՈ՞ՐՏԵՂԻՑ Ե ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՒՄ ՋԵՌԲԵՐԸ ԿԱՊԱՆ ՄՆԱԼՈՒ ԱՅՑ ԿՐՎՈՒՄ, ՎՈՐ ՆԱ ՄՂԵԼՈՒ ՑԵ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ

*Մարքսիստներն անպայման համոզված են, վոր ռուսական հեղափոխությունը բուրժուական բնույթ ունի: Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր քաղաքական կարգի այն դեմոկրատական վերափոխությունները և սոցիալ-տնտեսական այն փոխակերպությունները, վորոնք Ռուսաստանի համար անհրաժեշտ են դարձել, — ինքնըստինքյան վոչ մխայն կապիտալիզմի ջլատում, բուրժուազիայի տիրապետության ջլատում չեն նշանակում, այլ, ընդհակառակը, առաջին անգամ, ինչպես հարկն է, հող կմաքրեն կապիտալիզմի լայն ու արագ, յեվրոպական, և վոչ ասիական, զարգացման համար, նրանք առաջին անգամ հնարավոր կդարձնեն բուրժուազիայի, իբրև դասակարգի, տիրապետությունը: Սոցիալիստ-հեղափոխականները չեն կարող այս դաղափարը հասկանալ, վորովհետև նրանք չդիտեն ապրանքային և կապիտալիստական արտադրության զարգացման որենքների այբուբենը, նրանք չեն տեսնում, վոր դյուղացիական ապատամբության նույնիսկ լիակատար հաջողությունը, նույնիսկ ամբողջ հողը դյուղացիների ոգտին և նրանց ցանկությունների համեմատ վերաբաշխելը («սև վերաբաժանություն» կամ նման վորևե բան) բնավ չի վոչնչացնի կապիտալիզմը, այլ ընդհակառակը, զարկ կտա նրա զարգացմանը և կարագացնի իր՝ դյուղացիության դասակարգային տրոհումը: Այս ճշմարտությունը չհասկանալը սոցիալիստ-հեղափոխականներին դարձնում է մանր բուրժուազիայի անդիտակից դաղափարախոսներ: Այս ճշմարտությունը պնդելը սոցիալ-դեմոկրատիայի համար վոչ մխայն թեորիական, այլ և դործնական-քաղաքական ահագին նշանակություն ունի, վորովհետև այստեղից է բղխում պրոլետարիատի կուսակցության դասակարգային լիակատար ինքնուրույնության պարտադիր լինելն ներկա «համազեմոկրատական» շարժման մեջ:

Սակայն սրանից բնավ չի բղխում, թե դեմոկրատական (իր հասարակական-տնտեսական բովանդակությամբ բուրժուական) հեղաշրջումը պրոլետարիատի համար վիթխարի չհաղթահարելի չեր ունենա: Սրանից բնավ չի բղխում, թե դեմոկրատական հեղաշրջումը չեր կարող կատարվել թե այն ձևով, վորը գլխավորապես խոշոր կապիտալիստի, ֆինանսական տուգի, «լուսավորված» կալվածատիրոջ համար ոգտավետ կլիներ, և թե այն ձևով, վոր ոգտավետ կլիներ դյուղացու և բանվորի համար:

Նոր-իսկրայականները հենց արմատից ճիշտ չեն հասկանում բուրժուական հեղափոխություն կատեդորիայի իմաստն ու նշանակությունը: Նրանց դատողությունների մեջ չարունակ այն միտքն է յերևում, վոր իբր թե բուրժուական հեղափոխությունը մի այնպիսի հեղափոխություն է, վորը կարող է միմիայն այն տալ, ինչ վոր բուրժուազիային է ոգտավետ: Այնինչ այդ մտքից ավելի սխալ բան չկա: Բուրժուական հեղափոխությունը մի այնպիսի հեղափոխություն է, վորը բուրժուական, այսինքն կապիտալիստական հասարակական-տնտեսական կարգի չերջանակներից դուրս չի դալիս: Բուրժուական հեղափոխությունն արտահայտում է կապիտալիզմի զարգացման պահանջները, վոչ միայն նրա հիմունքները վոչնչացնելով, այլ ընդհակառակն, ընդլայնելով և խորացնելով:

* Մենք չենք խոսում դյուղացիական հասուկ լողունգների մասին, վորոնք առանձին բանաձևեր են նվիրված58:

Ուստի և այդ հեղափոխությունը վոչ միայն բանվոր դասակարգի, այլ և ամբողջ բուրժուազիայի չահերն և արտահայտում: Քանի վոր կապիտալիզմի որով բուրժուազիայի տիրապետությունը բանվոր դասակարգի վրա անխուսափելի չե, ապա կարելի չե ամենայն իրավամբ ասել, թե բուրժուական հեղափոխությունը վոչ այնքան պրոլետարիատի, վորքան բուրժուազիայի չահերն և արտահայտում: Բայց բոլորովին անհերքելի միտք և, թե բուրժուական հեղափոխությունը ամենևին էլ արտահայտում պրոլետարիատի չահերը: Այդ անհերքելի միտքը հանգում և կամ նարոդնիկական պապենական այն թեորիային, թե բուրժուական հեղափոխությունը հակասում և պրոլետարիատի չահերին, թե այդ պատճառով մեզ հարկավոր չե բուրժուական քաղաքական ազատությունը: կամ այդ միտքը հանգում և անարխիզմին, վորը ժխտում և պրոլետարիատի ամեն մի մասնակցություն բուրժուական քաղաքական նորթյանը, բուրժուական հեղափոխությանը, բուրժուական պարլամենտարիզմին: Այդ միտքը թեորիապես մոռացումն և մարքսիզմի այբբենական այն դրույթների, թե անխուսափելի չե կապիտալիզմի զարգացումը ապրանքային արտադրության հողի վրա: Մարքսիզմն ուսուցանում և, վոր մի հասարակություն, վոր հիմնված և ապրանքային արտադրության վրա, վոր վերանակուրված կապիտալիստական ազգերի հետ, զարգացման վորոշ աստիճանի վրա ինքն էլ անխուսափելիորեն կապիտալիզմի ուղին և բռնում: Մարքսիզմն անդառնալիորեն հրաժարվել և նարոդնիկների և անարխիստների այն զառանցանքներից, թե իբր կարելի չե, որինակ, վոր Ռուսաստանը խուսափի կապիտալիստական զարգացումից, դուրս թռչի կապիտալիզմից կամ նրա վրայով ցատկի մի վորևե այլ ճանապարհով, քան դասակարգային կռվի ճանապարհն և այդ նույն կապիտալիզմի հողի վրա և սահմաններում:

Մարքսիզմի այս բոլոր դրույթներն ապացուցված են և ամենայն մանրամասնությամբ ծամած, դյուրամարս են դարձրած թե ընդհանրապես և թե հատկապես Ռուսաստանի վերաբերմամբ: Իսկ այս դրույթներից հետևում և, վոր ռեակցիոն և այն միտքը, թե բանվոր դասակարգի վերկությունը պետք և վորոնել վորևե այլ բանում, քան կապիտալիզմի հետագա զարգացման մեջ: Այնպիսի յերկիրներում, ինչպիսին Ռուսաստանն և, բանվոր դասակարգը վոչ այնքան կապիտալիզմից և տառապում, վորքան կապիտալիզմի զարգացման պակասություններից: Ուստի և բանվոր դասակարգն անպայման շահագրգռված և, վոր ամենալայն, ամենաազատ, ամենից արագ կերպով զարգանա կապիտալիզմը: Բանվոր դասակարգի համար անպայման ոգտավետ և հնության այն բոլոր ձևաղորդների վերացումը, վորոնք խանգարում են կապիտալիզմի լայն, ազատ և արագ զարգացմանը: Բուրժուական հեղափոխությունը հենց այնպիսի մի հեղաշրջում և, վորն ամենից ավելի վրնռականորեն և ավելում–սրբում հնության ձևացորդները, ճորտատիրության ձևացորդները (այդ ձևացորդների թվին և պատկանում վոչ միայն ինքնակալությունն, այլ և միապետությունը), վորն ամենից ավելի լրիվ կերպով և ապահովում կապիտալիզմի ամենալայն, ազատ և արագ զարգացումը:

Ուստի բուրժուական հեղափոխությունը ոգտավետ և պրոլետարիատին: Բուրժուական հեղափոխությունը պրոլետարիատի չահերի համար անպայման անհրաժեշտ և: Ինչքան ավելի լրիվ ու վճռական, ինչքան ավելի հետևողական լինի բուրժուական հեղափոխությունը, այնքան ավելի ապահովված կլինի պրոլետարիատի կռիվը բուրժուազիայի դեմ սոցիալիզմի համար: Միմիայն դիտական սոցիալիզմի այբուբենը չիմացող մարդկանց կարող և այս յեզրակացությունից, իմիջիայլոց, այն դրույթն էլ և հետևում, թե բուրժուական հեղափոխությունը, վորոշ իմաստով, ավելի ոգտավետ և պրոլետարիատի համար, քան բուրժուազիայի: Ահա թե ինչ իմաստով և այս դրույթն իսկապես անտարակուսելի. բուրժուազիայի համար ձեռնտու չե ընդդեմ պրոլետարիատի հենվել հնության մի քանի ձևաղորդների վրա, որինակ, միապետության, մշտական բանակի և այլն: Բուրժուազիայի համար ձեռնտու չե, վոր բուրժուական հեղափոխությունը չափազանց վճռականորեն չավելի–չսրբի հնության բոլոր ձևացորդները, այլ նրանցից մի քանիսը թողնի, այսինքն՝ նրա համար ոգտակար և, վոր այդ հեղափոխությունը լիովին հետևողական չլինի, մինչև վերջը չհասնի, վճռական ու անհնա չլինի: Սոցիալ–դեմոկրատները այս միտքը համառ մի քիչ ուրիշ կերպ են արտահայտում, ասելով, թե բուրժուազիան դավաճանում և ազատության ճանում և իրեն, թե բուրժուազիան հետևողական դեմոկրատիզմի անձնդրժին, թե բուրժուազիան հետևողական ձեռնտու չե, վոր բուրժուական և: Բուրժուազիայի համար ավելի ձեռնտու չե, վոր բուրժուական–դեմոկրատական ուղղությամբ անհրաժեշտ փոխակերպությունները կատարվեն ավելի դանդաղ, ավելի հաջորդաբար, ավելի զգույշ, ավելի անվճռական, բարենորոգումների, և վոչ հեղափոխության ճանապարհով. վոր այդ փոխակերպությունները վորքան կարելի չե ավելի զգուշավոր լինեն ճորտատիրության «հարդարժան» հիմնարկների (միապետության նման հիմնարկների) վերաբերմամբ. վոր այդ փոխակերպությունները ինչքան կարելի չե քիչ զարգացնեն հասարակ ժողովրդի, այսինքն գյուղացիության և հատկապես բանվորների հեղափոխական ինքնագործնեությունը, նախաձեռնությունը և յեռանդը, վորովհետև այլապես բանվորների համար ավելի հեշտ կլինի, ինչպես Ֆրանսիայիք են ասում, «հրացանը մի ուսից մյուսը անցկացնել», այսինքն հենց իրե՝ բուրժուազիայի դեմ ուղղել այն զենքը, վոր կտա նրանց բուրժուական հեղափոխությունը, այն ազատությունը, վոր նա կտա, այն դեմոկրատական հիմնարկները, վորոնք ճորտատիրությունից մաքրած հողի վրա առաջ կգան:

Ընդհակառակը, բանվոր դասակարգի համար ավելի ձեռնտու չէ, որ բուրժուական–դեմոկրատական ուղղությամբ բոլոր անհրաժեշտ փոխակերպությունները կատարվեն հենց վոչ ռեֆորմատորական, այլ հեղափոխական ճանապարհներով, վորովհետև ռեֆորմատորական ճանապարհը քաչքչուկների, ձգձգումների, ժողովրդական օրգանիզմի փտող մասերի տանջալիորեն դանդաղ մաշման ուղին է: Նրանց փոխելուց առնից ավելի և ամենից չատ ուժում են պրոլետարիատը և դյուղացիությունը: Հեղափոխական ճանապարհը պրոլետարիատի վերաբերմամբ արագ, ամենից ավելի քիչ ցավոտ ոպերացիայի ճանապարհն է, փտող մասերի ուղղակի հեռացման ճանապարհը, միապետության և նրան համապատասխանող դղվելի ու զարչելի, փտած և փտեցության ոդ ապականող հիմնարկների վերաբերմամբ նվազագույն ղիջողականության և զգուշության ճանապարհն է:

Ահա թե ինչու մեր բուրժուական–լիբերալ մամուլը միմիայն դրաքննական նկատառումներով չէ, միայն յերկյուղից չէ, որ հուդաչարը վողբում է հեղափոխական ճանապարհի հնարավորության, վախենում է հեղափոխությունից, ցարին վախեցնում է հեղափոխությամբ, հոդում է հեղափոխությունից խուսափելու մասին, քծնում է ու սուորաքարչության և անում վողորմելի բարենորոգումների համար, իբրև ռեֆորմատորական ճանապարհի հիմունքի: Այդ սենսակեսին են վոչ միայն «Русские Ведомости»–ն, «Сын отечества»–ն, «Наша жизнь»–ը, «Наши дни»–ն[59], այլ և անլեզալ, աղաս «Освобождение»–ն: Բուրժուազիայի՝ իբրև կապիտալիստական հասարակության դասակարգի բուն իսկ դրության անխուսափելի ծնունդն է և նրա անհեռևողական կանությունը դեմոկրատական հեղաշրջման մեջ: Պրոլետարիատի՝ իբրև դասակարգի՝ բուն իսկ դրությունը նրան ստիպում է հետևողական դեմոկրատ լինելու: Բուրժուազիան յես–յետ է նայում, վախենալով դեմոկրատական պրոդրեսից, վորն ապառնում է ուժեղացնել պրոլետարիատին: Պրոլետարիատը չղթաններից զատ բան չունի կորցնելու, իսկ դեմոկրատիզմի ողնությամբ նա ամբողջ աշխարհը ձեռք կբերի: Այս պատճառով, վորքան ավելի հետևողական է դեմոկրատական և բուրժուական հեղափոխությունների մեջ, այնքան ավելի քիչ է սահմանափակվում այն բանով, վորը բացառապես բուրժուազիայի համար է ոգտակար: Վորքան ավելի հետևողական է բուրժուական հեղափոխությունը, այնքան ավելի յե ապահովում պրոլետարիատի ու գյուղացիության չահերը դեմոկրատական հեղաշրջման մեջ:

Մարքսիզմը պրոլետարիատին սովորեցնում է վոչ թե հեռու ձնալ բուրժուական հեղափոխությունից, վոչ թե անտարբեր լինել դեպի այն, վոչ թե նրանում դեկավարությունը բուրժուազիային թողնել, այլ, ընդհակառակը, ամենից յեռանդագին մասնակցել, ամենավճռականորեն կռվել պրոլետարական հետևողական դեմոկրատիզմի համար, հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար: Մենք չենք կարող դուրս ցատկել ռուսական հեղափոխության բուրժուական–դեմոկրատական չրջանակներից, բայց կարող ենք և պետք է այդ չրջանակները, կարող ենք հսկայական չափերով լայնացնել այդ չրջանակները, որոշ չափով չահերի, նրա անմիջական կարիքների համար և այն պայմանների համար, վորոնք նրա ուժերը կնախապատրաստեն ապագա լիակատար հաղթության համար: Բուրժուական դեմոկրատիա յել կա, բուրժուական դեմոկրատիա չել: Բուրժուական դեմոկրատ և նաև դեմեց–մխալեւականը, վերին պալատի[60] կողմնակիցը, վորը ընդհանուր բնարական իրավունք և «հայցում», իսկ ցարի հետ թաղտն, մեղմով գործարք և կնքում պոչատ սահմանադրության մասին: Նույնպես բուրժուական դեմոկրատ և այն դյուղացին էլ, վորը զենքը ձեռքին գնում է կալվածատերերի և չինովնիկների դեմ, «նախիվ–հանրապետականորեն» առաջարկում է «վանդել ցարին»*: Բուրժուական–դեմոկրատական կարգեր լինում են թե՛ այնպիսիները, ինչպիսիք Գերմանիայում են և թե՛ այնպիսիները, ինչպիսիք Անգլիայում են. այնպիսիք, ինչպիսիք Շվեյցարիայում են: և այնպիսիք, ինչպիսիք Ամերիկայում կամ Շվեյցարիայում են: Էական մարքսիստ կլիներ այն մարքսիստը, վորը դեմոկրատիզմի առհեղաշրջման դարաշրջանում աչքաթող կաներ դեմոկրատիզմի տիճանների և նրա այս կամ այն ձևի զանազան բնույթի մեջև յուղած տարբերությունը և կասհմանափակվեր «խելքին դուռ տալով» այն մասին, թե այդ ամենը «բուրժուական հեղափոխություն» պտուղ:

«Բուրժուական հեղափոխության» պտուղ:

Իսկ չէ՞ վոր մեր նոր–իսկրայականները հենց այդպիսի խելոքներ են, վորոնք իրենց կարճատեսությամբ են փլվում: Նրանք հենց այնտեղ և այն ժամանակ են սահմանափակվում հեղափոխության բուրժ. բնույթի մասին դատողություններով, վորտեղ պետք է կատարել տարբերություն դնել հանրապետ.–հեղափոխական և մխալ. պետ.–լիբերալ բուրժ. դեմոկրատիայի միջև, և չենք խոսում արդեն անհետևողական բուրժ. և հետևողական պրոլետարական դեմոկրատիզմի միջև յեղած տարբերության մասին: Նրանք բավականանում են, — կարծես թե իրոք զարձել են «պատյանի միջի մարդիկ», — «հակադիր դասակարգերի վոխադարձ կռվի պրոցեսի» մասին մելամաղձոտ խոսակցությամբ, յերբ խոսք է լինում այն մասին, վոր ներկա հեղափոխության դեմոկրատական դեկավարությունը պետք է տրվի, վոր ընդդեմն առաջավոր դեմոկրատական լուզունգները՝ տարբերելով պ. Սարուվե և ընկ. զավաճանական լուզունգներից, վոր ուղղակի և սուր կերպով նշվեն պրոլետարիատի և դյուղացիության ներկա հեղափոխական կռվի մերճավորագույն խնդիրները՝ տարբերելով կալվածատերերի և ֆաբրիկանների լիբերալ մակլերությունից: Այժմ հենց այս է հարցի էությունը, վոր դուք աչքաթող եք արել, պարոնայք. հարցի էությունը, վոր դուք

* Տես «Освобождение» № 71, էջ 337, ծան. 261:

թյունն այն է, թե՞ արդյոք մեր հեղափոխությունը կպահպանի իսկական հոյակապ հաղթությամբ, թե՞ լոկ խղճուկ դործարքով, կհասնի՞ արդյոք նա պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրային, թե՞ «ուժասպառ կլինի» լիբերալ-չիպովյան սահմանադրության վրա[54]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե, այս հարցը դնելով, մենք բոլորովին մի կողմ ենք դեղվում մեր թեմայից: Սակայն այդպես թվալ կարող է միայն առաջին հայացքից: Իրոք, հենց այս հարցումն է այն սկզբունքային տարաձայնության արմատը, որը հիմա արդեն միանդամայն ուրվագծվել է ՌՍԴԲԿ III համագումարի սոցիալ-դեմոկրատական տակտիկայի և նոր-իսկրայականների կոնֆերանսում սահմանված տակտիկայի միջև: Այդ վերջիններն այժմ արդեն վոչ թե յերկու, այլ յերեք քայլ են արել դեպի յեւ, հարություն տալով եկոնոմիզմի սխալներին՝ բանվորական կուսակցության համար հեղափոխության մոմենտում նրա տակտիկայի անհամեմատ ավելի բարդ, ավելի կարևոր և ավելի կենսական հարցեր լուծելիս: Ահա թե ինչու անհրաժեշտ է, որը դրված հարցի քննության վրա մենք ամենայն ուշադրությամբ կանդ առնենք:

Նոր-իսկրայական բանաձևի մեր մեջբերած մասում մասնավորապես կա այն վտանգի մասին, թե միգուցե սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիայի անհետևողական քաղաքականության դեմ կռվելիս իր ձեռները կապի, թե միգուցե նա լուծվի բուրժուական դեմոկրատիայի մեջ: Այս վտանգի մեջբերը կարմիր թելի պես անցնում է ամբողջ սպեցիֆիկ-նոր-իսկրայական դրականության միջով, այս մեջբերը մեր կուսակցական պատկերացման մեջ սկզբունքային ամբողջ դիրքի իսկական մեհն է (այն ժամանակից ի վեր, յերբ այդ պատկերացման մեջ չնչին խոսպոտոցի տարբերը բոլորովին յեսին կարդն անցան, տեղի տալով դեպի եկոնոմիզմը կատարվող չըջադարձի տարբերի առաջ): Ցավ մենք առանց տատանման ընդունում ենք, վոր այս վտանգն իրոք դոյություն ունի, վոր հենց այժմ, ռուսական հեղափոխության բռնկման պահին, այս վտանգը հատկապես լուրջ և դառել: Մեզ, սոցիալ-դեմոկրատիայի թեորետիկներիս կամ — յես իմ մասին կդերադասեի ասել — հրապարակախոսներիս վրա անհետաձգելի և չափազանց պատասխանատու խնդիր է դնում՝ պարզել, թե այդ վտանգն իրոք վոր կողմից է սպառնում: Վորովհետև մեր տարաձայնության աղբյուրը վոչ թե այն վճռն է, թե դոյություն ունի արդյո՞ք այսպիսի վտանգ, այլ այն վճռն է, թե այս վտանգն ստեղծողը «փոքրամասնության» այսպես կոչված պոչականությունն է, թե «մեծամասնության» այսպես կոչված հեղափոխականությունը:

Սխալ դատողություններն ու թյուրիմացությունները վերացնելու համար նկատենք, ամենից առաջ, վոր այն վտանգը, վորի մասին խոսում ենք, զործի վոչ թե սուբյեկտիվ, այլ օբյեկտիվ կողմի մեջ է, վոչ թե սոց.-դեմ. կռվում բռնելիք դիրքի, այլ այժմյան հեղափոխական ամբողջ կռվի նյութական վախճանի մեջ:

Հարցն այն չէ, թե սոցիալ-դեմոկրը. այս կամ այն խմբերը կդանկան լուծվել բուրժուական դեմոկրատիայի մեջ, կդիտակցեն արդյոք, թե իրենք լուծվում են, — սրա մասին խոսք էլ չկա: Մենք չենք էլ կասկածում, թե սոցիալ-դեմոկրատներից վորևե մեկը նման ցանկություն ունենա, և բանը ցանկությունը չէ բնավ: Հարցն այն էլ չէ, թե արդյոք սոցիալ-դեմոկրատական այս կամ այն խմբերը հեղափոխության ամբողջ ընթացքում կպահպանեն իրենց ձևական ինքնուրույնությունը, անկախությունը, խումբ լինելը բուրժուական դեմոկրատիայից: Նրանք կարող են վոչ միայն հայտարարել այդ «ինքնուրույնության» մասին, այլ և ձգտել կանոնին պահպանել այն, և այնուամենայնիվ բանը կարող է այնպես դուրս գալ, վոր բուրժուազիայի անհետևողականության դեմ մղած կռվում նրանց ձեռքերը կաչկանդված լինեն: Հեղափոխության քաղաքական վերջնական հանրագումարը կարող է այն լինել, վոր չնայած ձևական «ինքնուրույնության», չնայած սոցիալ-դեմոկրատ. կազմակերպչական, կուսակցական լիակատար առանձնության, նա իրոք դուրս գա վոչ ինքնուրույնության չլինելի դեպքերի ընթացքի վրա իր պրոլետարական ինքնուրույնության կնիքը դնելու, դուրս գա, վոր այնքան թույլ է, վոր ընդհանրապես և ամբողջությամբ, վերջին հաշվով, վերջին հանրագումարով, նրա «լուծվելը» բուրժուական դեմոկրատիայի մեջ, այնուամենայնիվ, պատմական իրողություն լինի:

Ահա իսկական վտանգի էությունը: Ցավ այժմ անենք, թե նա վոր կողմից է սպառնում. — արդյոք սոցիալ-դեմոկրատիայի դեպի աջ թեքվելուց՝ ի դեմս նոր «Искра»-ի, ինչպես մենք ենք կարծում, թե նրա ձախ թեքվելուց ի դեմս «մեծամասնության», «Вперед»-ի և այլն, ինչպես նոր-իսկրայականներն են կարծում: Այս հարցի լուծումը, ինչպես նշել ենք, վորոշվում է հասարակական ուժերի դործողության որյեկտիվ դուրսդրումով: Այդ ուժերի բնույթը թեորետական վերլուծումով, իսկ այժմ վորոշվում է նրանց մարքսիստական վերլուծումով, իսկ այժմ վորոշվում է դործնականորեն խմբերի ու դասակարգերի բացահայտ յեղույթով հեղափոխության ընթացքի մեջ: Ցավ ահա, թեորետական ամբողջ վերլուծությունը, վոր մեր ապրած դարաշրջանից չատ առաջ կատարել են մարքսիստները, և հեղափոխական դեպքերի զարգացման վրա կատարած դործնական բոլոր դիտողությունները մեզ ցույց են տալիս, վոր, որյեկտիվ պայմանների տեսակետից, Ռուսաստանում հեղափոխության յերկու տեսակի ընթացք ու վախճան են հնարավոր: Ռուսաստանի անտեսական և քաղաքական կարգի վերակազմությունը բուրժուա-դեմոկրատական ուղղությամբ անխուսափելի յե և չի կարելի վերացնել: Աչխարհում չկա մի այնպիսի ուժ, վորը կարողանար այսպիսի վերակազմությանը խանգարել: Սակայն այդ վերակազմությունը կատարող առկա ուժերի դործողության դուրսդրումից կարող է այդ վերակազմության յերկակի հետևանք կամ յերկակի ձև ստացվել: Ցերկուսից մեկը՝

1) կամ բանը կվերջանա «հեղափոխության վճռական հաղթությամբ ցարիզմի հանդեպ» կամ 2) վճռական հաղթության համար ուժերը կպահպանեն, և բանը կվերջանա ցարիզմի դործադրած բուռ-ժուազիայի ամենից ավելի «անհետևողական» և ամենից ավելի «չհամախնդիր» տարրերի հետ: Մանրամասնությունների ու կոմբի-նացիաների բոլոր անվերջ զանազանակերպությունը, որը կան-խատեսել չի կարող և ոչ ոք, ընդհանրապես և ամբողջությամբ հանգում է հենց այդ յերկու վախճաններից մեկին կամ մյուսին:

Այժմ քննենք այդ վախճանները, նախ՝ նրանց սոցիալական նշանակության տեսակետից, և յերկրորդ՝ սոցիալ-դեմոկրատի դրության (նրա «լուծման» կամ «ճեռքերը կաշկանդված լինելու») տեսակետից՝ այս կամ այն յելքի ժամանակ:

Ի՞նչ բան է «հեղափոխության վճռական հաղթությունը ցա-րիզմի հանդեպ»: Մենք արդեն տեսանք, որ այս արտահայտու-թյունը բանեցնելով նոր-իսկրայականները այն չեն հասկանում իր բաղաքական ամենամտավոր նշանակությամբ անգամ: Նրանց մոտ ավելի ևս քիչ է նկատելի այս հասկացողության դասակարդային բովանդակության ըմբռնումը:

Մենք, մարքսիստներս, յերբեք չպետք է մեզ թույլ տանք «հեղափոխություն» կամ «ռուսական մեծ հեղափոխություն» բա-ռերով հրապուրվել, ինչպես նրանցով այժմ հրապուրվում են բա-ժմաթիվ հեղափոխական դեմոկրատներ (Գապոնի նման): Մենք մեզ պետք է ճիշտ հաշիվ տանք, թե հասարակական ինչ ուժ ինչ «ցարիզմին» (այդ լիովին ուժ և ամենքի համար լիովին հասկա-նալի մի ուժ է) դեմ կանգնած և ընդունակ են նրա հանդեպ «վճռա-կան հաղթություն» տանելու: Այդպիսի ուժ չի կարող լինել խոշոր բուրժուազիան, կալվածատերերը, ֆաբրիկանտները, ասվարաժ-դենեցականների յեռանդից գնացող «հասարակությունը»: Մենք տես-նում ենք, որ նրանք վճռական հաղթություն չեն ել ցանկանում: Մենք գիտենք, որ նրանք, բան իրենց դասակարդային դրության, ընդունակ չեն ցարիզմի դեմ վճռական կռիվ մղելու. վտաններից կախված չափազանց մեծ բևռ և մանավանդ սեփականությունը, կապիտալը, հողը, այնպես որ նրանք վճռական հաղթություն չեն կարող տանել ցարիզմի դեմ: Ցարիզմը իր հոսանքական–բյուրոկրատական և զինվորական ուժերով նրանց չափազանց հարկավոր և ընդհեմ պրոլետարիատի և գյուղացիության, այնպես որ նրանք չեն կարող ձգտել ցարիզմի վոչնչացմանը: Վոչ, «ցարիզմի հանդեպ վճռական հաղթություն» տանելու ընդունակ ուժ կարող է լինել միմիայն ժողովուրդը, այ-սինքն պրոլետարիատը և գյուղացիությունը, յերեք վերցնելու լինենք հիմնական, խոշոր ուժերը, մեկին և մյուսի միջև բաշխելով գյուղա-կան և քաղաքային մանր բուրժուազիան (տես «Ժողովուրդ» և): «Ցարիզմի հանդեպ հեղափոխության վճռական հաղթություն» պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական–դեմոկրատա-կան դիկտատուրան է: Նոր–իսկրայականները ««Вперед»–ի վաղուց մատնանշած այս յերկարացությունից վոչ մի կերպ չեն կարող

խուսափել: Եվ ուրիշ մեկը չկա, վոր ցարիզմի հանդեպ վճռական հաղթություն տանի:

Ցեվ այդպիսի հաղթությունն իսկապես հենց դիկտատուրա կլինի, այսինքն՝ անխուսափելիորեն պետք է հենվի զինվորական ուժին, մասսայի զինմանը, ապստամբությանը, և վոչ թե այս կամ այն «լեգալ», «խաղաղ ճանապարհով» ստեղծած հիմնարկներին: Այս մխիթարն դիկտատուրան կարող է լինել, վորովհետև պրոլետա-րիատին և գյուղացիությանը անհապաղ և անպայման հարկավոր փոխակերպությունների իրականացումը առաջ կբերի թե՛ կալվա-ծատերերի, թե՛ խոշոր բուրժուաների, թե՛ ցարիզմի կատաղի դիմադրության: Առանց դիկտատուրայի անհնարին է կոտրել այդ դիմադրությունը, յեթե մղել հակահեղափոխական փորձերը: Բայց այս կլինի, անշուշտ, վոչ թե սոցիալիստական, այլ դեմոկրատա-կան դիկտատուրա: Նա չի կարող (առանց հեղափոխական ղար-դացման մի ամբողջ չարք միջնակա ստիճանների) դիպչել կապի-տալիզմի հիմքերին: Նա կկարողանա, լավագույն դեպքում, հո-ղային սեփականության հիմնական վերաբաշխում մտցնել հոգուտ գյուղացիության, կիրառել հետևողական և լիակատար դեմոկրա-տիզմ ընդհուպ մինչև հանրապետություն, վոչ միայն գյուղական, այլ և ֆաբրիկային կենցաղից արմատից պոկել բոլոր ստիկան, ճորտային գծերը, սկիզբ դնել բանվորների դրության լուրջ բարե-լավմանը և նրանց կենսական մակարդակի բարձրացմանը, վերջա-պես, last but non least* — հեղափոխական հզոր ճեռքը ցեվրոպա վո-խադրել: Այսպիսի հաղթությունը մեր բուրժուական հեղափոխու-թյունը սոցիալիստական հեղափոխություն չի դարձնի բնավ. դե-մոկրատական հեղաշրջումն անմիջականորեն դուրս չի գա հասա-րակական–տնտեսական բուրժուական հարաբերությունների չրջա-նակներից. բայց և այնպես այդպիսի հաղթության նշանակությունը հսկայական կլինի թե Ռուսաստանի և թե ամբողջ աշխարհի ապագա զարգացման համար: Համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական յեռանդը վոչ մի բան այն աստիճան չի բարձրացնի, վոչ մի բան այնպես ուժգին չի կարճացնի նրա այն ուղին, վոր տանում է դեպի նրա լիակատար հաղթությունը, ինչպես Ռուսաս-տանում սկսված հեղափոխության այս վճռական հաղթանակը:

Թե այսպիսի հաղթանակը վորքան հավանական է, — ուրիշ հարց է: Մենք բնավ հետևած չենք այս մասին յեղող անմիտ լավա-տեսության, մենք ամենևին չենք մոռանում այս խնդրի ահագին դժվարությունը, բայց կուվի գնալով, մենք պետք է հաղթության ցանկանանք և կարողանանք գտնել այն ուղին, վոր ամենից պարզ ցույց տալ: Անվիճելիորեն ամեն ինչ այս հաղթությանը հասցնելու ընդունակ տեղի չունի: Ճիշտ է, մեր, սոցիալ-դեմո-կրատական ազդեցությունը պրոլետարիատի մասսայի վրա տա-կավին չատ և չատ անբավարար է. բոլորովին չենք ել հեղափոխա-կան ազդեցությունը գյուղացիության մասսայի վրա. պրոլետա-

* Վերջինն բան հաշվի, բայց վոչ բան կարևորության:

բիաև և հատկապես գյուղացիության ցրվածությունը, անզարգացածությունը, իսկ վիճակը դեռ սոսկալի մեծ են: Սակայն հեղափոխությունը արագորեն մխիթարում և արագորեն լուսավորում է: Նրա զարգացման յուրաքանչյուր քայլն արթնացնում է մասսային և անզուսպ ուժով ձգում հենց հեղափոխական ծրագրերի կողմը, երբև մեկ ծրագրի, որը հետևողականորեն և ամբողջական արտահայտում է նրա իսկական, կենսական շահերը:

Մենշևիկի որենքն ասում է, թե գործողությունը հավասար և հակազդեցության: Պատմության մեջ հեղափոխության խորտակիչ ուժն էլ պակաս կախված չէ այն բանից, թե ինչքան հզոր և տևական է եղել ապստամբության ճգտման ճնշումը, թե ինչքան խորն է հակասությունը անդրկուլիսեղեցյան «վերնախավերի» և ժամանակակից դարաշրջանի կենդանի ուժերի միջև: Ցեվ քաղաքական միջադեպային սիրուտացիան չատ կողմով հավասարազոր է ռուսական հեղափոխության համար: Բանվորների և գյուղացիների ապստամբությունն արդեն սկսվել է, նա բաժանված վիճակում է, տարերային է, թույլ, բայց անվիճելի է և անպատճառ ապացուցում է վճռական կռվի ընդունակ և վճռական հաղթության դիմող ուժերի առկայությունը:

Ցեթե այդ ուժերը հերիք չլինեն, — այն ժամանակ ցարիզմը կկարողանա այն գործարքը կնքել, որն արդեն յերկու ծայրից պատրաստում են թե՛ պարոնայք Բուլիգինները, և թե՛ պարոնայք Մարուվենները: Այն ժամանակ բանը կվերջանա պոչատ սահմանադրությունով կամ նույնիսկ — ամենավատթարագույն դեպքում — նրա պարոդիայով: Այդ էլ «բուրժուական հեղափոխություն» կլինի, միայն վիժված, որպիսակաս, խառնածին: Սոցիալ-դեմոկրատիան իր համար պատրանքներ չի ստեղծում, նա ճանաչում է բուրժուազիայի դասակարգային բնույթյունը, նա չի ընկճվում հոգեպես և պրոլետարիատի դասակարգային դաստիարակության համար տարվող իր համառ, համբերատար և տակուն աշխատանքը չի թողնի նման կլինեը XIX դարում Ցեվրոպայի մեջ յեղած դրեթե բոլոր դեմոկրատական հեղափոխությունների վախճանին, և այն ժամանակ մեր կուսակցական պարզագույմը կդնար դժվարին, ծանր, յերկար, բայց ծանոթ ու բանուկ ուղիով:

Այժմ հարց է ծագում. այդ յերկու հնարավոր վախճաններից ո՞րը ժամանակ սոցիալ-դեմոկրատիան փաստորեն ձեռքերը կապված կլինի անհետևողական և չհամարձակ բուրժուազիայի դեմ, փաստորեն «լուծված» կամ դրեթե լուծված կլինի բուրժուական դեմոկրատիայի մեջ:

Բավական և պարզ կերպով դնենք այս հարցը, վորպեսզի, առանց մի րոպե դժվարանալու, պատասխանենք նրան:

Ցեթե բուրժուազիային հաջողվի ցարիզմի հետ կնքած գործարքով վիժեցնել ռուսական հեղափոխությունը, — այն ժամանակ

իրոք վոր սոցիալ-դեմոկրատիայի ձեռքերը փաստորեն կաշկանդված կլինեն անհետևողական բուրժուազիայի հանդեպ, — այն ժամանակ սոցիալ-դեմոկրատիան լուծված կլինի «բուրժուական դեմոկրատիայի» մեջ այն իմաստով, վոր պրոլետարիատին չի հաջողվի հեղափոխության վրա դնել իր վառ դրոշը, չի հաջողվի պրոլետարին կամ, ինչպես յերբեմն Մարքսն եր ասում, «պլեբեյորեն» հաշիվը վերջացնել ցարիզմի հետ:

Ցեթե հաջողվի հեղափոխության վճռական հաղթությունը, — այն ժամանակ մենք ցարիզմի հետ հաշիվը կվերջացնենք յակոբինորեն, կամ, յեթե ուզում եք, պլեբեյորեն: «Ցերմանական ամբողջ տերրորիզմը — դրում եր Մարքսը հայտնի «Նոր-Հռենոսյան լրագրի» մեջ 1848 թվականին — այլ բան չեր, քան յեթե բուրժուազիայի թշնամիների հետ, արտոլյուտիզմի, ֆեոդալիզմի և քաղքենիության հետ հաշիվը վերջացնելու պլեբեյան յեղանակ» (տես Marx, Nachlass,* Մերինգի հրատ., III հատ., եջ 211)[62]: Մարքսի այս խոսքերի նշանակությունն մոռացե՞լ են արդյոք յերբևիցե այն մարդիկ, վորոնք դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ժերոնհեցնում են «յակոբինիզմի» խրտվիլակով:

Ժամանակակից ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ժերոնիները, նոր-իսկրայականները, ասլարաժզենեցների հետ չեն միախառնվում, սակայն փաստորեն, իրենց լողունգների ուժով, նրանց պոչումն են գտնվում: Իսկ ասլարաժզենեցները, ուզում են ինքնալիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները, կալեդեյան հետ հաշիվը մաքրել քնքշությամբ, ռեֆորմատորական, — ղիջողաբար, չվերավորելով արիստոկրատիային, ազնվականությանը, արքունիքին, — զուլյե, առանց վորևե բեկման, — սերտելիր և քաղաքավարի, ազատասիրի, սպիտակ ձեռնոց հագնելով (այն ձեռնոցների նման, վոր բալե-բոզուկի ձեռքից հանելով հագավ պ. Պետրունկևիչն այն ժամանակ, յերբ Նիկոլայ Արյունարբուն ընդունեց «ժողովրդի ներկայացուցիչներին» (?): Տես «Пролетарий» № 5*:

Ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի յակոբինները, — բոլշևիկները, վպերյորդականները, համազումարականները կամ պրոլետարեցները[63], չգիտեմ եղ՝ ինչպես ասեմ,՝ — ուզում են իրենց լուծարեցնելու դաշնակցով հեղափոխական և հանրապետական մանր բուրժուազիայի հետ, վորպեսզի հեղափոխական և հանրապետական մանր բուրժուազիային և մանավանդ գյուղացիությանը բարձրացնել պրոլետարիատի հետևողական դեմոկրատիզմի մակարդակին, պրոլետարիատին, վոր պահպանել է իր դասակարգային լիակատար առանձնությունը: Նրանք ուզում են, վոր ժողովուրդը, այսինքն պրոլետարիատն ու գյուղացիությունը, միասնության ու արիստոկրատիայի հետ հաշիվը մաքրի «պլեբեյորեն», անխնա վոչնչացնելով

* Մարքս, «Գրական ժառանգություն»: ԽՄԲ.

** Տես Ցերկների VII հատ. «Հեղափոխականները սպիտակ ձեռնոցներով» հոդվածը, եջ 358 — 361: ԽՄԲ.

աղատութեան թշնամիներին, ուժով ճնշելով նրանց դիմադրութիւնը, վոչ մի դիջում չանելով ճորատարերութեան, ասիականութեան, մարդու անարգման նզոված ժառանգութեանը:

Այս, իհարկե, չի նշանակում, թե մենք ուզում ենք պարտադրաբար նմանվել 1793 թվականի յակոբիններին, փոխ առնել նրանց հայացքները. ծրագիրը, լոզունգները, գործելու եղանակը: Ինձ վոչ: Մեր ծրագիրը վոչ թե հին, այլ նոր է — ՌՍԴՌԿ մինիմում-ծրագիրը: Մենք նոր լոզունգ ունենք՝ պրոլետարիատի և դյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա: Մենք, յերբ ապրենք մինչև հեղափոխութեան իսկական հաղթանակը, գործադրութեան նոր յեղանակներ ել կունենանք, վորոնք կհամապատասխանեն սոցիալիստական լիակատար հեղաշրջմանը ձըղտող՝ բանվոր դասակարգի կուսակցութեան բնութեին և նպատակներին: Մենք մեր արած համեմատութեամբ միայն ուզում ենք պարզել, վոր XX դարի առաջավոր դասակարգի, պրոլետարիատի ներկայացուցիչները, այսինքն սոցիալ-դեմոկրատները նույնպիսի յերկու թևի յեն բաժանվում (ոպորտունիստական և հեղափոխական), ինչպիսի թևերի բաժանվում եյին նաև XVIII դարի առաջավոր դասակարգի, բուրժուազիայի ներկայացուցիչները, այսինքն ժիրոնդիստներն ու յակոբինները: Միայն դեմոկրատական հեղափոխութեան դեպքում պրոլետարիատի ձեռքերը կաշկանդված չեն լինի անհետևողական բուրժուազիայի դեմ մղած կռվում, միայն այդ դեպքում նա չի «լուծվի» բուրժուական դեմոկրատիայի մեջ, այլ ամբողջ հեղափոխութեան վրա իր պրոլետարական կամ, ավելի ճիշտ պրոլետարական-գյուղացիական հնիքը կդնի:

Մի խոսքով՝ վորպեսզի պրոլետարիատն անհետևողական բուրժուական դեմոկրատիայի դեմ մղած կռվում կաշկանդված ձեռքներով չմնա, նա պետք է բավականաչափ պիտակից և ուժեղ լինի, վոր հեղափոխական ինքնագիտակցութեան հասցնի գյուղացիութեանը, վոր զինավարի նրա դրոշը, վոր այդպիսով ինքնուրույն կերպով կիրառի հետևողական-պրոլետարական դեմոկրատիզմը:

Ահա ինչպես է դրված նոր-իսկրայականների այնքան անհաջող լուծած հարցը, վոր վերաբերում է անհետևողական բուրժուազիայի դեմ մղած կռվում ձեռքերը կաշկանդված ունենալու վտանգին: Բուրժուազիան մեզ համ անհետևողական կլինի: Ավելի նպիվ ու անպատուղ բան չկա, քան զգել այն պայմաններն ու կետերը*, վորոնց կատարման ժամանակ կարելի կլիներ բուրժուական դեմոկրատիայի անշողոքորթ բարեկամը համարել: Մի խոսքով, պրոլետարիատը կարող է դեմոկրատիզմի համար հետևողական մարտիկ լինել: Նա դեմոկրատիզմի հաղթական մարտիկ կարող է լինել միմիայն այն պայմանով, յեթե նրա հեղափոխական կռվին միանա գյուղացիութեան մասսան: Դրա համար յեթե հերթը չանեն պրոլետարիատի ուժերը — բուրժուազիան դեմոկրատական հեղափոխութեան գլուխ կկանգնի և նրան անհետևողական և չամրացրած կտա: Դրան խանգարելու այլ միջոց չկա, բացի պրոլետարիատի ու գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայից:

Այսպիսով մենք գալիս ենք այն անկասկածելի յեզրակացութեան, վոր հենց նոր-իսկրայական տակտիկան է, վոր, բան իր որչափով նշանակութեան, ձեռնտու յե բուրժուական դեմոկրատիային: Կազմակերպչական ճամպրուկի քարոզը, վոր հանում է պլեխանովների, համաձայնութեան սկզբունքի, կուսակցական դրականութեան՝ կուսակցութեունից կտրված լինելուն, — զինված ապստամբութեան խնդիրների նվաստացումը, — հեղափոխական պրոլետարիատի և միապետական բուրժուազիայի համաժողովրդական քաղաքական լոզունգների չեզոքումը, — «ցարիզմի դեմ հեղափոխութեան վճռական հաղթութեան» պայմանների խեղաթյուրումը, — այս ամենը միատեղ առած՝ հենց պրչականութեան այն քաղաքականութեունն է հանդիսանում հեղափոխական մոմենտում, վորը մոլորեցնում է պրոլետարիատին, կամալսիզմի մեջ, նախանձախնդրութեան և մտցնում նրա դիտակցութեան մեջ, նախատացնում է սոցիալ-դեմոկրատիայի տակտիկան, փոխանակ հաղթության միակ ուղին ցույց տալու և պրոլետարիատ լոզունգին մեջ ցնելու ժողովրդի հեղափոխական ու հանրապետական բոլոր ուժերը*:

IX. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԼԻՆԵԼ ԾԱՅՐԱՀԵՂ ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերադառնանք ժամանակավոր կառավարության մասին յեղած բանաձևին: Մենք ցույց տվինք, վոր նոր-իսկրայականների տակտիկան հեղափոխությունը չարժում է վոչ թե դեպի առաջ, — վորի հնարավորությունը նրանք կուզեյին ապահովել իրենց բանաձևով, — այլ դեպի յետ: Մենք ցույց տվինք, վոր հենց այդ տակտիկան է կաշկանդում սոցիալ-դեմոկրատիայի ձեռքերը անհետևողական բուրժուազիայի դեմ կռվելիս և չի ապահովում բուրժուական բուրժուազիայի մեջ լուծվելուց: Հասկանալի յե, վոր ժողովրդական դեմոկրատիայի մեջ լուծվելուց առաջ և առաջ բանաձևի առաջ նախադրյալներից առաջ յեղրակացություն և առաջ վում. «Սրա համար սոցիալ-դեմոկրատիան չպետք է իրեն նպատակ դնի իշխանությունը գրավել կամ կիսել ժամանակավոր կառավարության մեջ, այլ պետք է միա ծայրահեղ հեղափոխական ոպոզիցիայի կուսակցություն»: Նայեցեք այդ յեղրակացության

* Ինչպես փորձում եր անել Ստարովերը իր՝ III համագումարի մեծամասնության անունից, և ինչպես կոնֆերանսն է փորձում իր վոչ պակաս անհաջող բանաձևում:

* Այնուհետև բաց են թողնված VII գլուխը «Պահպանողականներին կառավարությունից հեռացնելու տակտիկան» և VIII գլ. «Ազգայնամոլական կուսակցությունն ու նոր իշխանությունը», այս գլուխներին կցված ներածական առգրով մեկտեղ: Այս գլուխները տես Յերկերի մեջ, հատոր VIII էջ 66—76: ՀՄԲ.

առաջին կեսին, վորը վերաբերում է նպատակադրումներին: Սր-
ղյոք նոր-իսկրայականները սոցիալ-դեմոկրատական դործնեյու-
թյան նպատակ դնո՞ւմ են հեղափոխության վճռական հաղթու-
թյունը ցարիզմի վրա: — Դնում են: Նրանք չեն կարողանում ճիշտ
ձևակերպել վճռական հաղթության պայմանները, խոտորվելով
«սոցիալ-դեմոկրատական» ձևակերպման կողմը, բայց հիշված նպա-
տակը դնում են: Հետո, արդյոք նրանք ժամանակավոր կառավա-
րությունը կապո՞ւմ են ապստամբության հետ: — Այո, ուղղակի
կապում են, ասելով, թե ժամանակավոր կառավարությունը «յեր-
նում է ժողովրդական հաղթական ապստամբությունից»: Վերջա-
պես, արդյոք նրանք երեսից նպատակ դնո՞ւմ են ապստամբության
ղեկավարությունը: — Այո, նրանք պ. Սորուվլեյի նման, խուսա-
փում են ապստամբությունը անհրաժեշտ և անհետաձգելի ճանա-
չելուց, բայց պ. Սորուվլեյից տարբերվելով միաժամանակ ասում
են, թե «սոցիալ-դեմոկրատիան ձգտում է այն (ապստամբու-
թյունը) իր ազդեցությանը և ղեկավարությանը յենթարկելու և
բանվոր դասակարգի շահերի համար ոգտագործելու»:

Ճիշտ է, չէ՞, ինչպես կպակցված է դուրս դալիս այդ: Մենք
մեզ նպատակ ենք դնում թե պրոլետարական և թե վոչ-պրոլետա-
րական մասսաների ապստամբությունը մեր ազդեցությանը յեն-
թարկել, մեր ղեկավարությանը, մեր շահերի համար դործադրել:
Մենք, հետևաբար, մեզ նպատակ ենք դնում ապստամբության ժա-
մանակ ղեկավարել թե պրոլետարիատը և թե հեղափոխական բուր-
ժուազիան («վոչ-պրոլետարական խմբ-
րերը»), այսինքն ապստամբության ղեկավարությունը «բաժանել»
սոցիալ-դեմոկրատի և հեղափոխական բուրժուազիայի միջև:
Մենք մեզ նպատակ ենք դնում ապստամբության հաղթությունը,
վոր պետք է ժամանակավոր կառավարություն հաստատելուն հան-
ցնի մեզ («վոր ձնվել և ժողովրդական հաղթական ապստամբու-
թյունից»): Ուստի... ուստի մենք չպետք է մեզ նպատակ դնենք
իշխանությունը դրավել կամ ժամանակավոր հեղափոխական կա-
ռավարության մեջ իշխանությունը բաժանել!!

Մեր բարեկամները վոչ մի կերպ չեն կարողանում ծայրը ծայ-
րին հասցնել: Նրանք ստանում են ապստամբությունից հրաժար-
վող պ. Սորուվլեյի հայեցակետի և հեղափոխական սոցիալ-դեմո-
կրատիայի հայեցակետի միջև, սոցիալ-դեմոկրատիայի, վորը կոչ
և անում ձեռնամուխ լինել այս անհետաձգելի խնդրին: Նրանք
ստանում են անարխիզմի միջև, վոր սկզբունքորեն դատապար-
տում է ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ ամեն
մի մասնակցություն, իբրև պրոլետարիատի դավաճանություն, և
պարքսիզմի միջև, վորը պահանջում և նման մասնակցություն այն
պայմանով, վոր սոցիալ-դեմոկրատիան ղեկավար ազդեցություն
ունենա ապստամբության վրա*: Նրանք վոչ մի ինքնուրույն դիրք

* Տես «Пролетарий» № 3, «Ժամանակավոր հեղափոխական կառավարու-
յան մասին», յերկրորդ հոդված: (Տես Յերկերի հատ. VII, էջ 323—329 ՌՄԲ.):

չունեն — վոչ պ. Սորուվլեյի դիրքը, վորը ցանկանում է սակարկել
ցարիզմի հետ և դրա համար պետք է խուսափի և պատեպատ ընկնի
ապստամբության հարցում, — վոչ անարխիստների դիրքը, վորոնք
դատապարտում են ամեն մի գործողություն «վերևից» և ամեն մի
մասնակցություն բուրժուական հեղափոխության մեջ: Նոր-իսկրա-
յականները չկորցնում են ցարիզմի հետ հնգելիք գործարքը և ցա-
րիզմի հանդեպ տանելիք հաղթությունը:

Նրանք կամենում են մասնակցել բուրժ. հեղափոխությանը:
Նրանք մի քիչ առաջ են անցել Մարտինովի «Յերկու դիկտատու-
րայից»[64]: Նրանք համաձայն են նույնիսկ ղեկավարելու ժողովրդի
ապստամբությունը, բայց այն պայմանով, վոր հաղթությունից
հետո (կամ, դուցե, հաղթությունից անմիջապես առա՞ջ) խուսա-
վոր չոգտվեն հաղթության պտուղներից, այլ բոլոր պտուղները
բուրժուազիային հանձնեն ամբողջությամբ: Նրանք այդ անվա-
նում են «ապստամբությունն ոգտագործել բանվոր դասակարգի
շահերի համար»...

Այդ խառնավնթորության վրա ելի կանգ առնելու կարիք չկա:
Ավելի ոգտավետ է այդ խառնավնթորության ծագումը դիտել
նրա այն ձևակերպման մեջ, վորն ասում է՝ «մեզ ծայրահեղ հե-
ղափոխական ոպոզիցիայի կուսակցություն»:

Մեր առաջին և միջազգային հեղափոխական սոցիալ-դեմոկրա-
տիայի ծանոթ դրույթներից մեկը: Այս բոլորովին ճիշտ դրույթ է:
Նա պարլամենտական յերկրներում ռևիզիոնիզմի կամ ոպոր-
տունիզմի բոլոր հակառակորդների համար պարձել և ընդհանուր
տեղն: Նա քաղաքացիության իրավունք և ձևք բերել, ինչպես
որինական և անհրաժեշտ դիմադրություն «պարլամենտական կրե-
տինիզմին», միլյերանիզմին: Մեր բարի նոր-իսկրայա-
կանները այս լավ դրույթին անդիր են արել և յեռանդագին կիրա-
ռում են... բոլորովին անտեղի: Պարլամենտական պայքարի կա-
տեդրիաները մոցվում են բանաձևերի մեջ, վորոնք դրված են
այնպիսի պայմանների համար, յերբ առկա վոչ մի պարլամենտ
կան սիռուացիայի արտացոլումն ու արտահայտություն և յեղել,
յերբ վոչ վոք լրջորեն չի խոսում ապստամբության վրա, յերբ ապստամբու-
մասրեն վոխադրվում է մի սիռուացիայի վրա, յերբ նրա դեկավարման մասին մոռածում և
թյունն սկսվել է, և յերբ նրա դեկավարման բոլոր կոմբինացիաները: Հենց այն
խոսում են հեղափոխության բոլոր կողմնակիցները: Հենց այն
դիրքերում «մնալ» ցանկանալը, վոր դրված ունեին առաջ ել,
այսինքն միայն «ցածից» դործելու ժամանակ, չուք ու չոնդով ար-
տահայտվում է հենց այն ժամանակ, յերբ հեղափոխությունը ոգը-
տության հաղթության դեպքում վերից գործելու անհրաժեշ-
տության հարցն է դրել:

Վոչ, մեր նոր–իսկրայականների բախտը չի բերում վճռական նպատակ: Նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք սոցիալ–դեմոկրատական ճիշտ դրույթ են ձևակերպում, չեն կարողանում ճիշտ կիրառել այն: Նրանք չեն մտածել, թե ինչպես պարլամենտական պայքարի հանգամանքներն ու տերմիններն օգտակարվում են իրենց հակադրությանն ու վերածվում սկզբած հեղափոխության դարաշրջանում, երբ չկա պարլամենտ, երբ տակա չի քաղաքական պատերազմը, տակա չեն ապստամբության բռնկումները: Նրանք չեն մտածել, որ այն պայմաններում, որոնց մասին է խոսքը, ուղղումներն առաջարկվում են փողոցային ցույցերի միջոցով, հարցապնդումներն արվում են զինված քաղաքացիների հարձակողական գործողությունների միջոցով, կառավարության դեմ լինելիք ոտղիցիան իրականանում է կառավարության բռնի տապալման միջոցով:

Ինչպես վոր մեր ժողովրդական վեպի հայտնի հերոսը լավ խորհուրդները կրկնում էր ճիշտ այն ժամանակ, երբ նրանք անտեղի չեն, այնպես էլ Մարտինովի մեր յերկրպագուները խաղաղ պարլամենտարիզմի դասերը կրկնում են ճիշտ այն ժամանակ, երբ նրանք իրենք են հավաստում ուղղակի ռազմական գործողությունների սկիզբը: Ամենի կուրծող բան չկա, քան «ծայրահեղ ոտղիցիա» լոզունգն այդպես լրջորեն առած քաշելն այն բանաձևում, վորն սկսում է «հեղափոխության վճռական հաղթանակը», «ժողովրդական ապստամբությունը» մասնանշելով: Մեկ մտածեցեք, պարոններ, թե ինչ է նշանակում «ծայրահեղ ոտղիցիա» լինել ապստամբության եղելության: Արդյոք այդ նշանակում է կառավարությունը մերկացնել, թե՞ տապալել: Արդյոք այդ նշանակո՞ւմ է կառավարությանը դեմ քվեարկել, թե՞ նրա զինվորական ուժերին բաց ճակատամարտում պարտություն պատճառել: Արդյոք այդ նշանակո՞ւմ է կառավարությանը մերժել նրա դանձարանը լցնելը, թե՞ այդ նշանակում է այս դանձարանը հեղափոխական կառավարությանը մերժել: Ահա թե ինչ է նշանակում «ծայրահեղ ոտղիցիա» լինելը, թե՞ այդ նշանակում է այս դանձարանը հեղափոխական կանոնորեն գրավել ապստամբության կարիքներին հատկացնելու համար, բանվորներին ու գյուղացիներին զինելուն, Սահմանադիր ժողովի ընկնել, պարոններ, վոր «ծայրահեղ ոտղիցիայի» հատկացրած գումարները միայն բացառական գործողությունների և արտահայտության, — մերկացնել, քվեարկել, մերժել: Ինչո՞ւ չի այդպես: Վորովհետև այդ հատկացումները միայն պարլամենտական պայքարին և վերաբերում, այն էլ այնպիսի եղելություններում, երբ վոչ վոք պայքարի անմիջական նպատակը «վճռական հաղթանակը» չի դնում: Արդյոք դուք չե՞ք սկսում հասկանալ, վոր այս տեսակետից դարձն անմիջապես փոխվում է, երբ քաղաքականապես ճնշված ժողովրդի՝ ամբողջ ղեկով վճռական դերն է սկսվում հանուն հաղթության կատարվելն կովելու համար:

Բանվորները մեզ հարցնում են, թե արդյոք պե՞տք է յեռանդագին ձեռք արկել ապստամբության անհետաձգելի գործին:

Ի՞նչպես անենք, վոր սկսված ապստամբությունը հաղթական լինի: Ի՞նչպես ոգտվենք հաղթությունից: Այն ժամանակ ի՞նչ ծրագիր կարելի յե և պետք է իրականացնել: Մարքսիզմը խորացնող նոր–իսկրայականները պատասխանում են՝ — մնալ ծայրահեղ հեղափոխական ոտղիցիայի կուսակցություն... և, մի՞թե մենք իրավանելով:

X. «ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱՆԵՐԸ» ՑԵՎ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Նոր–իսկրայականների կենֆերանսը չկարողացավ մնալ անարխատական այն դիրքում, մինչև վորը հասավ նոր «Искра»–ն (մի՞թե այն «ցածից» և վոչ թե «ցածից և վերից»): Զարթոնքը ակնթարթորեն ավերեց այն անհեթեթությունը, երբ ընդունում էին ապստամբության և չէին ընդունում հաղթությունն ու ժամ. հեղափ. կառավարությանը մասնակցելը: Ուստի բանաձևը վերապահումներ ու սահմանափակումներ մտցրեց հարցի՝ Մարտինովի ու Մարտովի լուծման մեջ: Դիտենք այդ վերապահումները, վորոնք չարաշրջված են բանաձևի հետագա մասում.

«Այս տակտիկան («ծայրահեղ հեղափոխական ոտղիցիայի կուսակցություն մնալ»), իհարկե, բնավ չի բացառում իշխանության մասնակի, եպիզոդիկ կերպով գրավելու և այս կամ այն քաղաքում, այս կամ այն ռայոնում հեղափոխական կոմունաներ կազմակերպելու նպատակահարմարությունը՝ բացառապես ապստամբության տարածմանը և կառավարության կազմալուծմանը ոժանդակելու համար:

Եվթե այդպես է, նշանակում է՝ սկզբունքով ընդունվում է գործողություն վոչ միայն ցածից, այլ նաև վերից: Նշանակում է «Искра»–ում (№ 93)[35] Լ. Մարտովի զետեղած հայտնի ֆեյլետոնի մեջ առաջադրված դրույթը ապալրվում է, և ճիշտ է ճանաչվում «Вперед» լրագրի տակտիկան՝ վոչ միայն «ցածից», այլ նաև «վերից»:

Իրողությունն այն է, վոր մեզանում վոչ միայն չավարտանց են տարվում ապատամբության խնդիրներով, ընդհանուր-քաղաքական լոզունգներով, ժողովրդական ամբողջ հեղափոխության դեկավարման գործով, այլ, ընդհակառակը, հենց այս կողմով յետ մնալն աչք և ծակում, ամենահիվանդոտ տեղն է, ուստի վտանգ է ներկայացնում և խոչընդոտում հեղափոխական չարժման համար, վորը կարող է այլասերվել և տեղ-տեղ այլասերվում է, դործով հեղափոխական չարժում լինելուց վերածվում է դատարկ աղմուկի և խոսքով հեղափոխական չարժման: Դուք կուսակցության աշխատանքը կատարող չատ ու չատ հարյուրավոր կազմակերպություններից, խմբերից ու խմբակներից վոչ մեկը չեք դանի, վորի մեջ նրա ծագումից սկսած էկատարվեր ամենորյա այն աշխատանքը, վորի մասին նոր ճշմարտություններ հայտնաբերած մարդկանց տեսքով բարբառում են նոր «Искра»-ի խմբագրության անդամները: Ցավ, ընդհակառակը, խմբերի ու խմբակների չնչին տոկոս կդրանք, վորոնք գիտակցել են պինված ապատամբության խնդիրները, անցել են նրանց կատարմանը, իրենց հաշիվ են տվել ցարիզմի դեմ ժողովրդական ամբողջ հեղափոխությունը դեկավարելու անհրաժեշտության մասին, սրա համար հենց այսպես, և վոչ ուրիշ տեսակ, առաջավոր լոզունգներ առաջ քաշելու անհրաժեշտ դրության մասին:

Մենք անչերևակայելի չափով չատ ենք ծնացել իսկապես հեղափոխական խնդիրներից, մենք բաղմաթիվ դեպքերում չենք դիտակցել այդ, մենք աչքներ ու այտեղ աչքաթող ենք արել հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի ուժեղացումն ի հաշիվ մեր չատ ծնալուն այս կողմից: Իսկ նոր «Искра»-ի դրոշները, թիկունք դարձնելով դեպքերի ընթացքին և ժամանակի պահանջներին, համառորեն պնդում են — մի մոռանաք հինը, մի մի տարվեք նորով: Կոնֆերանսի բոլոր եյական բանաձևերի հիմնական անփոփոխ մոտիվն է այդ, մինչդեռ համապատասխան բանաձևերում դուք նույնպես անփոփոխ կարդում եք — հատատելով հինը (և կանգ չառնելով այդ հինը վորոճալու վրա հենց այն պատ-

հառով, վոր նա հին է, արդեն լուծված և ամբապնդած է դրական նությամբ, բանաձևերով ու վորոշում), նոր խնդիրը ենք առաջ քաշում, ուշադրություն ենք դարձնում նրան, նոր լոզունգ ենք դնում, իրոք հեղափոխական սոցիալ-դեմոկրատներից պահանջում ենք անհապաղ աշխատանք կատարել այն կենսագործելու համար:

Ահա ինչպես է դրված իրականում սոց.-դեմ.-ի տակտիկայի մեջ յերկու հոսանքի հարցը: Հեղափոխական դարաշրջանը նոր խնդիրներ է առաջ քաշել, վորոնք մինչև բոլորովին կույր մարդիկ չեն տեսնում: Ցեվ սոցիալ-դեմոկրատներից վոմանք վճռականորեն ընդունում են այս խնդիրները և որվա հերթի դնում. — պինված ապատամբությունն անհետաձգելի յե, անհապաղ և յուրաքանչյուր պատրաստվեցեք նրա համար, հիշեցեք, վոր այն անհրաժեշտ է վճռական հաղթության համար, դրեք հանրապետության, ժամանակավոր կառավարության, պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի լոզունգները: Իսկ ուրիշներն յես են սողում, մի տեղում կանգնած՝ դեմին են ծեծում, լոզունգների փոխարեն առաջարկներ են տալիս, փոխանակ հնի հատատման կոդքին նորի ցուցմունք տալու, ընդարձակորեն ու տաղտկալի ծամծմում են այդ հինը, նոր խնդրից հրաժարվելու խոսքեր հեղինակում, չկարողանալով վորոշել վճռական հաղթության պայմանները, չնորհք չունենալով լիակատար հաղթանակի հասցնելու ձգտմանը մինակ համապատասխան լոզունգներ առաջ դրելու:

Այդ պռչականության քաղաքական հեռանքն աչքներիս առաջ է: ՌՍԴՐԿ «մենշևիկյան» հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի հետ մերձենալու հեքիաթը հեքիաթ է մնում, վորը չի հատատվում և վոչ մի քաղաքական փաստով, «մենշևիկյան կանոնների» և վոչ մի ազդեցիկ բանաձևով, ՌՍԴՐԿ III համագումարի և վոչ մի ակտով: Այն ինչ ոպորտունիստական, միխայելական բուրժուազիայի ի դեմս «Освобождение»-ի, վաղուց հետե վաղուց ենք ենում, որ նա-իսկրայականության «սկզբունքային» տենդենցները, իսկ այժմ արդեն ուղղակի նրանց ջրով և պատեցնում իր ջրադացը, վորդեղրում է նրանց բոլոր բառերն ու «գաղափարիկները» «կոնստիտուցիայի» և «բունտի» դեմ, հեղափոխության «տեխնիկական» կողմը չափազանցելու դեմ, պինված ապատամբության լոզունգն ուղղակի առաջադրելու դեմ, ծայրահեղ պահանջների «հեղափոխականության» դեմ և այլն և այլն: Կովկասի սոցիալ-դեմոկրատական «մենշևիկների» ամբողջ կոնֆերանսի բանաձևը և այդ բանաձևի՝ «Искра»-ի խմբագրության կողմից հավանության դրական նախանձելի քաղաքական յերես դարձնի, յերը պրոլետարիատը չէինի թե բուրժուազիան – դեմոկրատական դիկտատուրային: Դրանով ամեն ինչ ասված է: Դրանով վերջնականապես ամբողջովին հեղափոխական պնդված է պրոլետարիատի՝ միխայելական բուրժուազիայի արբանյակը դառնալը: Դրանով իրոք ապացուցված է, վոչ թե մի

անձի պատահական հայտարարությամբ, այլ ամբողջ մի ուղղության հատուկ հավանությունը գտած բանաձևով ապացուցված և նոր-իսկրայական պրոլետարության հաղաքական նշանակությունը:

Ով մտքով խորանում է այդ երեզրությունների մեջ, նա կհասկանա սոցիալ-դեմոկրատական չարժման յերկու կողմի և յերկու տենդենցի սովորական նշումների իսկական նշանակությունը: Վերջինիս բերնշանիքան, վորպեսզի խոշոր մասշտաբով ուսումնասիրենք այդ տենդենցները: Զե վոր բերնշանիքանները կետ առ կետ պնդում եյին և պնդում են, թե հենց միայն իրենք են հասկանում պրոլետարիատի իսկական կարիքները, նրա ուժերի աճման, ամբողջ աշխատանքի խորացման, նոր հասարակության տարրերի նախապատրաստման, պրոպագանդի և ագիտացիայի խնդիրները: Մենք պահանջում ենք բացեիբաց ընդունել այն, ինչ վոր կա, — ասում է Բերնշտայնը, դրանով սրբագործելով առանց «վերջնական նպատակի» «չարժումը», սրբագործելով միայն պաշտպանողական տակտիկան, քարոզելով յերկյուղի տակտիկան, «չլինի թե բուրժուազիան յերես դարձնի»: Ցեվ բերնշտայնականները եյին աղաղակում հեղափոխական սոցիալ-դեմոկրատների «յակորինիզմի» մասին, «գրականագետների» մասին, վորոնք չեն հասկանում «բանվորական ինքնագործունեության» և այլն, և այլն: Իրապես, ինչպես ամենքին հայտնի յե, հեղափոխական սոցիալ-դեմոկրատները չեն ել մոռացել աչքաթող անել ամենօրյա և մանր աշխատանքը, ուժերի նախապատրաստումը և այլն և այլն: Նրանք միայն պահանջում եյին վերջնական նպատակի պարզ գիտակցություն, հեղափոխական խնդիրների պարզ դրում, նրանց ցանկանում եյին կիսապրոլետարական և կիսա-մանր-բուրժուական խավերը բարձրացնել պրոլետարիատի հեղափոխականության աստիճանին և վոչ թե վերջինս իջեցնել մինչև ոպորտունիստական նկատառությունները, թե, «չլինի թե բուրժուազիան յերես դարձնի»: Կուսակցության ինտելիգենտական-ոպորտունիստական թևի և պրոլետարական-հեղափոխական թևի միջև այդ ներհակության ամենացայտուն արտահայտությունը դժվար թե այն հարցը չե, թե dürfen wir siegen? «կհամարձակվե՞նք արդյոք հաղթել». մեզ արդյոք թույլատրելի՞ յե հաղթել. վտանգավոր չե՞ արդյոք մեր հաղթելը. հարկ կա՞ արդյոք, վոր մենք հաղթենք[68]: Սակայն այս, առաջին հայացքից տարօրինակ, հարցը ղրված եր և պետք է ղրված լիներ, վորովհետև ոպորտունիստները վախենում եյին հաղթությունից, պրոլետարիատին խրտնեցնում եյին նրանից, փորձանքներ եյին դուշակում եյին նրանից, ծաղրում եյին ուղղակի դեպի այդ հաղթանակը կոչող լոզունգները:

Նույն հիմնական բաժանումն ինտելիգենտական-ոպորտունիստական տենդենցի և պրոլետարական-հեղափոխական տենդենցի՝ մեզանում ել կա, միայն այն խիստ եական տարբերությամբ, վոր խոսքը վերաբերում է վոչ թե սոցիալիստական, այլ դեմոկրատական հեղաշրջմանը: Մեզանում ել ղրված և նույն, առաջին հայացքից անհեթեթ, հարցը՝ «կհամարձակվե՞նք արդյոք հաղթել»: Այս հարցը ղրել է Մարտինովը իր «Յերկու դիկտատուրայում», վորը փորձանքներ և դուշակում այն բանից, յեթե մենք շատ լավ նախապատրաստենք և լիակատար հաղթությամբ կատարենք ապստամբությունը: Այս ղրված է նոր-իսկրայականների ամբողջ դպրության, և յեռանդուն, բայց անհաջող կերպով ամբողջ ժամանակ աշխատում եյին Մլյեչինի՝ բուրժուական-ոպորտունիստական հեղափոխական կառավարության մասնակցելու հետ: Այս հատատված է «չլինի թե բուրժուազիան յերես դարձնի» բառնաձևով: Ցեվ Թեպետ Կաուցկին, որինակ, փորձում է այժմ հեղինել, վոր ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին յեղած մեր վեճերը իբր թե նման են դեռևս չսպանված արջի մորթին բաժան-բաժան անելուն[69], բայց այդ հեղինաքը ցույց է տալիս միայն, թե ինչպես խեղդ և հեղափոխական սոցիալ-դեմոկրատներն անդամ սխալի մեջ են ընկնում, յերբ խոսում են այդ մասին, ինչ վոր լսելով դիտեն: Գերմանական սոցիալիստական տիան դեռ այնքան ել մոտ չե արջ սպանելուն (սոցիալիստական հեղաշրջում կատարելուն), բայց վեճն այն մասին, թե մենք «կհամարձակվենք» արդյոք սպանել նրան, սկզբունքային և դործնական-քաղաքական ահագին նշանակություն է ունեցել: Ռուսական սոցիալ-դեմոկրատները դեռ այնքան ել մոտ չեն այն բանին, վոր «իրենց արջին սպանել» (դեմոկրատական հեղաշրջում կատարել) կարողանան, բայց այն հարցը, թե «կհամարձակվենք» արդյոք սպանել նրան, Ռուսաստանի ամբողջ ապագայի և ռուսական սոցիալ դեմոկրատիայի ապագայի համար չափազանց լուրջ նշանակություն ունի: Խոսք ել չի կարող լինել յեռանդով, հաջողությամբ բանակ հավաքելու մասին, նրան դեկավարելու մասին, յեթե վստահություն չլինի, թե մենք «կհամարձակվենք» հաղթել:

Վերցրեք մեր հին եկոնոմիստներին, յակորինները, են (տես «Рабочее Дело», մանավանդ №10–ը[70], և Մարտինովի ճառը II համագումարում ծրագրին վերաբերող վիճաբանությունների) ժամանակ), թե իրենք՝ քաղաքականության մեջ նեավելով՝ կորցրած են մասսայից, թե իրենք մոռանում են բանվորական չարժման հիմքերը, հավիտ չեն առնում բանվորական ինքնագործունեությունը և այլն և այլն: Այնինչ իրոք «բանվորական ինքնագործունեության» այդ կողմնակիցներն ինտելիգենտա-ոպորտունիստներ եյին, վորոնք բանվորների վրին եյին փաթաթում պրոլետարիատի խնդիրների իրենց նեղ ու փիլիստերական հասկացողությունը: Իրոք եկոնոմիզմի հակառակորդները, ինչպես ամեն վոք կարող է տեսնել հին «Искра»-ից, չեն լքել և յեթե կարդը չեն քաշել սոցիալ-դեմոկրատական աշխատանքի վրէ մի կողմը, բնավ չեն մոռացել տեսական կրթվ, կարողանալով միաժամանակ ամբողջ լայ-

նությամբ պնել եյական և հերթական քաղաքական խնդիրները, հա-
կադրնելով բանվորական կուսակցությունը լիբերալ բուրժուա-
զիայի «անաեսական» մի կցորդը դարձնելուն:

Եկոնոմիստներն անդադար սերտել են թե քաղաքականության
հիմքն եկոնոմիկան ե, և այս այնպես են «հասկացել», թե հարկա-
վոր ե քաղաքական կռիվը նվաստացնել–իջեցնել, մինչև անտեսա-
կան կռվի աստիճանը: Նոր–իսկրայականներն անդադար սերտել
են, թե դեմոկրատական հեղաշրջումը իր տնտեսական հիմքում
պարունակում ե բուրժուական հեղափոխություն, և այս այնպես
են «հասկացել», թե հարկավոր ե պրոլետարիատի դեմոկրատա-
կան խնդիրներն ստորացնել մինչև բուրժուական չափավորության
մակարդակը, մինչև այն սահմանը, վորից դենը «բուրժուազիան
յերես կդարձնի»: Եկոնոմիստներն աշխատանքի խորացման պատր-
վակով, բանվորական ինքնագործնեության և դուս–դասակար-
գային քաղաքականության պատրվակով, բանվոր դասակարգին
իրոք հանձնում եյին լիբերալ–բուրժուական քաղաքագետների
ձեռքը, այսինքն կուսակցությունը տանում եյին մի ուղիով, վորի
ճիշտ նույն պատրվակներով, բուրժուազիայի ձեռքն են իրոք հանձ-
նում պրոլետարիատի չահերը դեմոկրատական հեղափոխության
մեջ, այսինքն կուսակցությունը տանում են մի ուղիով, վորի ոբ-
յեկտիվ նշանակությունը հենց այդ ե: Եկոնոմիստներին թվում ե,
թե քաղաքական կռվի գլխավորումը սոցիալ–դեմոկրատների գործը
չե, այլ հատկապես լիբերալների գործն ե: Նոր–իսկրայականներին
թվում ե, թե դեմոկրատական հեղափոխության ակտիվ կենսագոր-
ծումը սոցիալ–դեմոկրատների գործը չե, այլ հատկապես դեմո-
կրատական բուրժուազիայի գործն ե, վորովհետև պրոլետարիատի
դեկավարությունը և առաջնորդող մասնակցությունը «կիժուլացնի»
հեղափոխության «թափը»:

Մի խոսքով՝ նոր–իսկրայականները եկոնոմիզմի եպիգոններն
են վոչ մեկն ըստ իրենց ծագման՝ կուսակցության II համագումա-
րում, այլև դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի
տակտիկական խնդիրների՝ իրենց այժմյան դրումով: Նրանք —
նույնպես կուսակցության ինտելիգենտական – ոպորտունիստա-
կան թևն են: Կազմակերպության մեջ այդ թևը իր դերյակա-
ներն սկսեց ինտելիգենտների անարխիստական խնդիվիդուալիզմով
և վերջացրեց «կազմակերպում–պրոցեսով», կոնֆերանսի ընդունած
«կանոնադրության» մեջ ամրապնդելով դրականության՝ կուսակցա-
կան կազմակերպություններից կտրված լինելը, վոչ ուղղակի, դրեթե
քառասունհան ընդհատությունները, բոնապարտիստական պլեբիսցիտ-
ների սիստեմը՝ փոխանակ դեմոկրատական ներկայացուցչության,
վերջապես, մասի և ամբողջի միջև «համաձայնության» սկզբունքը:
Նրանք կուսակցության տակտիկայում նույն թեք մակարդակով
եյին գլորվում: «Ջնմասվոյական կամպանիայի պլանում»[71] նրանք
«ցույցի դերապետն տիպ» հայտարարեցին դեմոկրատների առաջ յե-

լույթ անելը՝ քաղաքական բեմի վրա մեկն յերկու ակտիվ ուժ
դանելով (հունվարի 22(9)-ի նախորյակին!)—կուսակցությունը և
բուրժուական դեմոկրատիան: Ջինման եյական խնդիրը նրանք
«խորացնում եյին», ուղղակի դրժելով ջինված ապըս-
ինքնակազմման հրատապ պահանջով զինելու կոչով: Ջինված ապըս-
տամբության, ժամանակավոր կառավարության, հեղափոխական-
դեմոկրատական դիկտատուրայի խնդիրները նրանք այժմ խեղա-
թյուրել և բթացրել են իրենց պաշտոնական բառաճևերում: «Ջինի
թե բուրժուազիան յերես դարձնի» — նրանց վերջին բանաձևի այս
յեղրակացող ակկորդը — լիակատար լույս և սիռում այն հարցի
վրա, թե նրանց ուղին դեպի ուր ե տանում կուսակցությանը:

Դեմոկր. հեղաշրջումը Ռուսաստանում, ըստ իր հասարակա-
կան-տնտեսական եյության, բուրժ. հեղափոխություն ե: Բավական
է այս ճիշտ մարքսիստական դրույթը պարզորեն կրկնելը: Պետք
և կարողանալ հասկանալ այն և քաղաքական լոզունգների նկատ-
մամբ կիրառելու չնորհք ունենալ: Առհասարակ ամբողջ քաղաքա-
կան ազատությունը, ժամանակակից, այսինքն կապիտալիստա-
կան, արտադրական հարաբերությունների հողի վրա, բուրժուա-
կան ազատություն ե: Ազատության պահանջն ամենից առաջ ար-
տահայտում ե բուրժուազիայի չահերը: Առաջինը նրա ներկայա-
ցուցիչներն են այդ պահանջը դրել: Նրա կողմնակիցներն ամենու-
րեք, իրրև տերեր, ոգտվելին ստացված ազատությունից, այն վե-
րածելով բուրժուական չափավոր ու կարգասեր չափի, այն հա-
մատեղելով հեղափոխական պրոլետարիատին խաղաղ ժամանակ
ամենանուրբ ձևով և փոթորկի ժամանակ դաղանաբար ու դա-
ժան կերպով՝ ճնշելու հետ:

Սակայն սրանից ազատության կռվի ժխտում կամ նվաստա-
ցում յեղրակացնել կարող եյին միայն բոնապար-նապրոնիկներն,
անարխիստները և մեկ ել «եկոնոմիստները»: Այդ ինտելիգենտա-
կան ֆիլիստերական ուսմունքները պրոլետարիատի վրին փոթաթել
հաջողվել և մեշա ել ժամանակավորապես, այն ել միայն հակառակ
նրա դիմադրության: Պրոլետարիատը բնազդով ըմբռնում ե, վոր
քաղաքական ազատությունն իրեն հարկավոր ե, ամենից ավելի
իրեն և հարկավոր, չնայած վոր այս ազատությունն անմիջապես
կամրապնդի և կկազմակերպի բուրժուազիային: Պրոլետարիատն
իր վերկությունն սպասում ե վոչ թե դասակարգային կռվից չեղ-
վելուց, այլ նրա զարգացումից, նրա լայնության, դիտակցության,
կազմակերպվածության, վճռականության մեծանալուց: Ով նվաս-
տացնում ե քաղաքական կռվի խնդիրները, նա սոցիալ–դեմոկրա-
տին ժողովրդական տրիբուն լինելուց զարձնում ե տրեդյունիոնի
քարտուղար[72]: Ով դեմոկրատական բուրժուական հեղափոխության
մեջ նվաստացնում ե պրոլետարական խնդիրները, նա սոցիալ–դե-
մոկրատին ժողովրդական հեղափոխության առաջնորդից զարձնում
ե բանվորական ազատ մրցության առաջնեթաց:

Այո, ժողովրդական հեղափոխության: Սոցիալ–դեմոկրատիան
լիակատար իրավունքով կռվել ե և կռվում ե «ժողովուրդ» խոսքի

բուրժուական–դեմոկրատական չարաբաղդության դեմ: Նա պահանջում է, որ այս խոսքով չբռնազբկվի ժողովրդի ներսի դասակարգային հակամարտությունները չմթագնվի: Նա անպայման պնդում է, թե պրոլետարիատի կուսակցության անհրաժեշտ և դասակարգային լիակատար ինքնուրույնություն: Բայց նա «ժողովուրդը» դասակարգերի չի տարաբաժանում վոչ թե նրա համար, որ առաջավոր դասակարգն ինքն իր մեջ ամփոփվելիս, իրեն նեղ–լիկ չափով սահմանափակելիս, իր գործնեությունը ներքինացներ այն նկատառումներով, թե չլինի թե աշխարհի անտեսական տեր–բերը յերես դարձնեն, այլ նրա համար, որ առաջավոր դասակարգը, չտուժելով մինչև դասակարգերի կիսատ–պռատություններից, անկայունություններից, անվճռականություններից, այնքան ավելի մեծ յեռանդով, այնքան ավելի մեծ խանդավառությամբ կռվեր ամբողջ ժողովրդի գործի համար, ամբողջ ժողովրդի գլուխ կանգնած:

Ահա թե ինչն այնքան հաճախ չեն հասկանում ժամանակակից նոր–իսկրայականները, վորոնք դեմոկրատական հեղափոխության քաղաքական ակտիվ լողունգները փոխարինում են ամեն տեղերով և ամեն հոլոմներով ռեզոնյորարար մի բառ կրկնելով՝ «դասակարգային»:

Դեմոկրատական հեղաշրջումը բուրժուական է: Սև վերաբաժանության կամ հողի ու ազատության լողունգը, — ծեծկված ու խավար, բայց բուռն կերպով լույս ու յերջանկության վորոնող գյուղացիական մասսայի այս ամենաազատածված լողունգը, — բուրժուական է: Բայց մենք, մարքսիստներս, պետք է գիտենանք, վոր դեպի պրոլետարիատի ու գյուղացիության իսկական ազատությունը տանող ուրիշ ճանապարհ չկա և չի յել կարող լինել, քան բուրժուական ազատության և բուրժուական պրոգրեսի ճանապարհն է: Մենք պետք է չմոռանանք, վոր չկա և ներկայումս չի կարող լինել սոցիալիզմը մոտեցնելու մի այլ միջոց, քան կապիտալիզմը, քան պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական–դեմոկրատական դիկտատուրան: Վորպես առաջավոր և միակ հեղափոխական, առանց վերապահումների, առանց կասկածների, առանց յեթե նայելու հեղափոխական դասակարգի ներկայացուցիչներ, մենք պետք է ինչքան կարելի է ավելի լայն, ավելի համարձակ, ավելի ձեռնհասորեն դնենք դեմոկրատական հեղաշրջման խնդիրների ամբողջ ժողովրդի առաջ: Այս խնդիրների նախատեսումը մարքսիզմի ծագրանկար է թեորիապես և նրա ֆիլիստերական խեղաթյուրումը, իսկ գործնական – քաղաքականապես հեղափոխության գործի՝ բուրժուազիայի ձեռքը հանձնելն է, վորն անխուսափելիորեն յերես է դարձնելու, յեթե հեղափոխությունը հետևողական չլինի և

դեց հյուրերի տանջալիորեն դանդաղ մղում նրա չահագործողների ձեռքով: Մոսք չկա, հեղափոխական–դեմոկրատական դիկտատուրա բայց խնդիրները հազարապատիկ ավելի դժվար և բարդ են, քան «ծայրահեղ ոպոզիցիայի» և միմիայն պարլամենտական պայքարի խնդիրները: Բայց ով ներկա հեղափոխական բոպեյում դիտակցաբեն ընդունակ է դերադասելու խաղաղ լուծն ու անվտանգ «ոպոզիցիայի» ուղին, — ավելի լավ է՝ թող նա ժամանակավորապես հեռանա սոցիալ–դեմոկրատական աշխատանքից, թող սպասի հեղափոխության վախճանին, յերբ կանցնի տոնը, նորից կկավի առաջյան, յերբ նրա առաջյա–սահմանափակ չափանիշն այնպիսի դիսսոնանս, առաջավոր դասակարգի խնդիրների այնպիսի հրեշավոր խեղաթյուրում չի լինի:

Ամբողջ ժողովրդի, և մանավանդ գյուղացիության դլուխ անցած — լիակատար ազատության համար, դեմոկրատական հեղափոխական հեղաչրջմա՞ն համար, հանրապետության՞ համար: Բոլոր աշխատավորների և չահագործվողների դլուխ անցած — սոցիալիզմի՞ համար: Գործով այսպես պետք է լինի հեղափոխական պրոլետարիատի քաղաքականությունը, այսպես պետք է լինի դասակարդային լոդունդը, վորը պետք է թափանցի և իրենով վորոշի յուրաքանչյուր տակտիկական հարցի լուծումը, բանվորական կուսակցության յուրաքանչյուր դործնական քայլը հեղափոխության ժամանակ*:

Հունիս — հուլիս, 1905 թ.

* Այստեղ բաց է թողնված այս բրոշյուրի «Վերջաբանը», վորի վերնադիրն է «Երի ամպրոպենիականությունը, նրի նոր–իսկրայականությունը» տես (Ձեր–կեր հատոր VIII, էջ 106 — 126 ու նեռկա պրքի 40–րդ ծանոթագրությունը): Խմբ.

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ[73]

1) Բանվորական չարժումը մեկ անդամից բարձրացնում է պրոլետարիատը ՌՍԴԲԿ դեկավարությամբ և զարթեցնում է լիբերալ բուրժուազիային. 1895 — 1901/2:

2) Բանվորական չարժումը քաղաքական բացահայտ կռվի է վերածվում և իրեն է մղացնում լիբերալ և ռադիկալ բուրժուազիայի և մանր բուրժուազիայի քաղաքականապես արթնացած շերտերը. 1901/2 — 1905:

3) Բանվորական չարժումը բորբոքվելով դառնում է ուղղակի հեղափոխություն, ընդ վորում լիբերալ բուրժուազիան արդեն համախմբվել է սահմանադրական–դեմոկրատական կուսակցության մեջ և մասնում է հեղափոխությունը դադարեցնելու մասին ցարիզմի հետ համաձայնության դալու միջոցով, սակայն բուրժուազիայի և մանր բուրժուազիայի ռադիկալ տարրերը հակվում են պրոլետարիատի հետ դաչինք կապելու՝ հեղափոխությունը շարունակելու համար. 1905 (մանավանդ վերջը):

4) Բանվորական չարժումը հաղթում է դեմոկրատական հեղափոխության մեջ՝ լիբերալների պասիվ ապաոդականության և գյուղացիության ակտիվ աջակցության պայմաններում: Պլյուս ռադիկալ, հանրապետական ինտելիդենցիան և մանր բուրժուազիայի համապատասխան շերտերը քաղաքներում: Գյուղացիների ապատամբությունը հաղթում է, կալվածատերերի իշխանությունը ջախջախված է:

(«Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական–դեմոկրատական դիկտատուրան»):

5) Լիբերալ բուրժուազիան, վոր սպասող դիրքում է 3–րդ շրջանում, պասիվ՝ 4–րդ շրջանում, ուղղակի հակահեղափոխական է դառնում և կազմակերպվում է՝ պրոլետարիատից հեղափոխության նվաճումները յետ խլելու համար: Գյուղացիության բավական խոշոր բողջ ունևոր մասը և մյուսակ գյուղացության բավական խոշոր մասը նույնպես «խելոքանում է», խաղաղվում է, թեքվում է հակահեղափոխության կողմը, վորպեսզի իշխանությունը պրոլետարիատի և նրան համակրող չքավոր գյուղացության ձեռքից խլի:

6) Հինդերորդ շրջանում առաջացած հարաբերությունների հողի վրա աճում և բորբոքվում է նոր կրիզիան ու նոր կռիվը, ընդ–

վորում՝ պրոլետարիատը կռվում է արդեն դեմոկրատական նվաճումները պահպանելու համար՝ հանուն սոցիալիստական հեղափոխության: Այս կռիվը գրեթե անհուսալի պիտի լիներ մի այն Ռուսաստանի պրոլետարիատի համար, և նրա պարտությունը նույնպես անխուսափելի պիտի լիներ, ինչպես գերմանական հեղափոխական կուսակցության պարտությունը 1849—50 թ. թ. կամ՝ ինչպես Ֆրանսիական պրոլետարիատի պարտությունը 1871 թ., յեթե Ռուսաստանի պրոլետարիատին ոգնության չգար յեվրոպական սոցիալիստական պրոլետարիատը:

Այսպես ուրեմն, այս չրջանում լիբերալ բուրժուազիան և ուղղակի նրա (պլյուս մասամբ մինչև) դյուղացիությունը հակահեղափոխության են կազմակերպում: Ռուսաստանի պրոլետարիատը պլյուս յեվրոպական պրոլետարիատը կազմակերպում են հեղափոխության:

Այսպիսի պայմաններում Ռուսաստանի պրոլետարիատը կարող է տանել յերկրորդ հաղթությունը: Գործն արդեն անհուսալի չէ: Յերկրորդ հաղթությունը — կլինի սոցիալիստական հեղաշրջում Յեվրոպայում:

Յեվրոպական բանվորները ցույց կտան մեզ, թե՝ «այս ինչպես է արվում», և այն ժամանակ մենք նրանց հետ միասին սոցիալիստական հեղաշրջում կենք կատարում:

Գրված է 1906 թ. սկզբներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Զեկուցում 1905 թվականի հեղափոխության մասին» Լենինը գրել է 1916 թվի դեկտեմբերի վերջին կամ 1917 թ. հունվարի սկզբին գերմաներեն լեզվով և կարդացել է 1917 թ. հունվարի 22–ին (9–ին) մի ժողովում, վորը կազմակերպել էր բանվորական յերիտասարդությունը Ցյուրիխ քաղաքի «Ժողովրդական տանը», Շվեյցարիայում, ուր ապրում էր այդ ժամանակ Լենինը: Այդ զեկուցումը ռուսերեն թարգմանությամբ առաջին անգամ տպվեց 1925 թ. հունվարի 22–ին «Պրավդա»ի № 18–ում, «Աբյունոա կիբրակվա» քաղաքորդ տարեդարձին: Զեկուցումը սեղմ ձևով տալիս է ռուսական առաջին հեղափոխության զարգացման պատկերը և նրա ընդհանուր բնութագիրը:

2. «Գապոնովշչինա»–ն, վորի հետևանքը հանդիսացավ հունվարի 22 (9)–ի «Աբյունոա կիբրակին», արդյունք էր մի պատեհության յերկրորդ, դուբասովշչինայից (տես «Վեցհատորյակի» II հատ. 213 ծանոթ.) հետո, փոքրին — բանվորական չարժումը վոսկրկանական դեկավարության ներքո վերցնելու — այս անգամ տերտեր Գապոնի միջոցով: 1904 թ. սկզբին Գապոնը կազմակերպեց «Սանկտ–Պետերբուրգ քաղաքի ֆաբրիկա–գործարանային ռուս բանվորների ժողովը», վորը տարվա վերջին ուներ արդեն 11 բաժանմունքներ քաղաքի բանվորական ռայոններում: 1905 թ. հունվարին Գապոնը ոգտագործեց այդ կազմակերպությունը, վորպեսզի սերտան գործադուլային չարժմանը, վոր սկսվեց Պուտիլովյան գործարանից, տարերայնորեն ընդգրկեց Պետերբուրգի բոլոր խոշոր ձեռնարկությունները (մինչև 150 հազար բանվոր) և նույնքան տարերայնորեն անցավ տնտեսական պահանջներից — քաղաքական պահանջների: Հենց այդ չարժման հոգի վրա Գապոնը լայն ագիտացիա զարգացրեց՝ պետեցիայով ցարի մոտ գնալու ոգտին: Վոչ միայն մենշևիկական խմբակները, այլ և այն ժամանակվա Պետերբուրգի բոլշևիկական կոմիտեն թույլ չէին կտված բանվորական մասսաների հետ: Մենշևիկների չրջանում չկար լիովին պարզ վերաբերմունք դեպի գնալով չէինան. ավելին ևս՝ նրանց մեջ կային տրամադրություններ ոգտագործելու այն: Բայց և այնպես պետեցիայի նախապատրաստության ժամանակ նրանք մասնակից կերտով առարկում էին նրա դեմ: Գապոնի կազմակերպված ժողովներում բոլշևիկները անցկացրին մի չարք բնույթներ պետեցիայի և ցարի մոտ գնալու դեմ: Բացի դրանից, բոլշևիկական կոմիտեն բաց թողեց յերեք թռուցիկ, կոչ անելով հեղափոխական միջոցներով պայքարել ցարական ինքնակալության դեմ. այդ թռուցիկներից մեկը (հունվարի 22 (9)–ի նախորյակին) ուղղված էր անմիջականորեն Գապոնի մտադրության դեմ: Սակայն այդ բոլորը արդեն չէր կարող յեա կանգնեցնել բանվորական մասսաներին ցարի մոտ գնալուց: «Կարմիր կե-

բակին» փաստ դարձավ, բայց, հակառակ նրա արարիչների կամքին ու ձգտումներին, դարձավ ռուսական առաջին հեղափոխության սկիզբը:

3· Լենինը այստեղ նկատի ունի այն սոցիալիստներին, որոնք համաչխարհային պատերազմի չքվանում լողունգ հայտարարեցին՝ «պայքար խաղաղության համար» առանց բուրժուազիայի տապալման: Նրանք պայքարում էին բոլշևիկների «իմպերիալիստական պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի» լողունգի դեմ, հրաժարվում էին դասակարգային պայքարից պատերազմի չքվանում և հաչվում էին ինտերնացիոնալը պայքարի զենք, պիտանի միայն խաղաղ ժամանակ (կաուցկի): Դրանով իսկ նրանք անուցում էին մասսաները այն հույսով, որ հնարավոր է դեմոկրատական հաշտություն առանց բուրժուազիայի տապալման և ապահովում էին արյունահեղության չարունակությունը բուրժուազիայի և պատերազմող յերկրների կառավարությունների չահերի ոգին: (Ավելի մանրամասն տես «Վեց հատորյակ»-ի III հատորը, բաժ. I և մանավանդ Լենինի «II Ինտերնացիոնալի սնանկությունը» հոդվածը):

4· Լենինը այստեղ նկատի ունի «Ոսվորժդենիյե» ժուռնալը, որը հրատարակվում էր Սարուվեյի խմբագրությամբ արտասահմանում, Շտուտգարտում (Գերմանիա): Այդ ժուռնալը լիբերալների որդանն էր, որոնք այդ ժամանակ Ռուսաստանում միացած էին «Ազատագրման Միության» մեջ («Союз освобождения»), որը տեղերում ուներ իր կոմիտեները: «Ոսվորժդենիյե»-ի 1905 թ. հունվարի 20 (7)-ի № 63-ում, «Ժամանակի կենսական խնդիրը» հոդվածում Սարուվեյն առաջարկում էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին Ռուսաստանում միանալ տեղերում ոսվորժդենցների կոմիտեների հետ: Նա այդ անհրաժեշտ էր համարում այն պատճառով, որ «հեղափոխական ժողովուրդ Ռուսաստանում դեռ ևս չկա»: Բայց նա, — ասում էր Սարուվեյն, — «ամեն մի բոպե կարող է ծնվել, և մենք պարտավոր ենք բոլոր խելացի միջոցներով արագացնել նրա ծնունդը»: Այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի ուժերը Սարուվեյն հաչվում էր դրա համար միանգամայն անբավարար և այդ տեսակետից հենվում էր մենշևիկների կարծիքի վրա, որոնք պատկերացնում էին սոցիալ-դեմոկրատիան, որպես մասսայական կենդանի աչխատանքից կըրված մարդկանց մի խումբ:

5· Գործադուլի աչքի ընկնող նչանակության հարցին ռուսական հեղափոխության մեջ, գործադուլի տիպերին (տնտեսական, քաղաքական), գործադուլային պայքարի զարգացմանը 1895-ից մինչև 1908 թ. թ. Լենինը նվիրել է մի քանի հոդված, որոնցից ամենից ավելի լրիվ կերպով ավել է հեղափոխության փորձի հանրագումարը «Գործադուլների տատիստիկայի մասին Ռուսաստանում» հոդվածի մեջ, որը գրված է 1910 — 1911 թ. թ. դեկտեմբեր—հունվարին («Ճերկեր, հատոր XV, եջ 25 — 49): Այդ աչխատության մեջ Լենինը ուչի-ուչով հետևել է մասսաներին հեղափոխական պայքարի մեջ ներգրավելու հիմնական առանձնահատկություններին ըստ՝ 1) ոլորտների, 2) պրոֆեսիաների, 3) գործադուլների տիպերի՝ տնտեսական և քաղաքական, 4) հեղափոխության հիմնական նախապետների (հեղափոխության ալիքի ուռճացումը, վերելքը, անկումը): Հակառակ մենշևիկների այն կարծիքին, թե բուրժուազիան աջակցում է պրոլետարիատի պայքարին, Լենինը թվերով ապացուցեց, որ «վոչ թե «համաչխարհային պատերազմի սիմպատիան, այլ գրոհի ուժն և վճռական գեր խաղում նաև տնտեսական պայքարի մեջ»,

ՌՍԴԲԿ-յան III համագումարում, այսինքն արդեն 1905 թ. ապրիլին, դինված ապստամբության մասին բանաձևի մեջ ընդգծված եր «մասսայական քաղաքական գործադուլների դերը, որոնք կարող են կարևոր նչանակություն ունենալ սկզբում և հենց ապստամբության ընթացքում»:

1905 թ. հոկտեմբերին, «Քաղաքական գործադուլը և փողոցային պայքարը Մոսկվայում» հոդվածի մեջ (Ճերկեր, հատոր VIII, եջ 289 — 295) Լենինը գրում եր, որ «չարժման արդեն լիովին կազմված ձևն է հանդիսանում քաղաքական գործադուլը, որը մեր աչքերի առաջ վերածվում է ապստամբության»:

Նույն ժամանակ, «Համառուսական քաղաքական գործադուլ» հոդվածում (Ճերկեր, հատ. VIII, եջ 331 — 333) Լենինը գրում եր՝ — «Մեր ցուցմունքները ու դուչահությունները քաղաքական մասսայական գործադուլի մեծագույն նչանակության մասին դինված ապստամբության գործում վայլունորեն արդարացան... Ապստամբությունը մոտենում է, նա մեր աչքի առաջ աճում և համառուսական քաղաքական գործադուլից»:

6· Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը անցել է իր զարգացման մի չարք հատակները: Նրա առաջին չրջանում իչխանության գլուխն անցավ խոչոր առևտրական-ֆինանսական բուրժուազիան, որը վոչ միայն չլուծեց մինչև վերջը հեղափոխության հիմնական հարցը — ագրարայինը-գյուղացիական հարցը, այլ և վերջ չդրեց թագավորական իչխանությանը: Հեղափոխության յերկրորդ չրջանում — 1792 — 1793 թ. թ., վորը մատնանչում է Լենինը, — իչխանության գլուխն անցավ նախ բուրժուազիայի չափավոր-հեղափոխական թևը հանձին ժիրոնդիստների և ապա — հեղափոխական մանր բուրժուազիան հանձին յակոբինների: Մանր բուրժուազիայի հեղափոխական-դեմոկրատական-դեմոկրատական հեղափոխությունը Ֆրանսիայում, վերջացնելով այն գործը, վորը չէր կարող և չէր կամենում վերջացնել խոչոր առևտրական-ֆինանսական բուրժուազիան, և վորը չէր հավակնում անել բուրժուազիայի չափավոր-հեղափոխական թևը:

7· Ձորտատիրությունը, վոր պրուսիայում ուներ Ռուսաստանում XVI դարի չափ թևը:

Ալեքսանդր II ցարի հրովարտակով — գյուղացիների՝ իրենց ազատագրման համար վերջից, ձևականորեն վերացվեց 1861 թ. մարտի 3-ին (փետրվարի 19-ին) Ալեքսանդր II ցարի հրովարտակով — գյուղացիների՝ իրենց ազատագրման համար մշակ յերկարաև ու համառ պայքարի ուժեղ ճնշման տակ: Այդ վերացման ժամանակ ամենալավ հողերը, իրրև «հողակտորներ», անցան գյուղացիական հողերից կալվածատերերին: Իսկ ավելի վատ հողերի համար, վորոնք մնացին գյուղացիներին, գյուղը յերկար տարիներ ավելի քան մեկ ու կես անգամ գերազանցում եին գյուղացիների ձեռքին մնացած հողերի իրական արժեքը: Բացի դրանից, այդ ռեֆորմը բնավ վերջ չդրեց գյուղացիների տարբական կախումին կալվածատերերից: «Հողակտորների», վորոնք մնացին գյուղացիների ձեռքին, սիստեմը առաջացնում եր գյուղացիների տարբացումը, վորովհետև գյուղացիները ստիպված եին այդ «հողակտորները» կապալով վերցնել կալվածատերերից կամ չատ ծանր պայմաններով աչխատավճարի (отработка) սիստեմով: Գյուղացիական համայնքի ընդհանուր յերաչխավորությունը հատուցման վճարումների դանձման նկատմամբ և գյուղացիական «ինքնավարության» կազմակերպությունը կառավարական աղնվական չինովնիկների հսկողու-

թյան տակ նույնպես սոբկացնում էին գյուղացիներին: Այդ բոլորից հետո զարմանալի չէ, որ գյուղացիները լրենց «ազատագրմանը» պատասխանեցին մասսայական ապստամբություններով: Մենակ 1861 թ. մանիֆեստից հետո տեղի ունեցան 784 գյուղացիական ապստամբություններ, որ ընդգրկեցին 2034 գյուղ և ընկճվեցին զինվորական ուժով:

8· Լենինը այստեղ նկատի ունի դեկաբրիստների շարժումը, որոնք XIX դարի առաջին քառորդին կազմակերպել էին ցարական ընկերություններ և զինված ապստամբություն բարձրացրել ցարիզմի դեմ 1825 թ. դեկտեմբերին (արանից ե և դեկաբրիստ անունը): Ըստ սոցիալական կազմի դեկաբրիստները գլխավորապես բոլորը ազնվական–կալվածատերեր էին, բայց նրանց մեջ կային և այնպիսի ազնվականներ, որոնք բոլորովին քայքայվել էին և ապրում էին անձնական աշխատանքով: Դեկաբրիստների ուշադրության կենտրոնն էին գլխավոր կարևորագույն հարցեր — ճորտատիրության վոչնչացումը և պայքարը ինքնակալության դեմ: Բայց թե՛ առաջին և թե՛ յերկրորդ հարցի նկատմամբ դեկաբրիստների մեջ բացակայում էր միասնականությունը: Դեկաբրիստների ուշադրության կենտրոնում էին յերկու հիմնական հոսանքներ, որոնք խմբավորվում էին այսպես կոչված Հյուսիսային և Հարավային ընկերություններում (հետագայում Հարավային ընկերությանը միացավ այսպես կոչված Միացյալ սլավոնների ընկերությունը):

Հյուսիսային ընկերությունը կողմնակից էր ճորտատիրության վերացմանը, բայց ապագա Ռուսաստանը այդ ընկերության անդամների մեծամասնությունը պատկերացնում էր իրրև խոշոր կալվածատիրական անտեսությունների յերկիր: Այսպես, ըստ սահմանադրության նախագծի, որ մշակել էր Մուրավյովը, «կալվածատերերի հողերը մնում են իրենց»: Գյուղացիները դրեթե զրկվում էին իրենց հողից — նրանց տրվում էր 2 դեսյատին ծխին: Այդ «կատվի բաժինը» կապում էր գյուղացուն իր գյուղին և տալիս էր կալվածատիրոջը եժան բանվորական ձեռքեր: Կալվածատերերի կալվածները պետք է զարդանային գյուղացիության մասսայական քայքայման հաշվին: Իրենց ճնշող մեծամասնությամբ Հյուսիսային ընկերության անդամները կողմնակից էին սահմանադրական միապետության:

Հարավային ընկերության գլուխն էր կանգնած զնդապետ Պ. Պեստելը, որը մշակել էր ընկերության ծրագիրը: Նրա նախագիծը նկատի ուներ ճորտատիրության վոչնչացումը, բայց մորում կալվածատերերի ընդդիմադրությունը չեզոքացրում էր վերացնել հեղափոխական ճանապարհով: Համաձայն Պեստելի ծրագրին, որ նա չարահյուսել էր «Ռուսական ճշմարտություն» («Русская правда») անունը կրող դոկումենտի մեջ, ամբողջ հողային ֆոնդը կիսվում էր — մեկ կեսը բաշխվում էր հավասարաչափ բոլոր գյուղատնտեսությամբ զբաղվողների մեջև, իսկ մյուս կեսը անցնում էր պետությանը, որը կարող էր այն կապալով տալ կամ ծախել:

Ինքնակալությունը վոչնչացվում էր ամբողջովին ու լրիվ, ցարական ընտանիքը մահապատժի յենթարկվում, սահմանվում էր հեղափոխական դիկտատուրա և — նրա միջոցով — դեմոկրատական հանրապետություն, բոլոր քաղաքացիների իրավահավասարությամբ:

Ամենահեղափոխականն էր յերրորդ խմբակը — Միացյալ սլավոնների ընկերությունը: Մոտենալով Պեստելի ռադիկալ ծրագրին, նա վոչ միայն «Հյուսիսականներից» էր առաջ անցնում, այլ և «Հարավայիններից»՝ մասսաներին ակտիվ պայքարի զրավելու հարցերում: Նա կողմնակից էր ժողովրդական հեղափոխության և ազգային յերկ մղում զինվորների և գյուղացիների չքջանում, նրանց նախապատրաստելով հեղաշրջմանը:

Ապստամբության առիթ ծառայեցին Ալեքսանդր I ցարի հանկարծակի մահը, մեռած ցարի յեղբայրներից ավագը — Կոնստանտինի դահից հրաժարվելու չնորհիվ յերիտասարդ ցարի յեղբայրներից միջնեկը — Նիկոլայը, որ հենց միայն մի քանի ժամ էր կառավարել, ստիպված եղավ ժամանակավորապես հանձնել գահը: Հյուսիսային ընկերությունը վորոշում է ապստամբություն սկսել, չնայած միանգամայն անպատրաստ լինելուն: 1825 դեկտեմբերի 26–ին (14–ին) դեկաբրիստները պետերբուրգում Սենատի հրապարակը հանեցին նրանց նվիրված մի քանի զինված զնդեր: Հենց նույն հրապարակի վրա հավաքված չքավորական ամբոխները բացահայտորեն ապստամբների կողմն էին: Հրապարակի վրա յերևացած Նիկոլայ I–ին նրանք դիմավորեցին քարերով ու փայտերով: Բայց ամենավճռական մոմենտին, յերբ Նիկոլայը և իրեն հավատարիմ զնդերը դեռ բավականաչափ ուժ չէին հավաքել ապստամբների դեմ և չէին հանդգնում սկսել ծողովրդականների անցնելու, ապստամբության զեկավարները յերևան բերին չափազանց չվորոշվածություն: Նիկոլայը ոգտվեց այդ չվորոշվածությունից: Ապստամբությունը ընկճվեց հրետանիներով:

Ավելի վճռական ու ավելի յերկարատև էր Չերնիգովյան գնդի ապստամբությունը հարավում, վոր կազմակերպել էին «սլավոնները» և Հարավային ընկերությունը: Սակայն, մնալով առանց այլ զինվորական ուժերի և ժողովրդական մասսաների մասնակցության և աջակցության, նա ևս ընկճվեց:

Պետերբուրգում և հարավում ապստամբությունը ընկճվելուց անմիջապես հետո սկսվեցին ձերբակալությունները: Շարժման առաջնորդները — Պեստելը, Սերգեյ Մուրավյով–Ապոստոլը, Բեստուժև–Րյումինը, Րիլեյևը և կախովսկին կախվեցին, մյուսները ուղարկվեցին տաժանակիր աշխատանքի կամ աքսորվեցին, զինվորության ուղարկվեցին զինվորների հետ: Նրանք քսվեցին չորքերի մրցությունը չարժման մասնակից զինվորների հետ: Նրանք քսվեցին չորքերի մրջյունների անդունդի վրա, մյուսները աքսորվեցին:

9· Ալեքսանդր II սպանվեց 1881 թ. մարտի 13–ին (1–ին) հեղափոխական նարոդնիկ–տեռրորիստների «Նարոդնայա վոլյա» կուսակցության Գործադիր Կոմիտեի դատավճռով:

10· Սոցիալ–անտեսական այն հողի մասին, վորի վրա սեռեցվեց այդ գյուղացիական չարժումը, տես Լենինի (հայերեն. թարգմ. կ) «Սոցիալ–դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905 — 1907 թվականների ռուսական առաջին հեղափոխության մեջ» աշխատության I գլխում, մասնավորապես — այդ գլխի II բաժնում՝ — «ինչի՞ համար է պայքար մղվում»:

Գյուղացիների 1861 թ. «ազատագրման» հետ կապված գյուղացիական ապստամբությունների ճնշումից հետո (տես ներկա դրքի 7–րդ ծանոթություն), գյուղացիական չարժման առաջին խոշոր ալիքը բարձրացավ քաղաքներում յեղած բանվորական չարժումների յեսից, 1900–ական թվականների սկզբից: Արդեն 1900 — 1904 թ. թ. հնգամյա չրջանում Ռուսաստանում տեղի ունեցան 670 գյուղացիական հեղափոխական յելույթներ, վորոնցից կալվածատերերի դեմ — 441, հոգևորականության դեմ — 12, կուլակության դեմ — 21 և իշխանությունների դեմ — 196: Ցարական կառավարությունը ամենաանողոք մի ջոցներ էր գործադրում ապստամբությունների ընկճման համար, սկսած գյուղացիների

տրաղիցիան ձևնչից և վերջացրած միլիոնների կոնտրիբուցիաներով «խռովարար» շրջանների վրա։ 1905 թ. գյուղացիական շարժումը սկսվում է վաղ գարնանը— փետրվարին Որյոլի և Կուրսկի նահանգներում և ապա, հետևելով բանվորական շարժման ծավալմանը հունվարի 22 (9)–ից հետո, զարգանում է Սևծովյան, Բեսարաբիայի, Պոդոլսկի, Լյուբլինի, Վիտեբսկի, Վորոնեժի և Նիժգորոդի նահանգներում։ 1905 թ. վերջին հաշվում էին արդեն ավելի քան 3000 մասսայական գյուղաց. յելույթներ և քանդված էին 2000–ից ավելի կալվածները։ Կալվածատերերի ունեցած հողատարածությունները միայն տասը առավելապես տուժած նահանգներում հասնում էին, ըստ պաշտոնական տվյալների, 29 միլիոն ռուբլուց։ Ամենից ավելի հեղափոխական ընույթ ստացավ գյուղացիական շարժումը Լասվիայում և Վրաստանում (տես ներկա գրքի 19–րդ ծանոթությունը)։

11. Բանակում և նավատորմում յեղած ապստամբությունները վճռական դեր չխաղացին առաջին հեղափոխության մեջ, հաղթանակ չբերին նրան, բայց նրա կարևոր բաղադրիչ մասն էին նրանք։ Բանակում հեղափոխական շարժումը սկսվում է 1905 թ. հունիսին, ամենամեծ զարգացման հասնելով հոկտեմբեր—դեկտեմբերին։

Հեղափոխությունը ամենից առաջ արձագանք է գտնում բանակի ամենապրոլետարական մասի — նավաստիների մեջ։ «Պոտյոմկին» զրահանավի վրա յեղած ապստամբությունը, որը հիշատակում է Լենինը իր զեկուցման մեջ, վորպես ամենից ավելի հայտնին, սեղի չի ունենում 1905 թ. ամառը։ Նա սկսվում է հունիսի 27 (14)–ին մի նորամատն տարերայնորեն, վորպես անմիջական պատասխան իշխանության լիբը պրովոկացիային — զենք գործադրելուն նավաստիների դեմ, վորոնք հրաժարվել էին փոած միսը ուտելուց։ Ապստամբները, նավաստի Մատյուշենկոյի (ռոցիալ–դեմոկրատ) գլխավորությամբ, զինաթափ են անում և սպանում սպաներին, և ապա կոչ են անում բոլոր նավաստիներին — «կորչի՛ իննյակալությունը, կեցցե՛ հիմնադիր ժողովը» լոզունգի ներքո... Ապստամբած «Պոտյոմկին»–ին կարճ ժամանակով միանում են «Գեներալ Պոբեդոնոսեցը», «267» ականանավը և «Վեռա» նավը։ Ստեղծվում է փոքրիկ հեղափոխական նավախումբ (եսկադրա), վորը ուղևորվում է Ոդեսա՝ «հեղափոխական ժողովրդի պաշտպանության տակ»։ Հասնելով Ոդեսա բանվորական զործադուլի մոմենտին, «Պոտյոմկին»–ը հարաբերություններ է մտնում բանվորների և տեղական հեղափոխական կազմակերպությունների հետ, սակայն իր զործողությունների մեջ արտարերում է անվճռականություն։ Սևաստոպոլի նավախումբը գալուց և «Գեներալ Պոբեդոնոսեց»–ի գալճանալուց հետո, նա հեռանում է Ոդեսայից։ 7 որ Սև ծովի վրա չբռնկուց հետո, «Պոտյոմկին»–ը, ածուխի, ջրի և պարենամթերքների բացակայության, այլ և նավաստինների մեջ ծայր առած կազմալուծության հետևանքով, հուլիսի 8–ին (հունիսի 25–ին) անձնատուր է լինում ռումինական կառավարությանը՝ կոնստանցայում։ «267» ականանավը և «Պոտյոմկին»–ի նավաստինների անդիտակից մասը վերադառնում են Սևաստոպոլ՝ հանձնվելու իշխանության «մոտրմանության»։ Ռազմա–ծովային դատարանի դատավճռով 75 մեղադրյալներից 3–ը դատապարտվում են մահվան պատժի, 19–ը — տաժանակիր աշխատանքների և 33–ը — բանտարկության։ Բացի նախում և նավատորմում յեղած այլ խոշոր հեղափոխական յելույթներից, բացի Սևծովյան նավատորմի նոյեմբերյան Սևաստոպոլի ապստամբություններից, վորի վրա կանգ է առնում Լենինը զեկուցման մեջ (տես «Վեցհատորյակ»–ի II հատ. ծանոթություն 149), ուշադրավ եր իր չափերով կրոնշտադտյան յելույթը։ Նոյեմբերի 8–ից մինչև 10–ը (հոկտեմբերի 26–ից մինչև 28–ը) քաղաքը գտնվում եր ապստամբած կայազորի ձեռքին։ Ապստամբությունը ընկճվեց հատկապես այդ նպատակով ուղարկված Պրեոբրաժենսկիյ և Պավլովսկիյ գնդերի կողմից, իսկ նախաձեռնողները հանձնվեցին ռազմա–դատական դատարանին։ Ավելի կազմակերպված ապստամբություններ տեղի ունեցան Սվեաբորգի և Կրոնշտադտի բերդերում 1906 թ. հուլիսին (տես «Վեցհատ.», հ. II, 180–րդ ծանոթությունը), վորոնք պատասխան հանդիսացան I Պետական Դումայի ցրումին։

12. Պարկյան կոմունայի դասերը հետագայում Լենինը այսպես բնութագրեց 1908 թ. մարտի 18 (5)–ին — Պարիզյան կոմունայի տարեդարձին — Ժընևում, միջազգային միտինգում արած զեկուցման մեջ՝ — «Ցերկու սխալ կործանեցին վայելուն հաղթանակի (Պարիզյան կոմունայի—ԽՄԲ.) պատուղները։ Պրուդոնյան սեփականատերերի բիատը կանգ առավ հես ճանապարհին. փոխանակ սկսելու «սեփականազրկումը», նա տարվեց յերկրում արդյարություն սահմանելու յերազներով, յերկրում, վորը միավորվում է համազգային խնդիրներով. այնպիսի ներով, հիմնարկներ, ինչպիսին է բանկը, չէին զրավված... Ցերկրորդ սխալը պրինցիպ, հիմնարկներ, վորը ավելորդ բարեփոխությունը. պետք եր վոչնչացնել իր քաղաքական մոտ քաղաքը, ուր վախել եր բուրժուական կառավարությունը. — ԽՄԲ.) պատերազմի մեջ և փոխանակ վճռական հարձակումով վերցնելու իր հաղթանակը Պարիզում, նա զանդաղում եր և դրանով ժամանակ տալիս Վերսալի կառավարությանը մուտ ուժեր հավաքելու և նախապատրաստվելու մայիսյան արյունոտ չարաքին»։ (Ցերկեր, հատ. XII, «Կոմունայի դասերը», էջ 163)։

13. Ցարի հրամանը Բուլիգինյան Դումայի մասին հրատարակվեց 1905 թվականի ողոստոսի 19 (6)–ին։ Դուման նախատեսվում եր, վորպես կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի, այլ վոչ ամբողջ ժողովրդի, ներկայացուցչության խորհրդակցական որգան։ Բանվորները, ընտրությունների յուռատիման թյուններին մասնակցելուց, իսկ գյուղացիները, ընտրությունների պրոցեսում։ Որպես նագծերի մշակության և քննության համար խորհրդակցություն կամ վերին պալատ՝ Նոր Դումայի և Պետական խորհրդի նման։ Ժողով կամ Ներքին պալատ և Պետական խորհրդի և չինովնիկների այդ «պալատը» պետք և զորք ունենային միայն այն որինագծերի հետ, վորոնք ցարական կառավարությունը կրաբևհաճ նրանց հանձնել։ Այդ որինագծերը պետք և քննվելին և ընդունվելին նախ Ներքին պալատի կողմից, ապա՝ վերին և այնուհետև անցնելին ցարին ի հաստատություն։

Վերին պալատը պետք և բաղկացած լիներ ազնվականության կողմից ընտրված 60 անդամներից և ցարից նշանակված նույն թվով չինովնիկներից ու դեներալներից։ Ընտրվածների իրավասության ժամկետն եր — 3 տարի։ Ներքին պալատը իր 643 անդամներով պետք և բաղկացած լիներ միայն ընտրովի անդամներից, վորպիսիներ, հենց ընտրությունների սիստեմի չնորհիվ, կարող եյին լինել միայն կալվածատերերը և խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները։

Կուսակցության վերաբերմունքի մասին դեպի Բուլիգինյան Դուման տես «Վեցհատ.» II հ. «Բուլիգինյան Դումայի բոյկոտը և ապստամբությունը» հոդվածը, էջ 212—219։ Հոկտեմբերյան ապստամբությունների հեղափոխական ալիքը ավելց այդ Դուման, չթողնելով, վոր նա իրականանա։

14· Բուլիգինյան Դումային հաջորդեց այսպես կոչված «Վիտեյական» Պետական Դուման: Վիտեն, նշանակվելով մինիստրների խորհրդի նախագահ հոկտեմբերյան ընդհանուր գործադուլի ժամանակ, հոկտեմբերի 30 (17)-ի «ազատություններ» մասին ցարական մանիֆեստի հեղինակն էր: Այդ մանիֆեստի մեջ, ի միջի այլոց, խոստում կար՝ — 1) տարածել ընտրողական իրավունքները «ըստ հնարավորության» «ազգաբնակության այն դասակարգերի» վրա, որոնք այդ իրավունքներից զուրկ էին ըստ բուլիգինյան օրենքի՝ Դումայի մասին, և 2) իրեն, Դումային տալ խորհրդակցական իրավունքների փոխարեն օրենսդրական իրավունքներ: Դումայի ընտրողական իրավունքների ընդլայնումը իրագործվեց 1905 թ. դեկտեմբերի 24 (11)-ի օրենքով, որը չփոփոխելով Բուլիգինյան Դումայի ընտրողական սիստեմը, ավելց ընտրություններին մասնակցելու չատ պոչատ իրավունք արդյունաբերական բանվորներին: Այդ օրենքով բանվորները կազմում էին ընտրողների հատուկ բաժնեմասեր, այսպես կոչված բանվորական կուրիաներ: Ընտրություններին կարող էին մասնակցել միայն այն ձեռնարկությունների բանվորները, որոնք ունեին 50 տղամարդ բանվորից վոչ պակաս և իրավունք ունեին ընտրելու մեկ լիազոր յուրաքանչյուր լրիվ հազարին: Ընտրությունների սիստեմը չեռաստիճան էր: Առանձին ֆաբրիկների ու գործարանների ընտրում էին լիազորներ՝ բանվորների լիազորների նահանգական համագումարին: Այդ նահանգական համագումարում ընտրվում էին նախորոք սահմանված թվով ընտրողներ նահանգական ընտրողականն ժողովին, ուր նրանք ազգաբնակության այլ խավերի ընտրողների հետ միասին ընտրում էին Պետական Դումայի պատգամավորները:

15· «Հոկտեմբեր» անվան տակ Լենինը նկատի ուներ 1905 թ. հոկտեմբերյան ընդհանուր քաղաքական գործադուլը: Նա սկսվեց հոկտեմբերի 20 (7)-ին, Մոսկվա—Կազան չերկաթուղու բանվորների գործադուլով Մոսկվայում: Առիթ ծառայեցին Մոսկվայում տարածված լուրերը չերկաթուղային համագումարի պատգամավորների ձերբակալության մասին, այն համագումարի, որը պետք էր Պետերբուրգում հոկտեմբերի 3-ից (սեպտեմբերի 20-ից) և որը դրել էր մի չարք պահանջներ՝ — Սահմանադիր ժողովի, քաղաքական ազատությունների, 8 ժամյա բանվորական որվա, ամնիստիայի, առաձին ազգությունների ավտոնոմիայի, ժողովրդական միլիցիայի և այլն: Թեև ձերբակալման լուրը հերքեցին հենց իրենք պատգամավորները, — Մոսկվա—Կազան չերկաթուղու բանվորները գործադուլ հայտարարեցին և դրանով պատուհաս ընդհանուր լարված սպասողականության պատանը: Գործադուլավորները դուրս չկան Մոսկվայի փողոցները, ընդհարումներ տեղի ունեցան զորքերի հետ, չեղան վիրավորներ ու սպանվածներ: Հոկտեմբերի 21 (8)-ին ընդհատվեց չաթումը Մոսկվա—Բրեստ, Մոսկվա—Կուրսկ, Մոսկվա—Նիժդորող և Րյազան—Ուրալ չերկաթգծերի վրա: Հոկտեմբերի 22 (9)-ին գործադուլին միացավ Մոսկվա—Կիև—Վորոնեժ չերկաթուղին:

Հոկտեմբերի 23 (10)-ին գործադուլը ընդգրկեց Սեզրան—Վյազմա, Խարկով—Նիկոլաև, Կուրսկ—Խարկով—Ակատովոլ և չերկու Ճեկատերինյան չերկաթուղիները: Հոկտեմբերի 24 (11)-ից կանգ առավ Մոսկվայի ամբողջ հասարակական կյանքը. ուսումնական հիմնարկները, գործարանները, առևտրական ձեռնարկությունները, բանկերը, քաղաքային, զեմստվոյին և չատ պետական հիմնարկություններ փակվեցին: Չեռագրային և հեռախոսական լարերը կտրված էին, հեռագրներ չէին ընդունվում: Հոկտեմբերի 25 (12)-ին կանգ առավ Պետերբուրգի հանդույցը: Հոկտեմբերի 27 (14)-ին գործադուլին միացան Անդրկովկասյան, Միջին-Ասիական, Մոսկվա—Բրեստ, Մերվինսկայան և Սիբիրի չերկաթուղիները: Այդ ժամանակ գործադուլը ընդգրկել եր ռուսական չերկաթուղիների ամբողջ ցանցը, ավելի քան 40 հազար կիլոմետր չերկարությամբ, 750 հազար բանվորներով ու ծառայողներով: Գործադուլային ալիքը, տարածվելով չերկաթուղագծերով, կանգնեցնում եր պոստը, հեռագիրը, բոլոր ֆաբրիկներն ու գործարանները, ամբողջ արդյունաբերական, առևտրական և հասարակական կյանքը չերկրի գրեթե բոլոր քաղաքներում: Ընդհանուր գործադուլին ամենուրեք ուղեկցում էին ժողովներ, միտինգներ, ցույցեր, որոնք կազմակերպվում էին առանց նախորոք թույլտվության վերցնելու: Գործադուլը կրում եր կառավարության դեմ ուղղված ակտիվ պայքարի ցայտուններն արտահայտված քաղաքական բնույթ: Սահմանադիր ժողովի, ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի ընտրողական իրավունքի և այլ նման լոզունգները լչխող էին հանդիսանում:

Հոկտեմբերի 30 (17)-ի ցարական մանիֆեստի հրապարակումից հետո, որով խոստացվում էին «ազատություններ», ընտրողական իրավունքների ընդլայնում և Պետական Դումայի հրավեր «օրենսդրական կոմիտեն վորոշեց «ժամանակավորապես վերջ տալ ընդհանուր գործադուլին» նոյեմբերի 1-ին (հոկտեմբերի 19-ին), իսկ Պետերբուրգի բանվորական պատգամավորների Խորհուրդը — նոյեմբերի 3-ին (հոկտեմբերի 21-ին):

16· «Դեկտեմբեր» անվան տակ Լենինը նկատի ուներ դեկտեմբերյան զինված ապստամբությունները չերկրի մի չարք կենտրոնում և, ամենից առաջ, զինված ապստամբությունը Մոսկվայում:

45· Նկատի չե առնված Լ. Մարտովի «Սևծովյան ապստամբությունը» հոդվածը «Искра»-ի № 104-ում, ուր նա գրում եր, վոր «յերբ հանկարծակի առկայծած ապստամբությունը սոցիալ-դեմոկրատների ձեռքը դրեց ահեղ մարտական ուժը, նրանց առաջ դրված եր հեղափոխության կազմակերպության խընդիրը», բայց մյուս կողմից, արտահայտվում եր սոցիալ-դեմոկրատների նահապարտական աշխատանքի դեմ համաժողովրդական ապստամբության կազմակերպության ուղղությամբ՝ «այդ ապստամբության մեջ — ասում եր Մարտովը — արտահայտվեց «ըստ պլանի» սկսված հանրապարվիկ ապստամբության դեռ այնքան սովորական հուսերի զուր լինելը»:

46· «Հին «Искра»-ն նորից բաժանող անդունդի» մասին այդ խոսքերը վերցված են Լ. Դ. Տրոցկու 1904 թ. «Մեր քաղաքական խնդիրները» բրոշյուրից: 1928 թ. այդ բրոշյուրը, տրոցկիզմի մենշևիկական արմատները մերկացնելու նպատակով, վերահրատարակված և կենտկոմի խոտպարտի կողմից նրա բացատրություններով և ընկ. Ցարոսլավսկու ներածական հոդվածով, «Լ. Դ. Տրոցկին կուսակցության մասին 1904 թվին» խորագրով (Պետհրատ):

47· Խոսքը ցարական կառավարության նախապատրաստած այսպես կոչված «Բուլիգինյան» Պետական Դումայի նախագծի մասին է (տես ներկա գրքի 13-րդ ծանոթությունը):

48· Այստեղ նկատի չե առնված, ըստ յերևույթին, Ազատագրման Միության (Союз освобождения) ծրագիրը (տես ներկա գրքի 28 և 59 ծանոթ.):

49· Այստեղ Լենինը նկատի ունի սոցիալիստ-հեղափոխականներին, վորոնք ժխտում եյին 1905 թ. հեղափոխության բուրժուական բնույթը, այլև Տրոցկուն և Պարվուսին նրանց այն հայացքով, վոր ինքնակալության տապալումից հետո իշխանության գլուխը կանցնի «բանվորական դեմոկրատիայի կառավարությունը, սոցիալ-դեմոկրատական կառավարությունը»:

50· «Освобождение»-ի 1905 թ. հունիսի 21 (8)-ի № 72-ում դետեղված «Ռուսական հեղափոխությունը և խաղաղությունը: Բաց նամակ Ժ. Ժոռեսին» հոդվածի մեջ Ստրուվեն գրում եր՝ —

«Հեղափոխությունը կարող է — թեորետիկ — արտարակա դառնալով — Ռուսաստանում կառավարություն դառնալ ամենախաղաղ ձևով, նույնպիսի խաղաղ և հասարակ ձևով, ինչպես պարլամենտական յերկրում կատարվում է մինիստրության փոփոխությունը... Թող թեկուզ յերկու ժամվա ընթացքում Մոսկվայում հավաքվի դեմոսավային պատգամավորների նույնպիսի կոնգրես, վորպիսին հավաքված եր այնտեղ մայիսի 6-ին և հետևյալ որերը (ապրիլի 23-ին և հետ. որերը): Այդ կոնգրեսը կմատնանշե Նիկոլայ II-ին այն անձանց, վորոնք յերկրի աչքում վայելում են այն վստահությունը և հեղինակությունը, վորը հարկավոր է ուժեղ կառավարության համար: Ցեվ, ընդունելով այդ անձանց ծրագիրը, թող Նիկոլայ II-ը հանձնի նրանց իշխանությունը: Վորովհետև այժմ Ռուսաստանին հարկավոր է վոչ միայն ազատություն, այլ և իշխանության այնպիսի կազմակերպություն, վորը կարողանա կանդնել ի պաշտպանություն ազատության և կարգի»:

51· Ֆրանկֆուրտի պարլամենտ — «Ֆրանկֆուրտյան ղրուցարան» — 1848 թ. դերմանական հեղափոխության ժամանակ հրավիրված հանրագերմանական ազգային ժողովը է: Ենգելսը 1852 թ. նրա մասին ասպես եր գրում.

«Գաղավ կանանց այդ ժողովը իր դոյության առաջին որից բոլոր դերմանական կառավարությունների, միասին վերցրած, ամեն տեսակի ռեակցիոն դաշտրուքյուններից ավելի սարսափում եր ժողովրդական թեկուզ նվազագույն շարժումից... Փոխանակ իր սուվերենիտետը (գերագույն իշխանություն — Ա.Մ.) հաստատելու, նա մեծ ջանքով խուսափում եր այդչափ վտանգավոր հարցի քննությունից: Փոխանակ իրեն ժողովրդական ուժով չրջապատելու, նա ուղղակի հերթական գործերին եր անցնում իր իրավունքների բոլոր կոպիտ խախտումների առթիվ կառավարության կողմից... Այդպիսով, մեր առաջ է տարօրինակ մի ժողովի, վորը հավակնություն ունի մեծ ու սուվերեն ժողովրդի մխակ որինական ներկայացուցիչը լինելու, բայց իր պահանջները ընդունել ստիպելու վո՛չ ցանկություն ունի և վոչ էլ ուժ»:

«Ղեկավարվելով անորինակ վախկոտությամբ», այդ ժողովը, — ասում է հետո Ենգելսը այդ բնութագրության յեղրափակման մեջ, — «լուկ վերաղարձրեց նախկին կայունությունը այն հիմքերին, վորոնց վրա կառուցված է ներկայիս հակահեղափոխական սիստեմը» (Ենգելս, «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Գերմանիայում», Մարքսի և Ենգելսի ինսիտուտի «Մարքս-Ենգելս հարադարան»-ի XVIII պրակ, հրատ. Պետհրատի, 1929 թ. եջ 46 — 48):

52· Բացի այդ բանաձևից, III համագումարում ընդունված եյին այլևս յերկու, հրապարակման վոչ յենթակա, բանաձևը դեպի մենշևիկները վերաբերմունքի մասին. 1) «ՌՍԴԲԿ III համագումարը հանձնարարում է կենտկոմին բոլոր միջոցները ձեռք առնել ՌՍԴԲԿ-յան անջատված մասի հետ ձուլվելու պայմանների վերջնական հաստատումը պետք է վերապահվի կուսակցական նոր համագումարին». 2) «Նկատի առնելով այն հնարավորությունը, վոր մի քանի մենշևիկյան կազմակերպություններ կհրաժարվեն III համագումարի վորոշումները ընդունելուց, համագումարը առաջարկում է կենտկոմին ցրել այդպիսի կազմակերպությունները և հաստատել համագումարին յենթարկվող նրանց զուգահեռ կազմակերպությունները, վորպես կոմիտեներ, բայց միայն նրանից հետո, յերբ բոլշևյան պարզումից հետո լիովին կհաստատվի մենշևիկյան կազմակերպությունների և կոմիտեների՝ կուսակցական դիսցիպլինային յենթարկվել չցանկանալը»:

53· Վրացական մենշևիկների «Զեմստվային հավաքը և մեր տակտիկան» հոդվածի հիմնական դրույթները Լենինը մեջբերում է «Յերկու տակտիկա»-ի VII գլխում (տես Յերկեր, հատ. VIII, եջ 66 — 69):

Այդ հոդվածի մեջ վրացական մենշևիկները, յելնելով նրանից, վոր «դալիք հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն է», պնդում եյին, վոր «մեր չահն է, վորպեսզի կառավարությունը միա առանց դաշնակիցների, չկարողանա պահպանել ոպոզիցիան, չմիացնի իրեն բուրժուազիային և չիողնի պրոլետարիատը առանձնացած»: Այստեղից հոդվածի մեջ այն յեղրակացությունն եր արվում, թե սոցիալ-դեմոկրատիան պետք է «հայտարարի Զեմստվային հավաքը մեր դործողության կենտրոն» (նույն տեղ, եջ 66 — 67):

54· Լենինը նկատի ունի լրերթալ բուրժուազիայի այ թևի, Դ. Ն. Շիպովի դլխավորությամբ, 1905 թ. ամառը առաջադրած պահանջը մի այնպիսի սահ-

մանագրության, վորը չատ մոտ եր Բուլիգինյան Դումայի նախագծին (տես ներկա գրքի 13–րդ ծանոթ.), առանց ընդհանուր ընտրողական իրավունքի, յերկու «պալատներով», վորոնցից պետք է անցնելին որինագծերը, և մի շարք քաղաքական արտոնություններով կալվածատերերին և բուրժուազիային:

55· Այստեղ Լենինը նկատի ունի գլխավորապես 1848 — 1849 թ. թ. գերմանական և իտալական հեղափոխությունները: Ֆեոդալիզմի ամենից ավելի հնացած մնացորդների լիկվիդացիան և Գերմանիայի ուիսալիայի ազգային միավորումը, վորոնք այդ հեղափոխությունների գլխավոր խնդիրներն եյին, լուծնելին՝ բիսմարկի կառավարությունը Գերմանիայում և կավուրի կառավարությունը Իտալիայում արդեն հեղափոխական չարժման պարտությունից հետո:

56· Ֆեյերբախի մասին Մարքսի թեզիսների առումներն թարգմանությունը տես Ենգելսի «Լյուդվիգ Ֆեյերբախ» գրքի հավելվածի մեջ, Մարքսի և Ենգելսի ինստիտուտի «Մարքսիսմի դրոշակրանի» պրակ XIV, հրատ. Պետհրատի, 1929 թ.:

57· Այդ նախատինքները ամենից ավելի լրիվ ձևակերպել եյին՝ Մարտինովը «Ցերկու դիկտատուրաների մեջ և Ակսելրոդը իր հոդվածների մեջ նոր «Искра»–ում. այսպես, օրինակ, «Ռուսական սոցիալ–դեմոկրատիայի միավորումը և մեր խնդիրները» հոդվածի մեջ («Искра», № 55) Ակսելրոդը պնդում եր, թե բոլշևիկները հեղափոխական իդեալոգիայի տեղափոխի դեր են կատարում աղտոտողական չարժման մեջ Ռուսաստանում արտոլյուտիզմի դեմ»:

58· Մենշևիկական կոնֆերենցիայի «դյուղացիական լողունգները» ձևակերպված են նրա «Գյուղացիների մեջ տարվելիք աշխատանքի մասին» բանաձևում հետևյալ կերպով՝ — «Սոց.–դեմ. անհրաժեշտ և համարում... ապիտացիա մղել հողում՝ — ա) քաղաքական պահանջների բացահայտ հայտարարության դյուղական և քաղաքային ժողովներում, բ) ընդհանուր ազատագրման կառավարական կոնստիտուցիոն բնաջնջումների համար, գ) տուրքերի վճարումից և պարտականությունների կատարումից հրաժարվելու, դ) նորակոչ զինվորներ տալուց, ուսուցման հավաքներին ներկայանալուց և պահեստազորների զինակոչի դեպքում զորշակների տակ կանչվելուց հրաժարվելու, յե) բոլոր կառավարական և կառավարության ճնշման տակ ընտրված իշխանություններին ճանաչելուց հրաժարվելու, զ) պաշտոնակիր անձանց ազատ ընտրության և — իրրև հետևանք — ե) գյուղի հեղափոխական ինքնակառավարության և գյուղական ինքնակառավարման հեղափոխական մարմինների, վորպես գյուղացիական ազատամարտության ցարիցմի դեմ»:

59· 1905 թ. այդ լիբերալ լրագրների քաղաքական գիծը Լենինը իր «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները» հոդվածի մեջ այսպես ե բնորոշում՝ — «Ինչպես հայտնի յե բոլորին, Ռուսաստանում ահագին արտադրությամբ կազմվում և չատ լայն լիբերալ կուսակցություն, վորին պատկանում են և «Ազատագրման Միությունը», և զեմստվոների մասսան, և «Наша жизнь»–ի, «Наши Дни»–ի, «Сын Отечества»–ի «Русские Ведомости»–ի և այլոց նման լրագիրները և այլն: Այդ լիբերալ–բուրժուական կուսակցությունը սիրում է, վոր նրան անվանեն «սահմանադրական – դեմոկրատական» կուսակցություն: Այն ինչ իրականում, ինչպես յերևում է անվերապահ «Освобождение»–ից հայտարարություններից և ծրագրից, դա մոնարխիստական կուսակցություն է: Նա բոլորովին չի ուզում հանրապետություն: Նա չի ուզում մի պալատ և մացնում է վերին պալատի համար (տես հետևյալ 60–րդ ծանոթությունը. ԽՄԲ.) վոչ ուղղակի և փաստորեն վոչ ընդհանուր ընտրողական իրավունք (ցենզ ըստ նստակեցության):

Նա բոլորովին չի ուզում, վորպեսզի դերագույն պետական ամբողջ իշխանությունը անցնի ժողովրդի ձեռքը (թեև արտաքուստ նա չատ է սիրում խոսել իշխանության ժողովրդին անցնելու մասին): Նա չի ուզում ինքնակալության տապալումը, նա ուզում է միայն, վոր իշխանությունը բաժանվի 1) մոնարխայի, 2) վերին պալատի (ուր դերակչռելու յեն հողատերերն ու կապիտալիստները) և 3) ներքին պալատի, վորը միայն մեծապես կառուցվում է դեմոկրատական հիմունքներով, — մի չի» (Ցերկեր, հատ. VII, եջ 348 — 349):

60· Վերին պալատի պահանջը, վոր կայացած եր միայն բուրժուազիայի, կալվածատերերի և ինտելիգենցիայի ներկայացուցիչներից, է տարբերություն Ներքին պալատից, վորը ընտրվում եր ընդհանուր քվեարկությամբ, կազմում եր 1905 թ. լիբերալ բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի ծրագրի բազդրիչ մասը: Ցերկպալատյան սիստեմը այժմ ևս դոյություն ունի բուրժուական յերկրների մեծամասնության մեջ: Վերին պալատի ընտրությունները, վորպես կանոն, սահմանափակվում են կամ բարձր դույքային ցենզով, կամ հասակով, կամ հասարակական դրությամբ: Այդպիսով, վերին պալատը սովորաբար կազմվում է յերկրի ամենաուակիցն տարրերից: Նա բուրժուազիայի համար հուսալի արգելակ և ծառայում նրա համար անցանկալի որինագծերի անցկացման նկատմամբ, վորոնք վորևե պատճառով անցել են ներքին պալատից, վորովհետև յուրաքանչյուր որինագիծ որենքի ուժ ստանալու համար պետք է ընդունվի յերկու պալատների կողմից ևս, նախ — ներքին և ապա — վերին: Ռուսաստանում 1905 թ. հեղափոխությունից հետո Ներքին պալատի դեր եր խաղում Պետական Դուման, իսկ Վերինը — Պետական խորհուրդը — խոշոր կալվածատերերից և չինովնիկներից: Անգլիայում այժմ վերին պալատ է հանդիսանում «լորդերի պալատը», Ֆրանսիայում—սենատը:

61· Այդ ծանոթության մեջ ասված եր՝ — «Զի կարելի, իհարկե, խոսվել նրանով, վոր մեր դյուղացիների մոտ, ինչպես վկայում եյին նաև վերջին ժամանակներս չատ անձնավորություններ, հաճախ նախ մոնարխիզմը հետությամբ վոխարինվում է նույնքան նախ ռեսպուբլիկանիզմով, զատություններով այն մասին, թե այժմյա ցարին, վորպես տմարբի, պետք է քշել և հետագայում ընտրել ցարին յերեք տարով և այլն»:

62· Մարքսի այս խոսքերը Լենինը վերցրել է «Գոտեսական հեղափոխության բալանսը» հոդվածից: Ռուսերեն լեզվով Մարքսի այդ հոդվածը տպված է «Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը 1848 — 1850 թ. թ. գերմանական հեղափոխության եսպայում» գրքի մեջ, վորը բաց է թողել Մարքսի և Ենգելսի Ինստիտուտը Պետհրատ հրատ., 1926 թ.:

63· Լենինը այստեղ թվարկում է այն անունները, վորոնցով հանդես եյին գալիս բոլշևիկները 1905 թվին. վերջորդովեցները — բոլշևիկյան «Вперед» լրագրից, վոր լույս եր տեսնում ժընևում 1904 թ. վերջերից մինչև կուսակցության III համագումարը. սեզդովեցները — կուսակցության III համագումարը կողմնակիցները — ի տարբերություն մենշևիկների, ժընևի կոնֆերենցիայի կողմնակիցներից. պրոլետարեցները — «Պրոլետարիյ»–ից, վոր կուսակցության կենտրոնական որգանն եր III համագումարից հետո:

64· Մարտինովի «Ցերկու դիկտատուրա» բրոշյուրի մասին, վորը ուղղված եր պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական–դեմոկրատական դիկտատուրայի լոզունգի դեմ, այլև պրոլետարական կուսակցության մասնակցության դեմ վորևե մի ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ բուրժուազիայի հետ, տես Ենգելսի «Լյուդվիգ Ֆեյերբախ» գրքի հավելվածի մեջ, Մարքսի և Ենգելսի Ինստիտուտի «Մարքսիսմի դրոշակրանի» պրակ XIV, հրատ. Պետհրատի, 1929 թ.:

կան–դեմոկրատական հեղափոխության ժամանակ — տես ներկա դրքի մեջ Լենինի «Սոցիալ–դեմոկրատիան և ժամանակավոր հեղափոխական կառավարությունը» հոդվածը։

65։ Նկատի չի առնվում ընդհանուր «կոմունար–բլանկիստների ծրագիրը» հոդվածի հետևյալ տեղը՝ — «Ամեն մի հեղափոխության ժամանակ անխուսափելիորեն կատարվում են շատ հիմարություններ, ինչպես և ամեն մի այլ ժամանակ, և յերբ վերջապես, մարդիկ հանգստանում են այնպես, վորպեսզի քննադատորեն վերաբերվեն անցքերին, նրանք անհրաժեշտորեն զալիս են հետևյալ յեզրակացության. մենք շատ այնպիսի բաներ ենք արել, վոր ավելի լավ եր չանել, և չենք արել շատ այնպիսի բաներ, վոր ավելի լավ կլիներ, յեթե անեյինք, և այդ պատճառով էլ գործը վատ է առաջ գնացել։

Քննադատության վորպե՛սի պահանջն են արտահերում այն մարդիկ, վորոնք ուղղակի ասավածացնում են կոմունան, անմեղանչելի յեն հայտարարում նրան և պնդում են, թե յուրաքանչյուր տունը, վոր նա այրել է, պետք եր այրել, վոր յուրաքանչյուր պատանդ, վորին նա գնդակահարել է, արժանի յեր գնդակահարման։ Արդյոք դա չի՞ նշանակում պնդել, թե մայիսյան չարաթվա ընթացքում ժողովրդի կողմից գնդակահարված եյին հենց այն մարդիկ, վորոնց անհրաժեշտ եր գնդակահարել, և վոչ ավելի, քան հարկավոր եր, վոր այրված եյին հենց այն տները, վորոնք անհրաժեշտ եր այրել, և վոչ ավելի, քան անհրաժեշտ եր։ Արդյոք դա չի՞ նշանակում պնդել նույնը, ինչ վոր պնդում եյին առաջին ֆրանսիական հեղափոխության վերաբերմամբ՝ — յուրաքանչյուր մարդ, վոր մահապարժի յեր յենթարկված նրա ժամանակ, լավին արժանի յեր իր վիճակին, — նախ նրանք, ում մահապարժի յենթարկեց Ռոբեսպյերը և ապա ինքը Ռոբեսպյերը։ Ահա ինչպիսի հիմարությունների կարող են հասնել ըստ եություն միանգամայն անմիաս մարդիկ, վորոնք ցանկանում են ինչ գնով էլ վոր լինի ահարկու թվալ» (Ֆրիդրիխ Ենգելս «1871 — 1875 թ. թ. հոդվածները», հրատ. Հյուսիսային չերջանի կոմունանների Միության, 1919 թ., եջ 53 — 54)։

66։ Այստեղ Լենինը չի տալիս Պարիզյան կոմունայի լրիվ բնութագիրը, կոմունայի, վորին նա ահագին նշանակություն եր տալիս և վորի պատմությունը ուսումնասիրում եր բազմակողմանիորեն։

Նրա յերախտիքների մասին մի այլ տեղ նա գրում եր՝ — «...չնայած բոլոր սխալներին, կոմունան XIX դարի մեծագույն պրոլետարական չարժման մեծագույն օրինակն է։ Մարքսը բարձր գնահատեց կոմունայի պատմական նշանակությունը — յեթե վերսալյան չայկայի դավաճանական հարձակման ժամանակ պարիզյան պրոլետարիատի զենքի վրա բանվորները առանց կռվի թույլ տային խլել այն, ապա այդորինակ թուլության չնորհիվ պրոլետարական չարժման մեջ մտցրած բարոյալքման կորստաբեր նշանակությունը չատ ու չատ անդամ ավելի ծանր կլիներ այն կորուստների վնասից, վոր ունեցավ բանվոր դասակարգը կռվում, պաշտպանելով իր զենքը։ Վորքան էլ մեծ լինեն կոմունայի դիհերը, նրանք արդարացվում են նրա նշանակությամբ համապրոլետարական պայքարի համար. նա զարկ տվեց սոցիալիստական չարժմանը ցնվրոպայում, նա ցույց տվեց քաղաքացիական պատերազմի ուժը, նա ցրեց հայրենասիրական իլյուզիաները և խորտակեց նախ հավատը բուրժուազիայի համազգային ձգտումների։ Կոմունան սովորեցրեց յեվրոպական պրոլետարիատին կոնկրետ դնել սոցիալիստական հեղափոխության խնդիրները» (Ցերկեր, հատոր XII, եջ 163, «Կոմունայի դասերը» հոդվածը)։

67։ Գերմանական սոցիալ–դեմոկրատական կուսակցության Երֆուրտյան ծրագիրը ընդունվեց այդ կուսակցության համագումարում Երֆուրտ քաղաքում 1891 թվին։ Նրա նախագծի հեղինակն ու խմբագիրն եր Կաուցկին։ Նկատողությունները այդ նախագծի մասին, վորոնց մասին խոսում է Լենինը, ավել եր Ենգելսը իր նամակի մեջ Կաուցկուն 1891 թ. հունիսի 16–ին, բայց հրապարակվեցին նրանք միայն տասը տարուց հետո, 1901 թ., գերմանական սոցիալ–դեմոկրատական ծրագրի նախագծի քննադատության առթիվ» վերնագրով։ Այդ նկատողությունների մեջ Ենգելսը, մասնանչելով դեմոկրատական հանրապետության նշանակությունը պրոլետարիատի պայքարի համար հանուն իր դիկտատուրայի, ի միջի այլոց ասում եր՝ — «Ճիշտ է, արևնքը, ըստ յերևույթին, չի թույլ տալիս ծրագրի մեջ բացահայտորեն առաջադրել հանրապետության պահանջ, թեև դա թույլատրելի եր նույնիսկ Ֆրանսիայում Լուի–Ֆիլիպպի ժամանակ, ինչպես և այժմ Իտալիայում։ Բայց ինքն այդ փաստը, վոր Գերմանիայում յերբեք չեյին համարձակվում բացահայտորեն առաջադրել հանրապետական կուսակցական ծրագրեր, ցույց է տալիս, թե վորքան մեծ է այն մոլորությունը, թե այնտեղ կարելի է բարեհաճությամբ հանրապետության սահմանել, և վոչ միայն հանդուրժողի խաղաղ ճանապարհով հանրապետության սահմանել, այլ և կոմունիստական հասարակակարգ։ Բայց, ինչ էլ վոր լինի, հանրապետ. կողքով կարելի է ճամփան գնալ, ապա դա ամբողջ ճաղաճական չատ իմ հայացքի, կարելի է և պետք է մտցնել, ապա դա ամբողջ հաշվառությունը ժողովրդական ներկայացուցչության ձեռքում կենտրոնացնելու պահանջն է։ Ցեվ դա առայժմ բավական կլիներ, յեթե չի կարելի ավելի հեռուն անցնել»։

68։ Լենինը այստեղ նկատի ունի բանավեճը ե։ Բերնշտեյնի և կ. Կաուցկու մեջ XIX դարի 90–ական թվականների վերջերին։ «Սոցիալիզմի նախագրյալների» մասին իր տեսահոդվածների մեջ ե։ Բերնշտեյնը պնդում եր, թե սոցիալիզմի հաղթանակի համար չեն հասունացել վոչ տնտեսական և վոչ էլ քաղաքական նախադրյալները և վոր այդ պատճառով «սոցիալ–դեմոկրատիան չի կարող ձգտել քաղաքական իշխանության և անորոշ յերկար ժամանակ պետք է ձևավորի «ողովրդական կուսակցություն»։

Կաուցկին, պատասխանելով Բերնշտեյնին, իր «Բերնշտեյնը և սոց.–դեմ. ծրագիրը» գրքի հատուկ գլխում քննում եր այն հարցը, թե «կհամարձակվե՞նք, արդյոք, հաղթելու» և պնդում եր՝ — «Այն կուսակցությունը, վոր ուզում է պատրաստ լինել, պետք է պայքարի, իսկ պայքարել նշանակում է հաղթանակի ձգտել։ Իսկ նա, ով ձգտում է հաղթանակի, միշտ պետք է հաշվի առնի հաղթանակը ամրացնելու հնարավորությունը։ Ցեվ այդպես, յեթե մենք կամենում ենք ապահովել մեզ իշխանությունը վաղաժամ մեր ձեռքը ընկնելուց, այն ժամանակ մեզ այլ բան չի մնում անելու, քան պահել քնելու» (տես Կաուցկու հիշյալ գրքի ռուսերեն թարգմանությունը, Պետհրատի հրատ., 1923 թ. «Մարքսիզմի քննադատության առթիվ — Շակարերնշտեյն» վերնագրով, եջ 292)։ Այդպիսով, Կաուցկին, վորը այն ժամանակ դեռևս մարքսիստ եր, կուսակցության պարտականությունն եր հաշվում «իշխանության ձգտել», «համարձակվել հաղթել», չվախենալով նրանից, վոր իշխանությունը պրոլետարիատի և նրա կուսակցության «ձեռքը կրնկնի», իբր թե, վաղաժամ։

69։ Լենինը նկատի ունի Կ. Կաուցկու «Փաստաթուղթ ռուսական սոցիալ–դեմոկրատիայի մեջ» հոդվածը, վոր տպված եր «Искра»–ի 1905 թ. 28 (15) հունվարի

Նիսե № 102–ում: Այդ հոդվածի մեջ կաուցկին, ի միջի այլոց, գրում էր՝ — «...Ոսաբազդի դիտողը պետք է չատ աչքատանք թափել, վորպեսզի դանե վորևե տարբերություն յերկու ֆրակցիաների մեջև: Ներկա մոմենտին նրանց բաժանող գլխավոր հարցը կայանում է նրանում, թե, արդյոք, կուսակցությանը պետք է թե չպետք է մասնակցել ապագա հեղափոխական կառավարության մեջ: Բայց այդ դեռ չսպանված արջի մորթու բաժանումը կարելի յե, իհարկե, ամենահանգիստ կերպով քննել միանձնական կուսակցության ներսում, քան վորում ինքը վեճը ծնում է միանդամայն անտարակա, մինչև վոր վերնիշ հայտնի չե այն մասին, թե ինչ է ներկայացնելու իրենից այն հեղափոխական կառավարությունը, վորի մեջ մենք պետք է մասնակցենք»:

70· Լենինը նկատի ունի Կրիչևսկու «Սկզբունքներ, տակտիկա, պայքար» հոդվածը «Рабочее Дело»-ի № 10–ում, վորը ուղղված եր Լենինի և հին «Искра»-ի տակտիկական հայացքների դեմ:

71· Նոր-իսկրայական «դեմոսովային կամպանիայի պլանի» մասին մանրամասնորեն տես «Վեցհատորյակ»-ի I հատորում Լենինի «Զեմսովային կամպանիան և «Искра»-ի պլանը» հոդվածը:

72· Այս միտքը Լենինը մանրամասնորեն զարգացնում է իր «Ի՞նչ անել» աշխատության III գլխի դ) բաժնում (տես «Վեցհատորյակ»-ի I հատ.):

73· Լենինի այս թեզիսները, վոր նա գրել է 1905 թ. վերջին կամ 1906 թ. սկզբին, առաջին անգամ հրապարակել է Լենինի Ինստիտուտը 1926 թ. V «Լենինյան ժողովածու»-ի մեջ: «Հեղափոխության ետապները, ուղղությունը և հեռանկարները» վերնագիրը տվել է ժողովածվի խմբագրությունը (Լենինի ձեռագրի մեջ վերնագիր չկա): Այդ թեզիսների հատուկ արժեքը նրանում է, վոր նրանք հեղափոխության մինչ 1905 թ. վերջը անցած ետապների կարճ ակնարկից հետո նկարագրում են նրա հնարավոր հետագա զարգացումը ցարիզմին լրիվ հաղթելու դեպքում: Այդ հարցը Լենինը չոշափում է 1905 թ. իր մի շարք աշխատություններ մեջ: Ընթերցողը կգտնի համապատասխան տեղեր Լենինի ներկա դրքում նախորդող յերկու աշխատությունների մեջ 31—32, 34—35, 88—89, 98 եջերում: «Սոց.-դեմ. յերկու տակտիկաները դեմոկրատական հեղափոխության մեջ» բրոշյուրի այստեղ բաց թողնված «Վերջաբան»-ի մեջ Լենինը նույնպես չոշափում է 1905 թ. հեղափոխության հնարավոր հեռանկարները: Նա գրում է այն տեղ՝ — «Այժմյան հեղափոխության լրիվ հաղթանակը կլինի դեմոկրատական հեղաչրջման վերջը և սոցիալիստական հեղաչրջման համար վճռական պայքարի սկիզբը: Ժամանակակից գյուղացիության պահանջների իրականացումը, ռեակցիայի լրիվ խորտակումը, դեմոկրատիան հանրապետության նվաճումը կլինեն բուրժուազիայի և նույն իսկ մանր բուրժուազիայի հեղափոխականության լրիվ վախճանը, — կլինի պրոլետարիատի իսկական պայքարի սկիզբը՝ սոցիալիզմի համար: Վորքան ավելի լրիվ լինի դեմոկրատական հեղաչրջումը, այնքան ավելի չուտ, ավելի լայն, ավելի մաքուր, ավելի վճռականորեն կծավալվի այդ նոր պայքարը: «Դեմոկրատական» դիկտատուրայի լոզունգը արդեն իսկ արտահայտում է այժմյան հեղափոխության պատմականորեն-սահմանափակ բնույթը և նոր պայքարի անհրաժեշտությունը նոր կարգերի հողի վրա բանվոր դասակարգի լրիվ պատրաստման համար ամեն տեսակի ճնշումից և ամեն տեսակի չահագործումից: Այդ խոսքերով՝ — յերբ դեմոկրատական բուրժուազիան կամ մանր բուրժուազիան բաձրանա ելի մեկ ասպիճանով, յերբ փաստ կլինեն վոչ միայն հեղափոխությունը, այլ հեղափոխության լրիվ հաղթանակը, — այն ժամանակ

մենք «վիսխարինենք» (մի դուցե, ապագա նոր մարտնիշների սոսկալի ճիչերի պայմաններում) դեմոկրատական դիկտատուրայի լոզունգը պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրայի, այսինքն լրիվ սոցիալիստական հեղաչրջման լոզունգով» (Յերկեր, հատոր VIII, եջ 118—119): «Սոցիալ-դեմոկրատիայի վերբերմունքը դեպի գյուղացիական չարժումը» հոդվածի մեջ (1905 թ. սեպտեմբեր) Լենինը, չշափելով նույն հարցը, ասում է՝ — «...դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն կսկսենք անցնել... սոցիալիստական հեղափոխության: Մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության» (Յերկեր, հատ. VIII, եջ 186, ընդգծումը մերն ե): Լենինի ավյալ թեզիսների հենց 4, 5 և 6 կետերը նկարագրում են այդ «անընդհատ հեղափոխությունը»: Թեզիսները չատ տեղ

խութ յան եւտապները, ուղղութ յունը և հեռանկարները»), համադրված Լենինի մյուս աշխատութ յունների վերաբ ման ված տեղերի հետ, կարող են լավագույն ծառայել Տրոցկու այդ պնդումների ստահոդութ յան:

Ինքը Տրոցկին «1905 թ.» գրքի առաջաբանում 1922 թ. (եջ 4—5) այսպես է ներկայացնում իր պերմանենտ հեղափոխութ յան թեորիայի ելութ յունը. «Հենց 1905 թ. հունվարի 22 (9)-ի և հոկտեմբերյան գործադուլի միջև ընկած ժամանակաշրջանում կազմվեցին հեղինակի այն հայացքները հեղափոխական զարգացման բնույթի վերաբերմամբ, որոնք ստացան «պերմանենտ հեղափոխութ յան» թեորիայի անունը: Այդ դժվար անունը այն միտքն է արտահայտում, որ ռուսական հեղափոխութ յունը, որի առաջ անմիջականորեն բուրժուական նպատակները են կանգնած, չկիսի կարողանա, սակայն, կանգ առնել նրանց վրա: Հեղափոխութ յունը չկիսի կարողանա լուծել իր մոտավոր բուրժուական խնդիրները այլ կերպ, քան իշխանութ յան դլուխը դնելով պրոլետարիատին: Իսկ այս վերջինը, իր ձեռքը վերցնելով իշխանութ յունը, չկիսի կարողանա սահմանափակել իրեն հեղափոխութ յան բուրժուական չրջանակներով: Ընդհակառակը, հենց իր հաղթանակը ապահովելու համար, պրոլետարական ավանդարդին հարկավոր կլինի առաջին իսկ չրջանից խորը խուժումներ կատարել վոչ միայն ֆեոդալական, այլ և բուրժուական սեփականութ յան մեջ: Ըստ վորում նա թշնամական ընդհարումներ կունենա վոչ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, որոնք աջակցում եին նրան նրա հեղափոխական պայքարի առաջին չրջանում, այլ և դյուղացիութ յան լայն մասսաների հետ, որոնց աղնութ յամբ նա իշխանութ յան եր հասել: Հակասութ յունները բանվորական կառավարութ յան դրութ յան մեջ յուտացնող կերկրում, դյուղացիական բնակչութ յան ճնշող մեծամասնութ յամբ, կարող են լուծում ստանալ միայն միջազգային մասշտաբով, պրոլետարիատի համաչխարհային հեղափոխութ յան ասպարեզի վրա: Պայթեցնելով, պատմական անհրաժեշտութ յան բերումով, ռուսական հեղափոխութ յան սահմանափակ բուրժուական–դեմոկրատական չրջանակները, հաղթական պրոլետարիատը հարկադրված կլինի պայթեցնելու նրա ազգային–պետական չրջանակները, ամեն գնով, չպարտավոր կլինի դիմադրությունն ճղռելու, վորպեսզի ռուսական հեղափոխութ յունը դառնա համաչխարհային հեղափոխութ յան նախերգանք»:

Այսպես չարահյուսելով «պերմանենտ հեղափոխութ յան» իր թեորիան, Տրոցկին ծածկեց նրա մեջ յերեք շատ կարևոր մոմենտներ, որոնք անհրաժեշտ է վերականգնել, մանավանդ վոր նրանցից յերկուսը նա այժմ էլ ձգտում է մթագնել, չարահյուսելով իր թեորիան իր արտասահմանյան «Իմ կյանքը» և «Պերմանենտ հեղափոխութ յունը» գրքերում:

1) Ցերը Տրոցկին ասում է, վոր ըստ իր թեորիայի պրոլետարիատը հասնում է իշխանութ յան դյուղացիութ յան լայն մասսաների «աջակցութ յամբ», նա ծածկում է, թե ինչ եր հասկանում նա 1905—1906 թ. թ. այդ «աջակցութ յան» տակ: Վոչ մի տեղ, իր վոչ մի հոդվածում Տրոցկին չի դիտում բուրժուական–դեմոկրատական հեղափոխութ յունը Ռուսաստանում ըստ Լենինյան տեսակետի, վորպես դյուղաց. հեղափոխութ յուն (տես «Վեց հատ.» I հ. 173—179 եջերը և այս գրքի 25-րդ ծան.): Իրան, դյուղացիութ յան, իր հերթին, նա ընդունում է, վորպես «անհագմահակերպ, տարերային» ուժ: Այդ դեռ քիչ է. նրա համար դյուղացիական չարժումը հեղափոխական է լոկ այն չափով, վոր չափով դյուղացիութ յունը քաղաքականորեն անդիտակից է, վորչափ նա իրեն մխիթարում է «իլյուզիաներով», այսինքն խարուսիկ հույսերով հեղափոխութ յան վրա.... «...Մինչեվոր, — ասում եր Տրոցկին 1906 թ. — դյուղացիութ յունը չհրաժարվի իր իլյուզիաներից, նա չի կարող կարդերի նեցուկ դառնալ»: «Բայց, — չարունակում է նա, — դյուղի տարերական պետքերը այնքան մեծ են, ագրարային զարգացման հակասութ յունները այնքան խոր են, գյուղացիութ յան իլյուզիաները այնքան ահագին են, վոր գյուղի հեղափոխական յեռը պիտի տևի անորոշ յերկար ժամանակ» (Տրոցկի, Ցերկեր, հատ II, մաս 1, եջ 441, «Հեղափոխութ յունը և իր ուժերը» հոդվածը, ընդգծումը այստեղ և ամենուրեք հեղինակից մերն է): Այդ իսկ պատճառով պրոլետարիատի և դյուղացիութ յան փոխհարաբերութ յունները ցարիզմի դեմ մղվող պայքարում Տրոցկին արտահայտում է լոկ այսպիսի ֆորմուլաներով՝ — «Հեղափոխական տարերքը հանձին գյուղի պետք է մանի իր իրավունքների մեջ, վորպեսզի կազմակերպված հեղափոխութ յունը հանձին պրոլետարիատի կարողանա վճռական հարված հասցնել թշնամուն» (նույն տեղ, եջ 446). կամ՝ — «Չենվելով գյուղացիական տարերքի վրա, ղեկավարելով նրան, պրոլետարիատը վոչ միայն վերջին հաղթական հարվածը կհասցնեն ռեակցիային, այլ և կկարողանա ամրացնել հեղափոխութ յան հաղթանակը» (նույն տեղ, եջ 448): Ավելի ևս վայլուն կերպով արտահայտվել է այդ տրոցկիստական վերաբերմունքը դեպի դյուղացիութ յունը «Հանրագումարները և հեռանկարները» հոդվածի մեջ, վորը նշում է ինքը Տրոցկին, վորպես իր հիմնական աշխատութ յունը, վորի մեջ 1906 թ. չարահյուսված և պերմանենտ հեղափոխութ յան իր թեորիան: Այդտեղ նա այսպես է ասում դյուղացիութ յան աջակցութ յան մասին պրոլետարիատին՝ իշխանութ յան նվաճման գործում՝ — «Ցեթե վորոշակի կազմված բուրժուական–լիբերալիստական տրադիցիաների և հակապրոլետարական նախապաշարմունքների բացակայութ յունը դյուղացիութ յան և ինտելիգենցիայի մոտ կոդնի եվ պրոլետարիատին իշխանութ յան դլուխն անցնելու, ապա, մյուս կողմից, պետք է նկատի առնել, վոր նախապաշարմունքների այդ բացակայութ յունը հենվում է վոչ թե բաղաձական գիտակցութ յան վրա, այլ բաղաձական բարբարոսութ յան վրա, սոցիալական անձևակերպութ յան վրա, պրիմիտիվութ յան, կամազրկութ յան վրա» («Հանրագումարներ և հեռանկարներ», 1919 թ. հրատ., եջ 45): Այսպես է, ըստ Տրոցկու տեսակետի, այն դյուղացիական նեցուկը, վորի «աջակցութ յամբ» պրոլետարիատը իշխանութ յան դլուխն է անցնում:

2) Տրոցկին, չարահյուսելով իր «Թեորիան» «1905» գրքի առաջաբանում, ասում է, վոր պրոլետարիատը, իշխանութ յան դլուխ անցնելով, պարտավոր կլինի դուրս դալու բուրժուական հեղափոխութ յան չրջանակներից, խուժելով բուրժուական «սեփականութ յան» մեջ, բայց նա լուութ յան է մատնում, վոր այնուամենայնիվ ըստ նրա թեորիայի (արծարծած 1906 թ. «Հանրագումարներ և հեռանկարներ»-ի մեջ) պրոլետարիատը մի անորոշ ժամանակաշրջան մնում է բուրժուական հեղափոխութ յան չրջանակներում և իրականացնում է դեմոկրատական դիկտատուրան: Տրոցկին դրում եր. «Պրոլետարիատի տերության» վոչ միայն նշանակելու յե դեմոկրատական հավասարութ յուն, ազատ ինքնավարութ յուն, տուրքերի լծի ամրողջ ծանրութ յան փոխանցումը ունևոր դասակարգերի վրա, մշտական զորաբանակի լուծումը զինված ժողովրդի մեջ, յեկեղեցու պարտադիր դանձումների վոչնչացումը, այլ և հողային հարաբերութ յունների մեջ դյուղացիների կատարած բոլոր հեղափոխական գրավումների ճանաչումը»: Սրանք են պրոլետարիատի միջոցառումները, վոր նա անցկացնում է իր իշխա-

նութեան «առաջին», և այն էլ «ամենադժվարին», ինչպես ասում է Տրոցկին, չըջանում: Ըստ վորում «ժողովրդական ներկայացուցչությունը, պրոլետարիատի դեկավարությամբ հրավիրված, վորը ոգտվում է դյուրացիության աջակցությամբ, կլինի վոչ այլ ինչ, քան պրոլետարիատի տիրապետության դեմոկրատական ձևավորումը» («Հանրագումարներ և հեռանկարներ», հրատարակություն 1919 թվ. եջ 42): Տրոցկին անվանում է այդ «բանվորական դեմոկրատիա» և ասում է, վոր «ռուս դյուրացիությունը» այդ «առաջին, ամենադժվարին չըջանի» ընթացքում կլինի «համենայն դեպս վոչ պակաս չհաղթդրված» «պրոլետարական ռեժիմին («բանվորական դեմոկրատիային») աջակցելում, քան ֆրանսիական դյուրացիությունը չհաղթդրված եր Նապոլեոն Բոնապարտի դեմոկրատական ռեժիմին աջակցելու մեջ» (1789 — 1793 ք. թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո): Այս բոլորը կարծես բոլորովին չի նմանում պրոլետարիատի համար միակ հնարավոր դիկտատուրային—սոցիալիստական դիկտատուրային: 1907 թ., կուսակցության V Լոնդոնի համագումարում, բուրժուական կուսակցություններին վերաբերվելու հարցի մասին արտասանած իր ճառի մեջ, Տրոցկին, ոգտվելով «պերմանենտ հեղափոխության» մասին իր թեորիայի մասին խոսելու առիթից, արդեն ուղղակի ասում եր. «Պրոլետարիատը, մեր քաղաքների այդ միակ հեղափոխական դեմոկրատիան, պետք է նեցուկ դնի դյուրացիական մասսաների մեջ և իշխանության գլուխ անցնի, — յերբ միայն հեղափոխությանը վիճակված է հաղթել: կառավարությունը, հենվելով անմիջականորեն պրոլետարիատի վրա և նրա միջոցով հեղափոխական գյուղացիության վրա, դեռ չի նշանակում սոցիալիստական դիկտատուրա: Ցես այժմ չեմ չոշափում պրոլետարական կառավարության հետագա հեռանկարների հարցը» («Կուսակցության V համագումարը», հրատ. «Մոսկովսկիյ Ռաբոչիյ»-ի, 1923 թ., եջ 182): Ներկայումս, 1930 թ. «Պերմանենտ հեղափոխություն» դրքի մեջ Տրոցկին ինքը վերականգնում է պերմանենտ հեղափոխության իր թեորիայի այդ գիծը և, համեմատելով այդ թեորիային հարմարեցնել մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը, հայտարարում է այն բուրժուական և հավատացնում է, թե մեր յերկրի պրոլետարիատը նույնպես սկզբում իրագործում եր վոչ թե սոցիալիստական, այլ դեմոկրատական դիկտատուրա, և միայն 8 — 10 ամսից նա «սկսեց վերաճել սոցիալիստականի»: 8 — 10 ամիս — դա 1917 թ պայմաններում, իսկ 1905 թ., մենշևիկական «Նաչալո» լրագրի № 10-ում Տրոցկին գրում եր «ամբողջ պատմական եպոխայի» հնարավորության մասին, վորի ընթացքում պրոլետարիատը «դեմոկրատիայի հիմնական խնդիրների» իրականացումից, այսինքն դեմոկրատական դիկտատուրայից կանցնի սոցիալիստական խնդիրների իրագործմանը:

3) «1905» դրքի առաջաբանում Տրոցկին լռության է տալիս, վոր ըստ իր թեորիայի պրոլետարիատը այնպես էլ ի վիճակի չպիտի լինի անցնելու այդ սոցիալիստական խնդիրների իրագործմանը, այսինքն սոցիալիստական դիկտատուրայի, յեթե չհասնի «յեվրոպական պրոլետարիատի պետական ոգնությունը»: Իր «Հանրագումարներ և հեռանկարներ»-ի մեջ (1906 թ.) նա այդ մասին այսպես եր գրում՝ — «Առանց յեվրոպական պրոլետարիատի ուղղակի պետական ոգնության Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարողանա պահել իշխանությունը և իր ժամանակավոր տիրապետությունը դարձնել յերկարատև սոցիալիստական դիկտատուրա: Դրանում չի կարելի կասկածել և վոչ մի րոպե» (եջ 71, 1919 թ. հրատ.): Իսկ դրա պատճառը հենց այն է, ինչի մասին

նա խոսում է «1905» դրքի առաջաբանում: Անցումը սոցիալիստական դիկտատուրայի պետք եր, ըստ Տրոցկու, անխուսափելիորեն առաջացներ դյուրացիության ընդդիմադրությունը: Դյուրացիության հենց նույն «քաղաքական բարբարոսությունը», անձևակերպությունը, պրիմիտիվությունը և կամազրկությունը, վորոնք, ըստ Տրոցկու, պետք է ոգնեին պրոլետարիատին իշխանության գլուխ անցնելու, կդառնան նրա դեմ — յեվրոպական պրոլետարիատի պետական ոգնության բացակայության պայմաններում, այսինքն առանց Արևմուտքում արդեն նվաճած պրոլետարիատի դիկտատուրայի, և «իր սեփական ուժերին թողնված, Ռուսաստանի բանվոր դասակարգը անխուսափելիորեն կճմլվի հակահեղափոխության կղմից այն մոմենտին, յերբ դյուրացիությունը յերես կդարձնի նրանից» («Հանրագումարներ և հեռանկարներ», եջ 80):

Սրանք են այն յերեք մոմենտները, վորոնցով պետք է լրացվի Տրոցկու պերմանենտ հեղափոխության իր թեորիայի չարահյուսությունը, վոր նա տվել է 1922 թ. «1905» դրքի առաջաբանում: Միանդամայն ակներև է, վոր այդ, ինչպես Լենինն եր հեգնորեն անվանում, «որիգինալ թեորիայի» և անընդհատ հեղափոխության այն ուղիյի միջև, վորը պատկերացված է Լենինի տվյալ թեզիսներում, հակառակ Տրոցկու հանդուգն պնդումներին, չկա վոչինչ ընդհանուր:

1) Ըստ Լենինի պրոլետարիատը բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ Ռուսաստանում իշխանության է անցնում վոչ մենակ, այլ ամբողջ դյուրացիության հետ միասին, և վոչ մենակ, այլ նրա հետ միասին իրագործելով հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան ցարիզմին հաղթելուց հետո:

2) Ըստ Լենինի, պրոլետարիատը բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ գնում է դյուրացիության հետ մեղմեղ դեպի դիկտատուրա, հենվելով վոչ թե «քաղաքական բարբարոսության» և վոչ թե «դյուրացիության լպրպուլիա» վրա, այլ այնպիսի դեկավարության վրա իր այդ դաշնակցի նկատմամբ, վորը, ընդհակառակը, տալիս է «քաղաքական գիտակցականության նրա (այսինքն դյուրացիության. ՀՄԲ.) պայքարին կալվածատիրական հողատիրության և ճորատատիրական պետության դեմ» (Լերկեր, հատ. X, եջ 385):

3) Ըստ Լենինի, դեպի պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրան տանող անընդհատ հեղափոխության յելակետն է հանդիսանում հենց պրոլետարիատի և դյուրացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան: Այդպես եյին ըստ Լենինի 1905 — 1906 թ. թ., այդպես եր ըստ Լենինի և 1917 թ., յերբ նա ապրելին դրեց բանվոր դասակարգի առաջ դեպի պրոլետարական դիկտատուրան դնալու խնդիրը նրանից հետո, յերբ փետրվարյան հեղափոխությունը «յուրատեսակ» իրագործեց պրոլետարիատի և դյուրացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան հանձինս Խորհուրդների և այն հյուսեց բուրժուազիայի դիկտատուրայի հետ հանձինս ժամանակավոր կառավարության (տես «Ցերկվհանության մասին» հոդվածը «Վեց հատորյակ»-ի III հատորում):

4) Ըստ Լենինի, պրոլետարիատի դեմոկրատական դիկտատուրան, թեկուզ և ժամանակավոր, անհեթեթություն է, վորովհետև պրոլետարական դիկտատուրան հենց սկզբից սոցիալիստական դիկտատուրա է հանդիսանում: Այդպիսին եր նա, հակառակ Տրոցկուն, միանդամից, իշխանությունը 1917 թ. Հոկտեմբերին պրոլետարիատի կողմից գրավվելուց հետո, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխություն եր և թեպետ բուրժուա-

կան–դեմոկրատական հեղափոխության հարցերը, մանավանդ ճորտատիրության մնացորդների վոչնչացումը, խոշորագույն դեր էին խաղում նրա մեջ, նա այդ հարցերը լուծեց լոկ անցողակի, կողքովն անցնելիս, վորպես «մեր դլխավոր և հնական, պրոլետարական — հեղափոխական, սոցիալիստական աշխատանքի ժողովնակի արտադրանք» (Լենին, «Վեց հատորյակ»–ի III հատ., «Հոկտեմբերյան հեղափոխության չորրորդ տարեդարձի առթիվ» հոդվածը):

5) Ըստ Լենինի, խոսել պրոլետարիատի դիկտատուրայի մասին բուրժուական–դեմոկրատական հեղափոխության մեջ, ինչպես խոսում էր այդ մասին Տրոցկին, նշանակում է անհուսալիորեն չփոթել բուրժուական–դեմոկրատական հեղաշրջումը սոցիալիստականի հետ, իրականում մոռանալ հեղափոխության բուրժուական բնույթի մասին, և չունենալ պարզ պատկերացում, թե ինչպես բուրժուական (տվյալ դեպքում բուրժուական–դյուղացիական) հեղափոխությունը կարող է վերածել պրոլետարականի: Ճիշտ Լենինը ասում էր Տրոցկու մասին իր «պերմանենտ հեղափոխության», վոր նրա «հիմնական սխալն է»... «հեղափոխության բուրժուական բնույթի զանցառումը, այդ հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցման հարցում պարզ մտքի բացակայությունը» (Ճերկեր, հատ. XIV, էջ 44 «Պրոլետարիատի պայքարի նպատակը մեր հեղափոխության մեջ» հոդվածը):

6) Ըստ Տրոցկու, պրոլետարիատը «դեմոկրատիայի հիմնական խնդիրների» լուծումից «դեպի սոցիալիստական դիկտատուրան գնում է, Քողնված յերկրի ներսում «իր սեփական ուժերին», «քննամական ընդհարումներ» ունենալով ամբողջ դյուղացիության հետ: Ըստ Լենինի — պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական – դեմոկրատական դիկտատուրայից դեպի իր սոցիալիստական դիկտատուրան բանվոր դասակարգը գնում է, միացնելով իրեն դյուղական չքավորությունը և չեզոքացնելով միջակին: Այդ արտացոլված է և տվյալ քեղիսների մեջ: Ցարիզմի տապալումից հետո հակահեղափոխության դեմ տարվող պայքարի հենց սկզբից պրոլետարիատի կողմն է դյուղական չքավորության հանրությունը (5–րդ քեղիս): Ճիշ մինչդեռ այդ պայքարի սկզբին նրա դեմ է գնում միջակների «դլալի» մասը (5–րդ քեղիս), պայքարի վերջին միջակ գյուղացությունը քննամու կողմն է լոկ «մասամբ» (6–րդ քեղիս), այսինքն՝ «դլալի մասը» արդեն հեռանում է քննամական դիրքերից:

7) Ըստ Լենինի, պրոլետարիատը հեղափոխական–դեմոկրատական դիկտատուրայից (իր և դյուղացիության) սոցիալիստական դիկտատուրայի (միայն պրոլետարիատի) անցնելու համար, հետևաբար և սոցիալիստական բարեփոխությունների անցնելու համար կարիք ունի արևմտա–յեվրոպական սոցիալիստական պրոլետարիատի ոգնությանը (առանց դրան, — ասված է 6–րդ քեղիսում,— նրա պայքարը կլիներ «դրեթե անհուսալի»), բայց Լենինը ամենևին 1905 — 1906 թ. թ. պայմաններում ևս չի ասում, վոր հարկավոր է անպայման արդեն հաղթած պրոլետարիատի «պետական ոգնություն»: Նա խոսում է միայն Արևմուտքի պայքարող պրոլետարիատի ոգնության անհրաժեշտության մասին, նրա հետ միասին պայքարելու մասին հանուն սոցիալիստական հեղաշրջման Ցեվրոպայում, խոսում է միաժամանակ սոցիալիստական հեղափոխության մասին Ռուսաստանում և Արևմուտքում, վորպես հնարավոր և ցանկալի հեռանկարի մասին, բայց չի խոսում վոչ այս քեղիսներում, վոչ էլ ընդհանրապես վորևե տեղ, թե պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում անխուսափելիորեն դատապարտված կլիներ կործանման ներքին քննամական ուժերից և սոցիալիստական

քարիփոխությունները անհնարին կլինեին, յեթե մեր յերկրի պրոլետարիատը ավելի առաջ հաղթեր, իսկ Արևմուտքում այդ հաղթանակը հապաղեր: Ընդհակառակը, դեռ այս քեղիսներից առաջ, «Սոցիալ–դեմոկրատիան և ժամանակավոր հեղափոխական կառավարությունը» հոդվածի մեջ Լենինը գրում է (տես ներկա գրքի էջ 36), վոր «քաղաքային և դյուղական չքավորության» աջակցության պայմանում պրոլետարիատի դիկտատուրան կարող էր լինել հաստատուն: «Իհարկե, վոչ անպայման, այլ հարաբերականորեն», — ավելացնում է նա այնտեղ: Բայց, առաջինը, «քաղաքային և դյուղական չքավորության» աջակցությանը ավելանում է, ըստ Լենինի, միջակ գյուղացու նախ չեզոքացումը, իսկ հետո դաշինքը, միջակի, վորի վրա, հակառակ Տրոցկուն, նա միշտ նայում էր վորպես մի սոցիալական խմբի կամ դասակարգի, վորը որյեկտիվորեն չահագրգռված է սոցիալիզմի մեջ և ընդունակ է վերջ ի վերջո հաստատորեն գարձնել յերկրը դեպի հաղթական պրոլետարիատը («զոդում»): Ցեվ, յերկրորդ, պրոլետարիատի դիկտատուրայի «հարաբերական» հաստատությունը Լենինի համար այն հաստատությունն է, վորը կախում ունի ուժերի հարաբերությունից յերկրի ներսում, իշխանության անցած պրոլետարիատի ուժից և ընդունակությունից — տանելու իր յեռևից կիսապրոլետարական և վոչ պրոլետարական աշխատավոր մասսաներին:

Ահա հենց պրոլետարիատի իր յեռևից տանելու այդ ուժն ու ընդունակությունը և կիսապրոլետարական (չքավորներ) և վոչ–պրոլետարական (միջակներ) դյուղացիական աշխատավոր մասսաների պրոլետարիատի յեռևից գնալու ընդունակությունը պրոլետարիատի և նրա կուսակցության ուղիղ, խելացիորեն տարվող քաղաքականության պայմաններում, — պերմանենտ հեղափոխության թեորիան դուրս էր գցում և գցում է հաշվից: Ցեվ այդ դուրս գցման մեջ է տրոցկիզմի ամենաէական կողմերից մեկը: Այստեղ նա, ինչպես և իր հայացքների ամբողջ դումարի մեջ, իր արմատներով մենշևիզմի մեջ է գտնվում: Ցեվ հենց այդ արմատների վրա յե բռնում նրա պերմանենտ հեղափոխության թեորիան իր վերջնական յեղրակացությամբ — «առանց Արևմուտքի պրոլետարիատի պետական ոգնության» մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտումով, — և իր վերջնական քաղաքական հետևանքով — տրոցկիզմի հակահեղափոխության բանակը անցնելով:

Տրոցկու այժմյան պնդումները այն մասին, թե նրա այդ թեորիան «բոլոր վճռական պարագաներում զուգադիպվում էր լենինյանին» — լոկ առակ է յերեխաների համար, քաղաքական մանուկների համար, վորոնք անընդունակ են տարբերելու լենինիզմը՝ այն հուն տված մենշևիզմից, վորպիսին միշտ յեղել է տրոցկիզմը:

3К23
2-14

ՑԱՆԿ

Եջ

ՋԵԿՈՒՅՈՒՐ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԱՑԻՆ 3

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌՈՒԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

I. 22
II. 35
III. 30
IV. 32

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՐԿՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԵՋ

Առաջաբան 37
I. *Բաղաքական ամենակենսական հարցը* 40
II. *Ի՞նչ է տալիս մեզ ՌՍԴՌԿ III համագումարի բանաձևը ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին* 44
III. *Ի՞նչ է «հեղափոխության վճռական հաղթանակը ցարիզմի հանդեպ»* 50
IV. *Պրոլետարական կարգի լուծարքն ու հանրապետությունը* 56
V. *Ի՞նչպես պետք է «հեղափոխությունն առաջ շարժել»* 61
VI. *Վերեղից և պրոլետարիատին վտանգ սպառնում ձեռքերը կապած թողնել այն կռվում, որը նա մղելու չէ անհետևողական բուրժուազիայի դեմ.* 64
IX. *Ի՞նչ է նշանակում հեղափոխության ժամանակ լինել ծայրահեղ ոպոզիցիայի կուսակցություն* . . 77
X. *«Հեղափոխական կոմունանները» և պրոլետարիատը ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան* 81
XII. *Արդյոք կթուլանա դեմոկրատական հեղափոխության թափը, եթե բուրժուազիան նրանից չեր դարձնի* 89
XIII. *Ցեղրափակումն։ Արդյոք մենք կհամարձակվե՞նք հաղթել* 98

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 109

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 111

ՀՀ Ազգային գրադարան